

ՅՈՒՆԻԱՆ ԱՏԵՆԱԴՐՈՒԹԵԱՆ

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՔԱՅՈՒՄ 1880 ԱՆ

ՆԱԾ ՃԵ - 21 ՅՈՒՆԱՐ 1881

---

ԿՐԱ.Պ-Ի-Ր

ՀԵԴԱՆՈՒՐ ՕՐԻՆԱՑ

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

Ի ԿՐԹԱԿԱՆ ԽՈՇՀՐԴԱԿԱՆԵ

Ա. ԱԶԳՈՅԻՆ ԺՈՂՈՎԻ

---

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐՋԵԱՆ ԵԽ ԸՆԿԵՐ

Կ. Պոլիս Մերձան, Շինուալի-Լանտի խանի տակ թիւ 20

ՅԱԽԵԼՈՒԾ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1880 ԱՆԻ

ԴԻՍ մկ. - 24 ՅՈՒՆԿՈՐ 1881

ԹՐԱՊ-Դ-Ր

ԷՆԴԱՆՈՒՐ ՕՐԵՆՍՅ

## ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

Օսմանեան Պետութեան Հայոց Բնդհանուր  
Ժողովը

Նկատելով որ բարեխնամ Տէրութենէն շնորհ-  
եալ Ազգային Սահմանադրութեան հիմնական  
սկզբանց Գ. պարբերութիւնը Ազգին պարտակա-  
նութիւնը կը համարի «Մարդկութեան հարկաւոր  
եղած անհրաժեշտ գիտելեաց ուսումը ամեն առ-  
տիճանի թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ տղայոց հաւա-  
սարապէս ծաւալել».

Նկատելով Ազգային Վարչական կազմակեր-  
պութեան Օրէնքի 24 ո յօդուածի տրամադրու-  
թիւնները.

Նկատելով միանգամայն որ Ազգային կրթու-  
թեան կազմակերպութիւնն ու վարժարանաց վի-



ճակը ժամանակիս պահանջմանց չեն համապատասխաներ՝

Կը հաստատէ Ազգային կրթութեան հետեւալ Ընդհանուր Օրենքը։

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԹԱՅՈՒՄԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

#### ԾԱ. ԴԱՅ

**ՅՈՒՇԱԾ** 1. Թաղ մը կամ թաղի մը մէկ մասը (Յօդ. 24 ա.) կրնայ ծաղկոց մ'ունենալ՝ եթէ 3—6 տարեկան (Յօդ. 58 բ. եւ դ.) երկսեռ մանկանց թիւը առնուադն քսանի հասնի։

2. Մաղկոցը դպրոցին հետ մէկ յարկի տակ կրնայ ըլլալ, բայց պէտք է իր նողատակին յարմար զատ սրահ, զբոսավայր եւ ճեմիշներ ունենայ։

3. Աղքատիկ մանկունք ձրի կընդունուին եւ անոնց դասական պիտոյքը ձրի կը հողացուին. իսկ ունեւող ծնողը ըստ կարողութեան թոշակ կը վճարեն՝ զոր Հողաբարձուն կ'որոշէ (Յօդ. 48)։

4. Մաղկոցի ծախքերը՝ թաղային դպրոցի արկղին կը հոգացուին եւ անոր հասոյթը նոյն արկղին կը պատկանին (Յօդ. 38)։

5. ա. Մաղկոց կ'ընդունուին 3 տարեկանէն (Յը լրացուցած) մինչեւ 6 տարեկան մանկունք։

բ. Արտաքոյ կարգի բացառութիւնը կըլլան այն մանկանց համար՝ որք թէեւ արդէն դպրոցական տարիք ունին, բայց դեռ չեն կրնար դպրոց ընդունուիլ (Յօդ 58 բ. սլարը)։

6. ա. Մաղկոց ընդունուելու համար մանկունք

պէտք է ունենան ծննդեան, մկրտութեան եւ պատուաստի վկայականք։

բ. Տարափոխիկ հիւանդութիւն եւ մասնաւոր խընամքի կարօտ պակասութիւն ունեցող մանկունք չեն ընդունուիր։

7. Մանկանց ընդունելութիւնը որոշեալ ժամանակ չունի։

8. Մաղկոցի նպատակն է մանկանց մարմնական, բարոյական եւ մտաւոր ոյժերը դարդացնել եւ զանոնք կանոնաւոր աշխատութեան, ճշդութեան եւ կարգաւորութեան վարժեցնել։

9. Մաղկոցի դրաղմունքներն են՝

1. Մանկական աղօթքներ, վէպեր, ոտանաւորներ եւ երգեր, բերանացի աշխարհիկ պարզ լեզուաւ,
2. Մտաւոր հաշիւներ 4—10 թիւերու վրայ,
3. Ֆրէսկելեան դրութեամբ զանազան կրթութիւնք,
4. Մարմնամարզական խաղեր եւ շարժումներ,
5. Կարդալ գրելու սկզբունք ձայնական ոճով եւ իրագիտութեան հետ միացած, միայն բարձրագոյն խընթեակին, եթէ մանկանց դարդացման աստիճանը կը ներէ։

10. ա. Մաղկոցաց ընդհանուր ծրագիրն ու կըրթական միջոցները կեղրոնակոն կրթական ֆեսչութիւնը կը գծէ։

բ. Մաղկոց մը կրնայ իր մասնաւոր ծրագիրն ունենալ, բայց պէտք է կեղրոնական կամ Գաւառական կըրթական ֆեսչութենէն վաւերացեալ ըլլայ։

11. ա. Երկու ամիսն անգամմը եւ ի պահանջել հարկին աւելի յաճախ՝ Դպրոցի ֆեսչ-վարժապետն ու ծաղկոցի դաստիարակուհին խմբեակներու զբաղմանց բաշխումը կ'ընեն եւ ժամանակացոյցը կը շինեն։

բ. Այցելու տեսուչը (Յօդ. 358) միշտ կրնայ կարեւոր դատած փոփոխութիւնքն ընել զբաղմանց ցուցակին կամ ժամանակացոյցին մեջ՝ համաձայն Օրինաց եւ հաստատեալ ծրագրին։

12. ա. Մաղկոցի մանկունք իրենց տարիքին եւ զարդացման համեմատ խումբերու կը բաժնուին։

բ. Եթէ մանկանց թիւը 30 էն աւելի ըլլայ՝ օդնական դաստիարակուհի մը (Յօդ. 48) կաւելնայ, իսկ եթէ 60 ի հասնի՝ երկու սրահի կը բաժնուին եւ իւրա-

քանչիւր սրահի մանկանց թուոյն համեմատութեամբ  
սլաշտօնեայ կը կարգուի :

**13.** Սաղկոցի զբաղմունքը կը տեսէ առ առաւելին  
օրը 4 ժամ, բացի զբօսանաց ժամանակէն :

**14.** Սաղկոցք կունենան:

1. Տումար ընդունելութեան,
2. Ցուցակ զբաղմանց կամ ժամանակացոյց,
3. Ցուցակ բացակայութեանց,
4. Օրագրութիւն դաստիարակի կամ դաստիարա-  
կունոյ,
5. Տեսր դիտողութեանց,
6. Ցուցակ զոյից եւ կրթական առարկայից :

**15.** Սաղկոցի մանկանց կրթութիւնը դիսաւորա-  
պէս դաստիարակունոյ մը կը յանձնուի, իսկ երբ անկա-  
րելի ըլլայ ձեռնհաս դաստիարակունի զտնել՝ դաստիա-  
րակի մը :

**16.** ա. Սաղկոցաց դաստիարակները կամ դաստիա-  
րակունիները Հոգաբարձուք կը նորին Տեսուչ-վարժապե-  
տաց կամ վարժունեաց եւ Այցելու Տեսչաց կարծիքն  
առնելով (Յօդ. 185 թ.) :

բ. Նոյն եղանակաւ կը սահմանուի եւ անոնց ոռ-  
ճիկը (Յօդ. 189) :

**17.** Սաղկոցի դաստիարակունի կրնան ըլլալ ա-  
նոնք որ առնուազն 17 տարեկան են եւ սահմանեալ Ար-  
տօնագիրն ունին. իսկ դաստիարակ կը լան անոնք՝ որ նոյն  
Արտօնագիրն ունին եւ առնուազն 20 տարեկան են  
(Յօդ. 297 և 306 Ա.) :

**18.** ա. Սաղկոցի օդնական դաստիարակ կամ դաս-  
տիարակունի կրլան անոնք՝ որ ստորին դպրոցի մը մէջ  
օդնական աշակերտի կամ աշակերտունոյ շրջանը լրա-  
ցուցած եւ վկայական ստացած են (Յօդ. 238 և 246),  
բայց դեռ Օրինաց պահանջած տարիքը չունենալուն  
(Յօդ. 17) սահմանեալ Արտօնագիրը չեն առած :

բ. Սաղկոցի օդնական-դաստիարակունիք պէտք է  
առ նուազն 14 տարեկան, իսկ օդնական-դաստիարակը  
17 տարեկան ըլլան :

գ. 1 օդնականաց ընտրութիւնը կ'ընեն եւ ոռճիկը կը  
սահմանեն Հոգաբարձուք՝ Տեսուչ-վարժապետին եւ Դաս-

տիարակին կամ Դաստիարակունոյն կարծիքն առնելով  
(189 ա. եւ 190):


**19.** Սաղկոցը՝ Այցելու Տեսչին, թաղային դպրոցի  
Հոգաբարձուին եւ իրմէ կարդեալ Խնամակալունոյն եւ  
Տեսուչ-վարժապետին կամ վարժունոյն հսկողութեանը  
ներքեւ կը գտնուի :

**20.** Օրինաց միւս յօդուածները՝ որք սոյն Գլխոյ  
յօդուածոց մամնաւոր տրամադրութիւններովը չեն բարե-  
փոխած՝ Սաղկոցաց ալ կը վերաբերին :

— 454 —

## ԴԱՍԻԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԹԱՂԱՅԻՆ ԴՊՐՈՑՔ



### ԿՈՇՄՈՒԹԻԻՆ ԴՊՐՈՑՑԱԿԱՆ ԹՍ.ԴԻ

**21.** ա. Խւրաքանչիւր վարչական թաղ միանգա-  
մայն կրթական կամ դպրոցական թաղ կը կազմէ . բայց  
թաղ մը իր ընդարձակութեանը կամ բաղմամարդութեանը  
պատճառաւ կրնայ երկու կամ աւելի մասի բաժնուիլ եւ  
Խւրաքանչիւր մասը առանձին դպրոց ունենալ :

բ. Այդ բաժնումը կրնայ տեղի ունենալ թաղա-  
յին ժողովոյ՝ որոշմամբն ու ի Պոլիս կեղրոնական եւ ի  
Գաւառս Գաւառական կրթական Տեսչութեան հաւանու-  
թեամբը :

**22.** ա. Թաղի մը խւրաքանչիւր մասին դպրոցը  
կրնայ առանձին Սնտուկ ունենալ (Յօդ. 38), որուն հա-  
սոյթի աղբիւրները Թաղային ժողովը կ'որոշէ ու ի գա-  
ւառս Գաւառական եւ ի Պոլիս կեղրոնական կրթական  
Տեսչութիւնը կը վաւերացնէ :

բ. Խսկ թաղին կրթական Հաստատուն եկամուտը  
(Յօդ. 36) անբաժան կը մնայ մինչեւ որ թաղին բաժան-  
եալ մասերը ուրոյն անկախ թաղեր չի կազմեն Ազգային  
կեղրոնական Վարչութեան որոշմամբը, որ կորոշէ միան-  
գամայն Հաստատուն եկամուտին բաժանման եղանակը՝  
Գաւառական կամ Թաղային ժողովոյ կարծիքն առնելով :

**23.** ա. Փոքրիկ թաղ մը կրնայ ուրիշ թաղի մը

հետ միանալ՝ եթէ երկսեռ աշակերտաց թիւը 20 էն նուազ ըլլայ եւ միջոց չունենայ ուրոյն դպրոց հիմնելու :

բ. Այդ միացումը կրնայ տեղի ունենալ թաղային ժողովոց որոշմամբն ու ի Պօլիս կեղրոնական եւ ի Գաւառս Դաւառական կրթական Տեսչութեան հաւանութեամբը :

**24.** Միացեալ թաղերու Դպրոցական Հաստատուն նկամուտներն ուրոյն, իսկ Արկդը միացեալ կըլլար:



### ՊԱՐՏԻՔ ԵՒ ԻՐԱԻՈՒԹ ԹԱՂԻՆ

1. ՊԱՅՄԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑԻ,  
ԴՊՐՈՑԱՏԵՂԻՔ ԵՒ ԱՅԼ ՊԻՏՈՅՔ

**25.** ա. Ամէն թաղ նախ եւ առաջ պարտական է Ստորին դպրոց մը հիմնելու (յօդ. 67):

բ. Եթէ թաղ մը պէտք եղածին չափ հասոյթ ունի՝ պարտաւոր է Բարձրագոյն դպրոց հիմնելու (յօդ. 68):

գ. Թաղ մը այս պարտականութիւններէն ազատ է՝ եթէ բարեգործական վարժարանի մը միջոցաւ կը հոգացուի իր մանկուոյն կրթութիւնը՝ Օրինաց արամագրութեանց համաձայն :

**26.** ա. Իւրաքանչիւր թաղի թաղային ժողովը կորոշէ թաղին մէջ հիմնուելիք դպրոցին աստիճանը եւ կեղրոնական կամ Գաւառական կրթական տեսչութիւնը կը վաւերացնէ :

բ. Թաղային ժողով մը հիմնուելիք դպրոցի մասին իր ըրած որոշումը ներկայած ատեն պէտք է ներկայէ միանգամայն անոր Հաստատուն նկամութիւնը կը դպրոցական Արկդին վիճակն ու դպրոցին տարեկան պիտոնէն :

**27.** ա. Եթէ Պօլսոյ եւ իր արուարձաններուն մէջ թաղ մը միջոց ունենայ, բայց թաղ. ժողովը անփոյթ ըլլայ իր մանկուոյն կրթութիւնը հոգալու Օրինաց արամագրութեանցը համաձայն (յօդ. 25)՝ կեղրոնական կըրթական Տեսչութիւնը տարուան մը մէջ երեք ազդարարութիւն ընելէ՝ ետք՝ խնդիրը Ազգ. ժողովոյ կը ներկայէ, որ յետ քննութեան թաղային ժողովը կը լուծէ եւ կը

յանձնէ Վարչական Խորհրդին որ նոր ժողովոյ ընտրութիւն կատարել տայ ըստ օրինի։ Եթէ մինչեւ մէկ տարի դարձեալ Օրինաց սահմանած դպրոցը չի հիմնուի՝ զայն ալ կը լուծէ եւ արտօնութիւն կուտայ Վարչական Խորհրդոյ որ առժամանակեայ թաղային ժողով կազմէ կը թութեան բարեկամ անձերէ եւ հրահանգ տայ անոր թաղին միջոցներուն համեմատ դպրոց մը հիմնելու :

բ. Առժամանակեայ ժողովոյ պաշտօնը կը դադրի՝ երբ Օրինաց պահանջած դպրոցը հիմնուի :

գ. Եթէ նոյն դէպքը տեղի ունենայ, գաւառաց մէջ՝ Գաւառական կրթական Տեսչութիւնը նոյն եղանակաւ խնդիրը կը ներկայէ Գաւառական ժողովին, որ իր որոշումն ընելով կը տեղեկագրէ կեղրոնական Վարչութեան եւ անոր վճիռը ստանալէ ետք՝ կը յանձնէ զայն Գաւառական Վարչութեան ի գործադրութիւն :

**28.** ա. Այն թաղն որ Ստորին դպրոց չունի կամ թէեւ ունի բայց Օրինաց պահանջած վիճակին մէջ չէ՝ իրաւունք չունի Բարձնագոյն դպրոց հիմնելու :

բ. Եթէ Թաղային ժողով մը սոյն արամագրութեան հակառակ վարուի՝ նախընթաց յօդուածի՝ արամագրութեանց ներքեւ կիյնայ :

**29.** Եթէ թաղ մը անկարող է Ստորին կամ Բարձրագոյն դպրոց հիմնելու կամ անոր բոլոր ծախքն հոգալու՝ կեղրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութիւնը զայդ քննել եւ ստուգելէ ետք՝ փոյթ կը անոր կարելի եղած ձեռնտութիւնն ընելու :

**30.** ա. Իւրաքանչիւր թաղ պարտաւոր է կեղրոնական կրթական Տեսչութեան հարատակեալ հրահանգին համաձայն դպրոցի շէնք կառուցանել կամ դպրոցի համար յարմար տուն մը վարձել եւ անոր դրասեղաններն ու այլ կահերն հոգալ եւ կամ եղածները նոյն հրահանգ համաձայն վիճակի մէջ դնել :

բ. Իւրաքանչիւր թաղ պարտաւոր է ունենալ իր վարժարանին մէջ մատենադարան մը վարժապետաց եւ աշակերտաց համար եւ ուսմանց այն ընդհանուր դասական միջոցները՝ զոր կեղրոնական կրթական Տեսչութիւնը կը սահմանէ (յօդ. 71) :

գ. Իւրաքանչիւր թաղ պարտաւոր է դպրոցի շէնքին քով աշակերտաց թուոյն համեմատ դրասավայր եւ հողագործական տեղերը՝ միանդամայն ալարտէ կամ բանշարանոց մ'ունենալ :

**Յ1.** ա. Թաղ մը կրնայ աղջկանց եւ տղայոց համար զատ դպրոցներ կիմնել, եթէ ուրոյն ուրույն Օրինաց պահանջած թիւերը կը կազմեն (յօդ. 75 եւ 76) :

բ. Եթէ Թաղային ժողով մը աղջկանց համար զատ դպրոց կիմնելու որոշում ընէ՝ պէտք է Օրինաց 26դ յօդուածին համաձայն վարուի :

գ. Աղջկանց դպրոցը զատ հաստատուտ եկամուտ չունենար, այլ կրնայ զատ արկդ ունենալ, որուն հասոյթի աղբիւրները Թաղային ժողովը կորոշէ եւ Կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութիւնը կը վաւերացնէ :

**Յ2.** ա. Թաղ մը կրնայ Թաղային ժողովոյ որոշմամբ եւ Գաւառական կամ Կեդրոնական Տեսչութեան հաւանութեամբ իր մէջ գտնուած մասնաւոր անձի կամ ընկերութեան վարժարանին միջոցաւ հոդալ իր մանկուոյն կրթութիւնը՝ նաև մասնաւոր անոր :

բ. Թաղին եւ մասնաւոր վարժարանին մէջ պէտք է այդ մասին յատուկ դաշնագիր կնքուի հետեւեալ սկզբանց համաձայն .

1. Օժանդակեալ վարժարանի կազմութիւնն ու պաշտօնէից հանգամանքները պէտք է Օրինաց տրամադրութեանց համաձայն ըլլան եւ անոր տեսչութիւնը Աղջ. կրթական իշխանութեան համարտութ ըլլայ :

2. Թաղին բոլոր չքաւոր մանկունքը ձրիապէս ընդունուին :

3. Նպաստի եղանակը եւ թոշակաց աստիճաններն ու քանակութիւնը Թաղային ժողովը որոշէ (յօդ. 46) .

**Յ3.** Դպրոցի մը շէնքը կամ անոր մէկ մասը ուրիշ ու է բանի չի կրնար գործածուիլ առանց Գաւառական կամ Կեդրոնական կրթական Տեսչութեան հաւանութեանը :

**Յ4.** ա. Այցելու Տեսչուչը եթէ դպրոցի (կամ ծաղկոցի) մը տեղն ու շէնքը կամ զրասեղանները աշակերտաց առողջութեանը վնասակար կամ անյարմար գտնին՝ կաղդարարն Հոդաբարձուին որ պէտք եղած դարմանը տարուի : Եթէ մէյմէկ ամիս միջոցաւ երեք աղդարարութենէ ետք՝ իրենց դիտողութիւնը նկատողութեան առնուած չըլլայ՝ խնդիրը Կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան կը ներկային :

բ. Կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութիւնը Հոդաբարձուէն բացատրութիւն պահանջելէ:

եաք՝ իր որոշումը կը ներկային Թաղային ժողովին կը հաղորդէ :

գ. Գաւառական կրթական Տեսչութեան որոշմանը դէմ կարելի է բողոքել Կեդրոնական կրթական Տեսչութեան, որուն վճիռը վերջնական է :

դ. Եթէ դպրոցի մը շէնքը խարխուլ ու վտանգաւոր վիճակի մէջ ըլլայ՝ Այցելու Տեսչուչը կաղդարարէ Հոդաբարձուին որ աշակերտք անմիջապէս արձակուին, եւ իսկոյն կը տեղեկագրէ Կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան :

ե. Եթէ Թաղային ժողովը անփոյթ գտնուի իրաց վիճակին դարման տանելու՝ Գաւառական կամ Կեդրոնական կրթական Տեսչութիւնը Օրինաց 27դ յօդուածին համաձայն կը վախուի :

**Յ5.** Վարժարանաց եւ գրասեղանաց շինութեան կամ կարեւոր նորոգութեան ձեռնարկելէ առաջ՝ պէտք է Կեդրոնական կամ Գաւառական Տեսչութեան տեղեկացիր ներկայել եւ անոր հաւանութիւնն ստանալ :

## 2. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՔ

### Հաստատուն եկամուտ

**Յ6.** ա. Խրաքանչիւր թաղ պէտք է յատուկ Դպրոցական Հաստատուն եկամուտ ունենայ, որոյ աղբիւրներն են .

1. Թաղային եկեղեցւոյն պատկանեալ կալուածներուն երկուերրորդը .

2. Յանուն թաղային դպրոցին եղած նուէրնեցն ու կտակները .

3. Թաղին մէջ գտնուած հարիւր ոսկիէն վէր արժէք ունեցող անշարժ ստացուածոց արժէքին վրայ տարեկան տուրք երկու առ հաղար .

4. Թաղին մէջ հարիւր ոսկիէն վեր արժէք ունեցող անշարժ ստացուածք գնողը կը վճարէ անոր արժէքէն երկու առ հաղար .

5. Թաղին մէջ նոր բնակութիւն հաստատողը կը վըճարէ մէկ մէծիտ .

6. Հարսէ եւ վեսէ մէյմէկ մէծիտ .

7. Նորածին մանկան համար մէկ մէծիտ .

8. Դպրոցի եւ ուսումնարանի արկղաց հասոյթին յաւելեալ մասը .

9. Չունեւորները ազատ են 5—7 տուրքերէն :

**37.** Թաղային ժողովը եւ Հոգաբարձուք պէտք է ամէն ջանք ի գործ դնեն որ հաստատուն եկամուտը որ մը այնպիսի վիճակի հասնի որ կարելի ըլլայ տարիական կրթութիւնը (յօդ. 25) ձրի մատակարտքել թաղին բոլոր մանկաւոյն :

Դպրոցական արկդ

**38. ա.** Դպրոցական արկդի աղբիւրներն են՝

1. Հաստատուն եկամուտի տարեկան հասոյթը (Յօդ. 36).

2. Աշակերտաց թոշակները կամ դպրոցական տուրքը (Յօդ. 46) եւ մուտքի տուրքը (Յօդ. 47 բ.) .

3. Կրթութեան գանձանակներուն հասոյթը (Յօդ. 40).

4. Մասնաւոր նպաստք կամ նուէրք.

5. Ծնողաց եւ պաշտօնէից վճարած տուգանքները (Յօդ. 51, 222 բ եւ 223 բ)

6. Դառական պիտոյից վաճառմանէ դոյացած հասոյթը (Յօդ. 57 բ) :

7. Տարեկան հանգանակութիւն (Յօդ. 39 ա) :

Բ. Երբ հաստատուն եկամուտը Օրինաց տրամադրած վիճակին հասնի (Յօդ. 37)՝ 2 եւ 7 աղբիւրները կը ջնջուին եւ միւսներէն դոյացած հասոյթը հաստատուն եկամուտին վրայ կը բարդուի :

**39. ա.** Եթէ Դպրոցի մնաւուկին վիճակը չ'ներէ Դպրոցին ծախքերը հոգալու՝ Թաղային ժողովը կեղրոնական կամ Գաւառական Վարչական Խորհրդէն հրաման կը խնդրէ հանգանակութիւն մ'ընելու :

Բ. Կեղրոնական կամ Գաւառական Վարչական խորհրդը, եթէ օրինաւոր գտնէ ժողովին խնդիրը՝ ժապաւինեալ տումար մը կը յանձնէ Թաղային ժողովին որ հանգանակութիւնն աւարտելէ ետք անոր հաշիւը կը ներկայէ այն Վարչական Խորհրդին, որմէ ընդունած է հանգանակութեան տումարը :

**40. ա.** Թաղք իրենց վարժարանաց եւ եկեղեցեաց մէջ Կրթական գանձանակներ կը հաստատեն եւ զանոնք ամիսն անգամ մը թաղին մէջ կը շրջեցնեն :

Բ. Դպրոց բոլոր ոլաշտօնեայք բացատրելու են աշակերտաց Կրթական գանձանակի նպատակը եւ յորդորելու են զանոնք որ մասնակցին անոր : Եկեղեցական Հարք ալ նոյն յորդորը ընելու են ժողովրդեան :

**41.** Կրթական հաստատուն եկամուտը անհպելի է եւ անոր, ինչպէս եւ դպրոցական արկդի հասոյթը որ եւ է ուրիշ բանի չի դորձածուիր :

**42.** Հաստատուն եկամտից տնօրինութիւնը Թաղային Խորհրդին կը պատկանի, իսկ Կրթական արկդինը՝ Կրթական Հոգաբարձուին :

**43.** Դպրոցական կալուածները պէտք է ապահովութեան դրուին, կալուածագրերը խնամօք պահպանուին եւ միանգամայն առանձին տումարի մէջ տրձանագրուին, գրամագլուխը ապահով կերպով շահեցուի եւ կալուածները օրինաւոր պայմանագրով վարձու տրուին : Այս մասին Խաղային Վարչութիւնը պատասխանատու են Թաղային ժողովոց եւ Թաղային ժողովը Գաւառական կամ Կեղրոնական Վարչութեան :

**44.** Հաստատուն եկամտի վերաբերեալ որ եւ է տնօրինութիւն, առուծախ մեծ նորոգութիւնք եւն. չըներ Թաղային Վարչութիւնը առանց Թաղային ժողովին որոշմանը եւ կեղրոնական կամ Գաւառական Վարչութեան վաւերացմանը :

**45.** Թաղային խորհուրդը կրթակտն հաստատուն եկամտի հաշիւները կը ներկայեն Թաղային ժողովին : Թաղային ժողովը վերոյիշեալ հաշիւները յատուկ մասնախմբի մը միջոցաւ քննել եւ երկու շաբաթ 'ի տես ժողովրդեան կախելէ ետք կը վաւերացնեն եւ զանոնք կրկին օրինակով ի Պօլիս կեղրոնական եւ ի գաւառս Գաւառական Վարչութեան կը ներկայեն 'ի քննութիւն եւ ՚ի վաւերացումն :

**46. ա.** Թաղային ժողովը պէտք է ջանան Կրթական տուրք հաստատելու, որուն բաշխման հիմը պէտք է ծնողաց կարողութիւնն ըլլայ :

Բ. Այն Թաղերը ուր որ կարելի չըլլայ կրթակտն տուրք հաստատելու՝ թոշակ կառնուի ունեւոր ծնողքներէ, եւ Թաղային ժողովը կ'որոշեն առնուելիք թոշակի բանակութիւնն ու աստիճանները, որուն հիմը դարձեալ ծնողաց կարողութիւնն պէտք է ըլլայ :

Գ. Կեղրոնական Կրթական Տեսչութիւնը ընդհանուր կանոնագիր մը կը շինէ Կրթական տրոց եւ Թոշակաց, ինչպէս եւ մուտքի տրոց եւ տուգանաց (Յօդ. 47 եւ 51 ա.) համար :

Դ. Թաղային ժողովոց այս մասին շինած մասնաւոր կանոնագրութիւնները պէտք է այդ ընդհանուր կանոնագրի սկզբանց համաձայն ըլլան եւ կեղրոնական կամ Գաւառական Կրթական Տեսչութիւնէ վաւերանան :

**47. ա.** Կրթական տուրք Հաստատուած Թաղերու Դպրոցները ձրի են բոլոր աշակերտաց համար . իսկ Թո-

շակ հաստատուած թաղերու դպրոցները ձրի կընդունուին միայն չքաւոր ծնողաց զաւակունք , որոց դպրոցական պէտքերն ալ ձրի կը հոգացուին ըստ վկայութեան Աղքատախնամ Հոգաբարձուին :

Բ. Թոշակ հաստատուած թաղերու կարող աշակերտներնն մուտքի տուրք ալ կառնուի , որուն աստիճաններն ուքանակութիւնը Թաղային ժողովք կորոշեն :

**48.** Թաղային ժողովոց հաստատած կանոնագրին համաձայն՝ Դպրոցաց Հոգաբարձուք կորոշեն իւրաքանչչիւր ծնողքի վճարելիք թոշակին ու մաւաքի տուրքը՝ անոնց վիճակին վրայ ճիշդ տեղեկութիւն առնելէ յետոյ :



### ՊԱՐՏԻՔ ԵՒ ԻՐԱԿՈՒԽՆԻՔ ԾՆՈՂԱՅ ԵՒ ԱՇԱԿԵՐՏԻՔ

#### 1. ՊԱՐՏԻՔ ԵՒ ԻՐԱԿՈՒԽՆԻՔ ԾՆՈՂԱՅ

**49.** ա. Ծնողը պէտք է իրենց զաւակները ոռնուագն չորս տարի Ստարին դպրոց և Երկու տարի կրկնիչ վարժարան խրկելու , եթէ իրենց թաղին մէջ հաստատուած են արդէն այդպիսի դպրոց և վարժարան . խակ եթէ թաղին մէջ Բարձրագոյն դպրոց կոյ՝ պէտք է վեց տարի նոյն դպրոցը զրկելու [Յօդ. 67, 68 և 92] :

Բ. Ծնողաց այդ պարտականութիւնը կը դադրի՝ երբ տղայք աւարտական քննութիւն տալով վկայագիր կըստանան [Յօդ. 87. դ.] :

գ. Ծնողը պարտաւոր են մարտր ու կոկիլ վիճակի մէջ խրկել դպրոց իրենց զաւակները :

**50.** ա. Դպրոցի նոր շրջանը մկնելէ գէթ մէկ շաբթա առաջ բահանացը կը ծանուցանեն եկեղեցեաց մէջ որ դպրոցական տարիք անեցող մանկունք ժամանակին դպրոց խրկուին . նոյն ազգարարութիւնը կընեն և Հոգաբարձուք՝ ծնողաց և աշակերտաց վերաբերեալ Օրինաց տրամադրութիւններն ալ յիշելով [Յօդ. 49, 52, 58, 60, 61] :

Բ. Նոր շրջանը՝ [ Մայիս ] մկնելէ շաբթա մը ետք Հոգաբարձուք ազգարարութիւն կընեն դպրոց չի զրկուած տղայց ծնողաց և պատճառները կը հասկնան , և եթէ չքաւորութիւն է՝ պէտք եղած դարմանը կը տանին Աղքատախնամ Հոգաբարձուին օգնութեամբ [Յօդ. 391] :

**51.** ա. Այն ծնողը կամ պաշտպանք որ Օրինաց 49 րդ յօդուածին հակառակ կը վարուին՝ Թաղային Դատարանին առջև կը կոչուին և կը խրատուին : Եթէ առաջին ազգարարութենէ ետք նոյն ընթացքը շարունակենց իրենց կարաղութեան համեմատ տուգանքի կը դատապարտութիւնի յօդուա կրթական արկղին , երկրորդ անգամ տուգանքը կը կրկնապատկի , երրորդ անգամ դատապարտութիւն վճիռը ժողովրդեան կը ծանուցուին Եթէ այդ միջոցն ալ անգօր մեայ՝ խնդիրը Թաղային ժաղովին կերթայ որ՝ գործը քննելէ ետք՝ սպարտազանցը ընտրական իրաւունքէ կը զրկէ և պատուէր կուտայ Թաղային Վարչութեան որ անոր գործերը , բացի կրօնական պէտքերէ , չի տեսնուին :

Բ. Նոյն ընթացքը կը բռնուի և անոնց դէմ՝ որք որոշուած թոշակը կամ դպրոցական տուրքը չեն վճարեր , տղայց դպրոցական պէտքերը չեն հոգար և անոնց կանոնաւոր կերպով դպրոց յաճախելուն ոնդիցթ կը լլան , և այս ամենը տուանց շբաւորութեան պատճառի :

Գ. Դատապարտեալք կրնան բողոքել ի Պօլիս Կեդրոնական և ի գուտառ Գաւառական Դատարանին և սոցա վճայն դէմ Կեդրոնական Բարձրագոյն Գաւառադանին :

**52.** Եթէ ծնողը իրենց զաւակները ուրիշ վարժարաններն կը խրկեն կամ տունը կը կրթեն՝ պէտք է տեղեկութիւն տան այդ մասին թաղային դպրոցի Հոգաբարցուին :

**53.** Այցելու Տեսուչք պէտք է հսկեն որ մասնաւոր վարժարաններ յաճախազ աշակերտք և աշակերտուհի Օրինաց սրահանջան տարրական կրթութիւնը ստանան [Յօդ. 67, 68 և 92] :

**54.** Ուրիշ թաղի դպրոց կը թութիւն առած աշակերտք պէտք է իրենց ուսմանց վիստականը ներկայեն իրենց թաղի կրթական Հոգաբարձուին . խակ մասնաւոր վարժարանի մէջ կամ տունը կը թուած աշակերտք պէտք է թաղային դպրոցին աւարտական քննութեանը ենթարկուին [Յօդ. 87. ա.] :

**55.** ա. Հոգաբարձուք ամեն շաբթի և Այցելու Տեսուչք իրենց այցելութեանց միջոցին բացակայութեանց ցուցակները կը քննեն և պարտուազաւած միջոցները ի գործ կը զնեն անոնց դարման տանելու համար :

Բ. Վարժարանը ամէն օր կամ գէթ շաբթի երկու անգամ ծնողաց կիմացնէ աշակերտաց բացակայութիւնը և բացատրութիւն կուզէ :

գ. Ներելի են միայն այն բացակայութիւնք, որոց պատճառն է անձնական հիւանդութիւն. հիւանդութիւն կամ մահ ընտանեաց մէջ և ողի չափազանց գէշութիւն։ Ասոցմէ դուրս եղած բացակայութեանց ներելի կամ ան-ներելի ըլլալը Այցելու տեսուչք կորոշեն Հոգաբարձուաց և Տեսուչ—վարժապետաց կամ՝ վարժուհեաց կարծիքն առնելէ ետք։

**56.** ա. Ծնողք միշտ իրաւունք ունին իրենց զաւակաց վիճակին վրայ տեղեկութիւն ուղելու, բայց իրաւունք չունին ուղղակի պաշտօնէից գործին բառուաւելու և մանաւանդ աշակերտաց ներկայութեանը անոնց դիսութիւններ ընելու։

բ. Ծնողք եթէ վարժապետին կամ վարժուհեայն գէմ բոլոք ունին՝ Տեսուչ—վարժապետին կը դիմեն, եթէ սորու գէմ՝ Հոգաբարձուին և եթէ Հոգաբարձուին գէմ՝ Թաղացին Ֆողովին կամ Դատարանին։

**57.** ա. Ծնողք եթէ անկորող են տղայոց դպրոցական պիտույքը հոգալու՝ պէտք է ժամանակին իմացնեն Կրթական կամ Ազգաստախնամ Հոգաբարձուին։

բ. Ծնողաց դիւրութեան համար՝ ամէն դպրոց պէտք եղած դասադրերն ու այլ դասական նիւթերն ունենալու և զանանք չուկոցի գնով տալու է աշակերտաց։

## 2 ԱՇԱԿԵՐՏԱ

**58.** ա. Աշակերտք դպրոց ընդունուելու համար պէտք է ծննդեան և պատուաստի վկացականք և Կրթական Հոգաբարձուէն ընդունելութեան արտօնագիր ունենան։

բ. Ասորին դպրոցի Ա. կորզը կը նորուաւին վեց տարեկանը լիսացուցած մանչ և աղջիկ տղայք, եթէ անոնց առողջութեան վիճակն ու կազմուածքը և մարդի դուգումը կը ներեն։

գ. Աւելի փորբ մանկունք չեն ընդունիր։

դ. Չեն ընդունիր նաև տարափոխիկ հիւանդութիւն ունեցող, ինչպէս և պակասաւոր տղայք, որոց ներկայութիւնը կրնաց վնասակար ըլլալ միւսներուն։

ե. Այդպիսի տղայոց կրթութեան հոգը՝ եթէ աղքատ ծննդաց զաւակունք են, Ազգաստախնամ Հոգաբարձուին կը պատկանի, որ կը ջանաց պատշաճաւոր միջոցներ գտնել այդ նալաւակին համար։

**59.** ա. Ուրիշ կրօնքէ և աղգէ աշակերտներ ալ կը նորուաւին, եթէ դասախոսութեան լեզուն կը հասկնան։  
բ. Օտար աշակերտաց թոշակը Հոգաբարձուք կո-րոշեն։

**60.** ա. Աշակերտք կը նորուաւին տարին մէկ անգամ դպրոցական շրջանին [ Մայիս ] սկիզբը, բայց բնակութեան վտափութեան պատճառաւ աշակերտք միշտ կը բնան դպրոցէ դպրոց անցնիլ, միայն թէ քննուելով իրենց վիճակին համապատասխանող կարգը կը դրուին։

բ. Աշակերտաց կարգը վերջնական կերպով կորոշ-տի գէթ մէկ շաբաթուան վորձէ ետք։

**61.** ա. Ուրիշ թաղի դպրոց յաճախելու համար՝ ա-շակերտք պէտք է իրենց թաղի դպրոցէն ուսմանց և վա-րոց վկացական ունենան, եթէ արդէն հոն յաճախած են։

բ. Աշակերտ մը ուղղակի ուրիշ թաղի դպրոց չի կը նորուաւիլ առանց իր թաղի Հոգաբարձուէն վկա-յաղիր մը ներկայելու, որուն մէջ պէտք է բացատրուած րվաց իր թաղի դպրոցը չի յաճախելուն պատճառը։ Ա-սանց ոյդ վկացագրին Հոգաբարձուք ուրիշ թաղէ աշա-կերտ չեն ընդունիր։

**62.** Եթէ աշակերտի կամ աշակերտուհւոյ մը ներ-կայութիւնը որ և է պատճառաւ միւսներուն առողջու-թեան կամ վարուցք վնասակար և կամ անոնց յառաջա-դիմութեանը արգելը է՝ Հոգաբարձուն ներփին և Այցելու Տեսչին կարծիքն առնելէ և անոր ծննդաց պարտուալատ-չաճ աղբարտութիւնն ընելէ ետք կը ճամբէ զանի։

**63.** ա. Դպրոցական դրազմանց միջոցին ոչ ոք կը բ-նոց աշակերտները տեղ մը խոկել կամ զանոնք ժամանա-կացոցէն դուրս ուրիշ բանի զրադեցնել։

բ. Դպրոցէն դուրս ոչ ոք կրնաց աշակերտները այն-պիսի բանի գործածել, որ անոնց վարուցք կամ առողջու-թեանը վնասակար ըլլաց։

**64.** Աշակերտք և աշակերտուհւի վարուց և ուս-մանց համար վիճակացոց տետրակներ կունենան, ուր կը նշանակուին ամէն ամիս անոնց վարուց և կրթութեան վիճակին նիշերն ու բացակայութիւնները և ծննդաց կը խոկելին, որը ստորագրելով կը վերապարձնեն Տեսչին։



## ՆԵՐԲԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ, ԴՊՐՈՑԱՑ

1. ԱՍՏԻՃԱՆԻ ԵԽ ՆՊԱՏԱԿԻ, ՈՒՍՄԱՆՑ ՄՐԱԳԻՐՔ  
ԵԽ ՄԻՋՈՑՔ

**65.** Թաղոյին դպրոցները երկու տառիմանի կը բաժնուին, Ասորին դպրոց և Բարձրագոյն դպրոց :

**66.** Թաղոյին դպրոցաց նորատակն է տարրական ընդհանուր կրթութիւն տալ մանչ և աղջիկ տղայոց, զանք ֆիզիքապէս, բարոյտապէս և մտաւրապէս զորդացնել և գործունեաց ու օգտակար անդամք հասցնել :

### Սոտրին դպրոց

**67.** Ասորին դպրոցը 4 տարուան շրջան և 4 կորդ ունի և կաւանդէ :

1. Կրօնք . — Կարեոր ազօմներ, կարեոր զիտելիք Ա. Պատմութենէն, ոկրտունք Քրիստոնէական վարդապետութեան և բարոյականի և եկեղեցական արարութեանց և տօներու սպարզ բացատրութիւնք .

2. Հոյերէն . — Աշխարհիկ լեզու և սկզբունք դրոց լեզուի, վերջինը միայն Դ. կարգին .

3. Խրագիտութիւն . — Ա. Բ. և Գ. կարգաց .

4. Տարրական թաւարանութիւն . — Հաշիւ զրաւոր և մտաւոր . գրամք, չափք և կշռք . Հաշուազրութեան վարժութիւնք .

5. Աշխարհազրութիւն . — Կարեորագոյն զիտելիք և աշխարհագծութեան վարժութիւնք, Դ. կարգին .

6. Ազգային Պատմութիւն . — Կարեոր զիտելիք Դ. կարգին .

7. Գեղագրութիւն . — տարրական վարժութիւնք .

8. Սկզբունք գծագրութեան .

9. Մարմամարզ . — տարրական վարժութիւնք .

10. Աղջրունք ձայնական երաժշտութեան, տշխարհային և եկեղեցական, վերջինը միայն Դ. կարգի յարմարագոյն աշակերտաց .

11. Չեռագործ . — սպարզ և անհրաժեշտ գործեր, աղջկանց .

12. Տնտեսութիւն . — անհրաժեշտ զիտելիք, միայն Դ. կարգի աղջկանց .

( Բարձրագոյն դպրոց )

**68.** ա. Բարձրագոյն դպրոցը 6 տարուան շրջան և 6 կարգ ունի, որոց 4ը Ստորին դպրոցին կը համապատասխաննեն (Տե՛ս տարրերութիւն բ. դ. և ժգ. պրու.), և կուանդէ

1. Կրօնք . — Ա. Պատմութիւն համառօտ . Քրիստոնէական վարդապետութիւն համառօտ . բացատրութիւն եկեղեցական ծէսերու, արարողութեանց և տօներու, գմինական սկզբունք բարոյազխութեան .

2. Հոյերէն աշխարհիկ և զրոց լեզու, վերջինը միայն Ե. և Զ. կարգաց .

3. Խրագիտութիւն . Ա. Բ. և Գ. կարգաց .

4. Ֆրանսերէն, Դ. Ե. և Զ. կարգաց .

5. Տաճկերէն, Ե. և Զ. կարգաց, տղայոց .

6. Պատմութիւն . — Աղջրային պատմութիւն համառօտ հանդերձ աշխարհազրութիւն կարեւորագոյն գիտելեօք, Դ. և Ե. կարգաց . Ընդհանուր պատմութենէն կարեւորագոյն գիտելելիք, Զ. կարգին .

7. Աշխարհագրութիւն . — Ընդհանուր և Տաճկաստանի համառօտ և աշխարհագծութեան վարժութիւնք, Դ. Ե. և Զ. կարգաց .

8. Թաւարանութիւն . կարեւորագոյն վարժութիւնք Տունարակալութեան . Ֆրանսական Զափական դրսւթիւն և բաղդատութիւն Տաճկական Զափական դրութեան հետ, Ե. և Զ. կարգաց .

9. Տարրական երկրաչափութիւն և սպարզ սովորական կիրառութիւնք ; Ե. և Զ. կարգաց . վերջինը միայն աշակերտաց .

10. Բնական գիտութիւններէն կարեւորագոյն գիտելիք և զիտաւոր սովորական կիրառութիւնք երկրագործութեան, ճարտարութեանց և առողջարանութեան վերաբերեալ, Ե. և Զ. կարգաց .

11. Գեղագրութիւն Հոյերէն, Ֆրանսերէն և Տաճկերէն .

12. Աղջրունք գծագրութեան և գեղագծութեան .

13. Աղջրունք ձայնական երաժշտութեան, աշխարհային և եկեղեցական, վերջինը միայն Դ. Ե. և Զ. կարգի յարմարագոյն աշակերտաց .

14. Մարմնամարզ . — տարրական վարժութիւնք .

15. Չեռագործ . ամեն ընտանեաց կարեւոր և օգտակար գործեր, աղջկանց .

16. Աղջրունք սննդեսութեան, միայն Զ. կարգի աղջկանց :

Բ. Գաւառաց Բարձր. դպրոցներուն մէջ՝ տեղական սրահներնց համեմատ՝ Ֆրանսերէնի տեղ ուրիշ լեզու մը և գործնական երկրագործութեան սկզբունք կաւանդուին:

**69.** Դպրոցաց մէջ աւանդեալ բոլոր ուսմունք սրարտաւորիչ են. բացառութիւնք կրնան ըլլալ միայն այն աշակերտաց կամ աշակերտուհեաց համար, որոց առողջութիւնը չի ներէր այս կամ այն դասն առնելու:

**70.** Կեղրոնական Կրթական Տեսչութեան արտօնութիւն կը տրուի Օրինաց 67 և 68 յօդուածոց առհմանած ուսմանց մէջ տեղական հանգամանաց պահանջած անհրաժեշտ փոխիսութիւնքն ընելու:

**71.** ա. Կեղրոնական Կրթական Տեսչութիւնը կը գծէ Ստորին և Բարձրագոյն դպրոցի ուսմանց ընդհանուր ծրագիրը և կորոշէ դասագրքերն ու այլ դասական ընդհանուր և մասնաւոր միջոցները:

Բ. Կրօնական ուսմանց ծրագիրն ու դասագրքերը կը սահմանէ Կրօնական Խորհրդականը ըստ 197 յօդուածոց Օրինաց վարչական կողմակերպութեան:

**72.** ա. Կեղրոնական Կրթական Տեսչութեան հրատարակած դասագրքերու և այլ դասական միջոցներու, ինչպէս և մատենադարանաց գրքերու ցուցակներէն գուրս ընտրութիւնը կրնան ըլլալ, բայց պէտք է անոր վաւերացմանը ենթարկուին:

Բ. Նմանապէս սահմանեալ ընդհանուր ծրագրին համաձայն՝ դպրոց մը կրնայ իր մասնաւոր ծրագիրն ունենալ, բայց պէտք է զայն Կեղրոնական կամ Գաւառական Կրթական Տեսչութեան բննութեանն ու վաւերացմանը ենթարկէ (Յօդ. 70):

**73.** ա. Խրաբանչիւր դպրոցի Տեսուչ-վարժապետը վարժապետաց հետ Խորհրդակցութեամբ կը շինէ ամէն երեք ամիս դասերու բաշխման ցուցակը (Ժամանակացոյց), որ պէտք է ցոյց տայ խրաբանչիւր օրուան և ժամու դրազմանց կարգը:

Բ. Այցելու Տեսուչը միշտ կրնայ պատշաճ դատած փոխիսութիւնին ընել այդ ցուցակին մէջ Օրինաց տրամադրութիւններուն և սահմանեալ ծրագրին համաձայն:

**74.** ա. Ուսուցման եղանակներն ու կերպերը պէտք է աշակերտաց դանազան տարիքին ու կրթութեան առ

տիմանին, համաձայն ըլլան, որպէս զի աշակերտք թէ իւրաքանչիւր ուսման մէջ հիմնաւոր յառաջադիմութիւն ընեն և թէ՝ միանգումայն մտաւորապէս զարգանան և ինքնակրթութեան փափար ու կարողութիւն ստանան:

Բ. Այն գաւառները՝ ուր աշակերտք հայերէն չեն գիտեր՝ դասերը պէտք է աշակերտաց հասկցած լեզուովը բացատրուին մինչեւ որ կարող ըլլան հայերէն դասախոսութենէն օգուտ քաղելու:

—

## 2. ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԿԱՐԴԱՑ

**75.** ա. Ստորին դպրոցը միայն մէկ սրահ և մէկ ներքին վարժապետ կունենայ՝ եթէ երկու սեռէ տղայոց թիւը 30 էն աւելի չէ. իսկ եթէ 30 ը անցնի՝ օդնական-վարժապետ կամ վարժուհի մը կ'աւելնայ:

Բ. Եթէ աշակերտաց եւ աշակերտուհեաց թիւը 60ի համարի՝ գոյրոցը երկու սրահի կը բաժնուի և խրաբանչիւր սրահ երկու կարգ կը պարունակէ և մէկ ներքին վարժապետ կամ վարժուհի կունենայ:

Գ. Նմանապէս եթէ խրաբանչիւր կարգի աշակերտաց և աշակերտուհեաց թիւը 30ի համարի՝ խրաբանչիւր կարգ կրնայ զատ դասարան և խրաբանչիւր դասարան մէկ ներքին վարժապետ կամ վարժուհի ունենալ:

Դ. Այդ բաժնումները աեղի կունենան Գաւառական կամ Կեղրոնական Տեսչութեան վաւերացմարը՝ եթէ բաժնումնաց եղանակը Օրինաց արամադրութեանց բոլորովին չի համապատասխանէր:

**76.** ա. Բարձրագոյն դպրոցի 4 ստորին կարգերը Ստորին դպրոցի կարգաց պէս կը կազմուին (Յօդ. 75). իսկ երկու բարձրագոյն կարգերը կրնան զատ դասարան ունենալ՝ եթէ խրաբանչիւր կարգի համար ունեազն 15 աշակերտ և աշակերտուհի դանուի:

Բ. Այդ երկու բարձրագոյն կարգերը մէկ սրահի մէջ կ'ըլլան և մէկ ընդհանուր Արտօնութիւր ունեցող ներքին վարժապետի կամ վարժուհւոյ կը յանձնուին՝ եթէ երկու կարգի աշակերտաց և աշակերտուհեաց թիւը 30 էն նուազ ըլլայ:

Գ. Եթէ բարձր. կարգաց մէջ աւանդուելիք ուսմանց դասերը հարկ ըլլայ բանի մը վարժապետաց մէջ բաժնել՝ պէտք է՝ ըստ կարելւոյն՝ նոյնատեսակ ուսմանց դասերը մէկ վարժապետի յանձնուին:

Դ. Այդ պարագային մէջ ներքին վարժապետաց կը

յանձնուի իւրաքանչիւր դասարանի բարեկարգութեան և  
միւս դասառուաց դասերու ընթացքին հսկելու պաշտօնը :

Ե. Հոգաբարձուք և մանաւանդ Այցելու Տեսուչը  
մասնաւոր փոյթ տանելու են որ այցելու դասառուաց  
թիւք կարելի եղածին չափ քիչ ըլլոյ և իւրաքանչիւր  
դպրոց բաւական թուով ներբին պաշտօնեայ ունենայ :

**77.** ա. Դպրոցաց Տեսուչ-վարժապետք կամ վար-  
ժուհի աշակերտաց և աշակերտուհեաց կարողութեան  
համաձայն ստանանեալ կարգելը (Յոդ. 67 և 68) կը կազ-  
մնի :

Բ. Իւրաքանչիւր կարգ պէտք է զատ դաս առնու ,  
միայն երգի , մարմամորդի և ձեռագործի դասերու ա-  
տեն կրնան կարգերը միանուլ եթէ աշակերտաց թիւը 30ը  
շանցնի :

Գ. Բարձրագոյն կարգաց աշակերտք կրնան ստորին  
կարգաց դասերուն ունինդիր ըլլու :

**78.** Ստորին դպրոցի Ա. կարգը պէտք է կազմեն  
7—9 տարեկան եւ Դ. կարգը առ առուելն 13 տարեկան ,  
խել Բարձր դպրոցի Զ. կարգը առ առուելն 16 տարեկան  
տղայք : Արտաքոյ կարգի բացառութիւնը կըլլան Հոգա-  
բարձուին հաւանաւթեամբ . եթէ ընդունելի և հարկե-  
ցուցիչ պատճառներ կան և բացառութիւնը միւս աշա-  
կերտաց որ և է վեսա չի սկառածառեր :

**79.** ա. Կեդրոնական Կրթուկան Տեսչութիւնը կը  
հրատարակէ դպրոցաց ներբին կազմութեան և բարեկար-  
դութեան ընդհանուր կանոնագիրը :

Բ. Իւրաքանչիւր դպրոց կրնոյ մասնաւոր կանոնա-  
գիր ունենալ , բայց պէտք է ընդհանուր կանոնագրին ըս-  
կդրանցը համաձայն ըլլայ և Գաւառական կամ Կեդրոնա-  
կան Կրթուկան Տեսչութենէն վաւերանաց :

### 3. ԵՐԿՍԵՐ ԴՊՐՈՑՔ

**80.** Երկսեր դպրոցաց մէջ աշակերտուհիք աշա-  
կերտաց կարգերուն հետ դաս կ'առնուն . բայց աշակեր-  
տուհեաց համար դատ տեղ յատկացած կըլլոյ դասարանին  
մէջ :

**81.** Այդպիսի Երկսեր դպրոցք պէտք է իրենց մէջ  
կոմիտենց մօտ աշակերտուհեաց համար ձեռագործի դատ

սրահ մը , դրօսավայր և ճեմիչներ ունենան . նմանապէս  
աշակերտուհեաց հսկողութեան ու ձեռագործի դասերուն  
համար վարժուհի մը :

### 4. ԺԱՄԱՆԱԿ ՈՒՍՏԱԸՆ ԵՒ ՊԱՐԱՊՈՑ

**82.** Դպրոցական տարին Մայիսին կ'ըսկսի :

**83.** ա. Օրուան դասերը երկու մասի կը բաժնաւին,  
ամէն օր կէս օրէն առաջ 3 ժամ և կէս օրէն յետոյ եր-  
կու ժամ . խել շարաթ և՝ եթէ հարկը սրահանջէ՝ և չո-  
րեքշարթի օրերը միայն կէս օրէն առաջ 3 ժամ :

բ. Գարնան և ամառը կէս օրին 2 ժամ , խել աշ-  
նան և ձեռուը  $4\frac{1}{2}$  ժամ , ինչպէս և իւրաքանչիւր դասէ-  
եար 10 վայրկեան հանդիսատ կը տրուի :

**84.** Ժամերու և դասերու բաշխումը կրնայ տեղ-  
ւոյն և տարւոյ եղանակին պահանջնանց համեմատ ըլլալ  
(Յոդ. 79 Բ.) . բայց պէտք չէ որ Ստորին դպրոցի Ա. Բ.  
և Գ. կարգերը օրը 4 ժամէն և նոյն դպրոցի Դ. կարգը ,  
ինչպէս և Բարձր դպրոցի Ե. և Զ. կարգերը օրը 5 ժամէն  
աւելի դասառութեան դրադին :

**85.** Տարուան այլ և այլ արձակուրդներու ամբողջ  
տեղութիւնը պէտք է առ առուելն ութը շարաթ ըլ-  
լայ , բացի սովորական տօնելի օրերէն :

**86.** ա. Սովորական արձակարգներու բաշխումն ու տե-  
ղութիւնը Հոգաբարձուք կ'որոշեն Տեսուչ-վարժապե-  
տաց և Այցելու Տեսչաց կարծիքն առնելով :

Բ. Երկրագործական դրադմանց միջոցին կրնան ար-  
տաքոյ կարգի արձակուրդք տեղի ունենալ , որոց ժամա-  
նակն ու տեղութիւնը կորոշեն Գաւառական Կրթական  
Տեսչութիւնը Հոգաբարձուաց և Այցելու Տեսչաց կարծիքն  
առնելով , և իրենց որոշումը կեդրոնական Կրթական Տես-  
չութեան վաւերացմանը կենթարկեն :

5 ԳՆՆՈՒԹԻՒՆՔ, ԿԱՐԴԱՓՈԽՈՒԹԻՒՆՔ,

ՎԻՃԱԿԱՑՈՅՔ, ՎԿԱՑԱԴԻՐՔ ԵՒ ՀԱՆԴԵՍՔ

**87.** ա. Քննութիւնները քառամսեայ, տարեկան եւ աւարտական են, որը կը կատարուին կեղրոնական կրթական Տեսչութեան հրատարակելիք կանոնաց համաձայն :

բ. Քառամսեայ քննութիւնք Տեսուչը և վարժապետը կը կատարեն ի ներկայութեան Հոգարարձուին կամ անոր օգնականաց :

գ. Տարեկան և Աւարտական քննութիւնը կը կատարեն Այցելու Տեսուչը և իրմէ կազմեալ քննիչ Մասնախումբը : Այդ քննութեանց ներկայ կը լլան Թաղային Խշանութիւնք, ծնողը և այլ աղդայինք :

դ. Տարեկան քննութիւններէն ետք աշակերտաց ծընողներուն զրաւոր տեղեկութիւն (վիճակացոյց) կը տըրուի իրենց զաւակաց վարուց և կրթութեան վիճակին՝ վըրաց : Իսկ ուսումնաւարտ աշակերտաց և աշակերտուհեաց վկայագիր կը տրուի Տեսուչ—վարժապետէն և Հոգարարձումուէն տուրագրեալ և Այցելու Տեսչէն վաւերացեալ :

**88.** Տարեկան քննութիւնները դպրոցական տարեգլխէն առաջ տեղի կունենան, որոց օրը Հոգարարձուք կ'օրոշեն Տեսուչ—վարժապետաց կարծիքն առնելով, և գէթ 15 օր առաջ կը ծանուցանեն Այցելու Տեսչաց :

**89.** Աշակերտաց կարգախոխութիւնը տեղի կունենայ տարին անգամ մը տարեկան քննութիւններէն ետք բոցց ի պահանջել հարկին արտաքոյ կարգի բացառութիւնք կը լլան ըլլալ :

**90.** Տարեկան քննութիւններէն ետք բոլոր աղդային վարժարանաց մէջ տարեգարձի հանդէս տեղի կունենաց, որոյ նպատակն է դպրոցաց ընթացքին և վիճակին վրաց տեղեկութիւն տալ ժողովրդեան և անոր ու դպրոցաց մէջ համակրական սերտ յարաբերութիւնք հաստատել :

6. ՕՐԱԿՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՑՈՒՑԱԿԲ

**91.** ա. Ամեն դպրոց պէտք է ունենայ

1. Տումար աշակերտութեան
2. Օրագրութիւնք ուսմանց

3. Օրագրութիւն տեսչական
4. Օրագրութիւն բացակայութեանց և վարուց
5. Ժամանակացոյց և ցուցակ ուսմանց
6. Ցուցակ դասագրուց և այլ դասական նիւթոց
7. Արձանագրութիւնք քննութեանց
8. Տետր զիտողութեանց
9. Ցուցակ գոյից և գրեանց :

բ. Իսկ յէկէն աւելի պաշտօնեայ գտնուած դպրոցները պէտք է ունենան նաև

10. Ցուցակ պաշտօնէից և անոնց իւրաքանչիւր կարգի աւանդած դասերուն և

11. Ցուցակ բացակայութեանց պաշտօնէից :

գ. Այս բոլոր ցուցակներն ու օրագրութիւնները պէտք է բոնուին կեղրոնական կրթական Տեսչութեան տուած մասնաւոր հրահանգներուն համաձայն (Յօդ. 325 զ.) :



## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ



ԿՐԻՆԻՉ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐԺԱՐԱՆՔ

**92.** Կրկնիչ կամ լրացուցիչ վարժարաններ պէտք է հաստատուին միայն այն թագերուն մէջ՝ ուր որ առնուազն 10 աշակերտ կը գտնուի (Յօդ. 98) :

**93.** Կրկնիչ վարժարանաց դասախոսութիւնը, թաղյին դպրոցներու մէջ կը լլայ :

**94.** Կրկնիչ վարժարանաց ծախքերը թաղային դպրոցաց արկղներէն կը հօգացուին և հասոյթները նոյն արկղներուն կը պատկանին :

**95.** Կրկնիչ վարժարանաց նպատակն է Ստորին դպրոցաց մէջ ուսում աւարտող աշակերտաց և աշակերտուհեաց կարծիքի սրահանջած կարեւոր գիտելեաք ըստ կարելացն ընդուրձակել :

**96.** Կրկնիչ վարժարաններու ուսմանց ընթացքը 2 տարի կը տեէ և 2 կարգ ունին :

**97.** ա. Կրկնիչ վարժարանները ամէնօրեայ չեն, սյլ շարաթը միայն երկու կէս օր դաս ունին (2-3 ժամ), չորեքշարթի և շարաթ կէս օրէն ետք (Տես. Յօդ. 83 ա) :

բ. Եթէ այս կարգադրութիւնը ու է անցարմարութիւն ունենայ, դասերը երեկոները կը տրուին շարաթը երեք անգամ երկերկու ժամ:

**98.** Կրկնիչ վարժարան կընդունուին միայն Ստորին դպրոցի ուսումնաւարտ աշակերտը և աշակերտուհիը և անոնք որ նոյն դպրոցի ընթացքին բննութիւնը կուտան:

**99.** Եթէ Կրկնիչ վարժարանաց դասերը երեկոները արուին՝ դպրոցաց պաշտօնեայք պէտք է իրենց աշխատութեան համեմատ առանձին վարձատրութիւն ստանան:

**100.** Այցելու Տեսուչք, դպրոցաց Հոգաբարձուք և Տեսուչ-վարժապետը միանգամայն և կրկնիչ վարժարանաց հսկողութիւնը, հոգաբարձութիւնն ու տեսչութիւնը կը վարեն:

**101.** Օրինաց միւս յօդուածոց տրամադրութիւնները՝ որը սյն Գլխոյ յօդուածոց մասնաւոր տրամադրութեամբ բարեփոխած չեն՝ Կրկնիչ վարժարանաց ալ նը վերաբերին:



### ԵՐԵԿՈՑԵԱՆ ԵՒ ԿԻՐՍԻՆՈՐԵԱՅՎԱՐԺԱՐԱՆՔ

**102.** Երեկոյեան և Կիրակնօրեայ վարժարաններ պէտք է հաստատուին բոլոր սյն թաղերը՝ ուր որ անոնց պէտքը կզգացուի ըստ վկայութեան Այցելու Տեսչոց:

**103.** Այս վարժարանաց դասերը թաղային դըպրոցներու մէջ կը տրուին:

**104.** Երեկոյեան և Կիրակնօրեայ վարժարանաց ծախրերը թաղային դպրոցաց արկղներէն կը հոգացուին և հասոյթները նոյն արկղներուն կը պատկանին:

**105.** Երեկոյեան և Կիրակնօրեայ վարժարանաց նախակնէն է ամէն հասակի երկու սեռէ անհատից և դըպրոցական տարիին անցուցած անուս սրտանեաց տարրական անհրաժեշտ կրթութիւն տալ:

**106.** Երեկոյեան և Կիրակնօրեայ վարժարանք ուսմանց որոշեալ դրվագն և կարգեր չունին, աշակերտը կամ աշակերտուհիք իրենց վիճակին համաձայն խումբերու կը բաժնուին:

**107.** ա. Երեկոյեան և Կիրակնօրեայ վարժարանաց անհրաժեշտ ուսմանքն են՝

1. Կրօնք և սկզբունք բարոյականի,

2. Ռայրենի լեզու և զիր,

3. Ազգային պատմութիւն,

4. Տարրական թուարանութիւն,

5. Ակդրամնիք աշխարհագրութեան:

բ. Ուրիշ ուսմունք ալ կրնան աւելնալ տեղական օբյեկտից համեմատ և Կեդրոնական կամ՝ Գուտառական կրթական Տեսչութեան վաւերացմամբ:

**108.** ա. Կիրակնօրեայ վարժարանաց մէջ միայն կիւրակէ օրերը դասախոսութիւն կը լլոյ առ նուազն երկու ժամ՝ կէս օրէն առաջ կամ յետոյ. իսկ Երեկոյեան վարժարանաց մէջ առ նուազն չարաթը երկու երեկոյ երերկու ժամ:

բ. Այս վարժարանք ու է արձակուրդ չունին:

**109.** Կիրակնօրեայ և Երեկոյեան վարժարանաց աշակերտը երկու տեսակ են՝ կանոնաւոր աշակերտ և անհնդիրք:

բ. Կանոնաւոր աշակերտը կընդունուին երեք ամիսը անգամ մը, իսկ ունկնդիրք միշտ և ճրի:

**110.** Ունկնդիրք պարտաւոր են իրրեւ աշակերտ հասզանդիլ բարեկարգութեան կանոնաց, բայց իրենց դաս չի հարցուիր և քննութիւն չըլլար:

**111.** ա. Կանոնաւոր աշակերտը դպրոցի Հոգաբարձուէն ընդունելութեան արտօնագիր ունենալու են:

բ. Զունեորները ճրի կընդունուին և իցենց դասական սիմոնը ճրի կը հոգացուի. իսկ կարողները շափառը ըսշակ կը վճարեն:

**112.** Այցելու Տեսուչք, Հոգաբարձուք և դասական փոյթ տանելու են որ կանոնաւոր աշակերտը չարտակարտը ներկայ գտնուին դասերուն:

**113.** ա. Կիրակնօրեայ և Երեկոյեան վարժարանաց մէջ դաս տալ կրնան Հոգաբարձուաց հաւանութեամբ:

առեն անոնք որ բարի վարուց տէր են և իրենց տալիք դասին պահանջած հմտութիւնն ունին :

բ. Այցելու Տեսուչք և Հոգարարձուք մէկ կողմէն մասնաւոր անձանց կամ ընկերութեանց յորդոր կը կարդան որ այդ վարժարաններուն մէջ ձրի դասախոսութիւն ընել յանձն առնուն, միւս կողմէն դպրոցաց վարժապետները և վարժուհիները կը քաջազերեն առ այդ ի հորկին մասնաւոր վարձատրութիւն տալով անոնց :

գ. Այդ վարձատրութիւնը պէտք է աշակերտաց թուոյն և անոնց յառաջադիմութեան աստիճանին համեմատ ըլլոյ :

**114.** Այցելու Տեսուչք, դպրոցաց Հոգարարձուք և Տեսուչ—վարժապետք միանգամայն և Կիրակնօրեայ և Երեկոյեան վարժարանաց հսկողութիւնը, Հոգարարձութիւնը և տեսչութիւնը կը վարեն :

**115.** Օրինաց միւս յօդուածոց տրամադրութիւնները, որք այն Գլխաց յօդուածոց տրամադրութեամբք չեն բարեփոխած, Երեկոյեան և Կիրակնօրեայ վարժարանաց ալ կը վերաբերին :



## ԴԼՈՒԽ 20ՐՐՈՐԴ



### ԹԱՂԱՑԻՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆՔ



#### ԴՐԱԽՈՒՆՔ ԵՒ ՊԱՐՏԻՔՅԹԱՂԻՆ

1. Պայմանը նիմնարկութեան, շենք եւ այլ պիտոյք

**116.** ա. Կիրականչիւր թաղի Թաղային Ժողովը կորոշէ թաղին մէջ հիմնուելիք Ռւսումնարանին աստիճանը (Յօդ. 425 և 432) և Կեդրոնական կամ Գաւառական Կրթական Տեսչութիւնը կը վաւերացնէ :

բ. Թաղային Ժողովը հիմնուելիք Ռւսումնարանի մասն շրած որոշմանը հետ պէտք է ներկայէ Գաւառական կամ Կեդրոնական Կրթական Տեսչութեան և անոր արկդի վիճակին ու տարեկան պիտման :

**117.** ա. Ռւսումնարան կրնան հիմնել Ելմու կամ աւելի թաղ միանալով :

բ. Այդ պարագային մէջ Թաղային Ժողովք պէտք է միացեալ նիստ ընելով իրագանչիւր թաղի՝ Ռւսումնարանի արկդին վճարելիք գումարը որոշեն, Հագարարձուի ընտրութիւնն ընեն, Ռւսումնարանի համար յարմարագոյն թաղը որոշեն՝ չէնդին յորմարութիւնն ու աշակերտաց Երթևեկութեան դիւրութիւնն նկատի առնով, և իրենց որոշումները Կեդրոնական կամ Գաւառական Տեսչութեան ներկայեն ի քննութիւն և ի վաւերացում :

**118.** Թաղ մը որ Բարձրագոյն դպրոց (Յօդ. 68) չունի կամ թէւ ունի բայց Օրինաց պահանջած վիճակին մէջ չէ՝ չի կրնար Ստորին Ռւսումնարան (Յօդ. 425) հիմնել, և թաղ մ'որ Ստորին Ռւսումնարան չունի կամ ունեցածը Օրինաց պահանջած վիճակին մէջ չէ՝ չի կրնար Միջին Ռւսումնարան հիմնել (Յօդ. 432) :

**119.** ա. Ստորին Ռւսումնարան չի կրնար հիմնուիլ թաղի մը կամ միացեալ թաղից մէջ՝ եթէ ասպահովագէս գէթ 20 աշակերտ կամ աշակերտուհի չի գտնուի, յարմար չէնք, կոհէ և սահմանեալ օժանդակ միջացները հսկացուած շըլլան և Ռւսումնարանի դոցութիւնը գէթ մէկ շրջանի համար ասպահոված չըլլաց :

բ. Նմանապէս Միջին Ռւսումնարան չի կրնար հիմնուիլ առանց նախընթաց պայմաններուն գործադրութեանն ու առնուազն 30 աշակերտ ունենալու :

գ. Եթէ աշակերտաց թիւը երթալով նուազի՝ ուսումնարանը կը գոցուի Գաւառական կամ Կեդրոնական Կրթական Տեսչութեան որոշմամբը :

**120.** Եթէ Թաղային Ժողով մը՝ նախընթաց 118 և 119 յօդուածոց տրամադրութեանց հակառակ վարուի կամ եթէ բաւական հսկայթ ունենաց՝ բայց անփայթ գրանուի Ռւսումնարան հիմնելու՝ Օրինաց 27դ յօդուածին տրամադրութեանցը ներփե կիյնայ :



## Հ 2. ԴՐԱԽՈՒՆՔՆԵՐԸ

**121.** Ռւսումնարանը իրեն յատակէնաստատուն եւ կամուտ չունենար, այլ Թաղային դպրոցի հաստատուն եւ բամատի (Յօդ. 36) հսկայթէն բաժինն կատանայ, զոր Թաղային Ժողովը կորոշէ և Գաւառական կամ Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը կը վաւերացնէ :

**122.** ա. Աւսումարտնը իր յատուկ արկղը կունենայ, որուն աղբիւրներն են

1. Դպրոցի հաստատուն եկամտի հասոյթէն արքուած բաժինը .

2. Աշակերտաց թոշակներն ու տուրքերը (Յօդ. 147 ա.) .

3. Ընկերութեանց կամ մասնաւոր անձանց նըստատներն ու նուէրները .

4. Թաղային Անտուկէն կամ Անտուկներէն արքուած նպաստը .


5. Դաստիան սիխոցից վաճառմանէ գոյացած հասոյթը .

6. Աւսուցչաց վճարած տուգանքները .

7. Տարեկան հանգանակութենէ գոյացած հասոյթը :

Բ. Եթէ նշանակուած 1—6 միջոցները բաւական չըլլոն Աւսումարանին ծախքը գոցելու՝ տարին անգամ մը ընդհանուր հանգանակութիւն կրկայ թաղին կամ թաղերուն մէջ Թաղային ժողովց կամ ժողովոց որոշմանը :

Գ. Աւսումարանի հասոյթին իր ծախրէն աւելցուծ մասը Թաղային դպրոցի հաստատուն եկամտին վրայ կը բարդուի :



### ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ, ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ



1. ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՆՊԱՏԱԿԻ, ՈՒՍՄԱՆՑ ՆՐԱԳԻՐՔ  
ԵՒ ՄԻԶՈՑՔ

**123.** Թաղային Աւսումարաններն երկու աստիճանի կը բաժնուին — Ստորին և Միջին :

( Սուբին Ռուսական )

**124.** Ստորին Աւսումարանի նպաստակն է Բարձրագոյն դպրոցի տուած ընդհանուր կրթութիւնը ընդառակել և միանգումայն աշակերտները Միջին Աւսումարան մտնելու սլատրաստել :

**125.** ա. Ստորին Աւսումարանը 3 տարուան չըրջան և 3 կարգ կունենայ :

բ. Արտօնութիւն կը տրուի Կեղլոնական կրթական

Տեսչութեան ի պահանջել հարկին գործնական դասարան մը յաւելու զիմաւորապէս աշակերտաց համար :

գ. Գործնական դասարանին ընթացքը կրնայ մէկ ու կէս տարի տևել Կեղլոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան որոշմամբն :

դ. Գործնական Դասարանին նպատակն է Գործնական կեանքի պահանջած անհրաժեշտ հմտութիւնն հազրութել :

**126.** Ստորին Աւսումարանի Ա. Բ. և Գ. կարգաց մէջ աւանդուելիք ուսմունքն են՝

1. Կրօնագիտութիւն .

2. Բարոյագիտութիւն .

3. Հայերէն աշխարհիկ և գրոց լեզու և գրադիտութիւն .

4. Տաճերէն, Ֆրանսերէն և Անգլիերէն .

5. Հիմնական սկզբունք Ընդհանուր Պատմութեան և Ազգային Պատմութիւն .

6. Աշխարհագրութիւն — Ընդհանուր, Հայատանի և Տաճկաստանի .

7. Քանակագիտութիւն — թուարանութեւն, զրահաշիւ, երկրաչափութիւն և սկզբունք գործնական մերենարանութեան .

8. Տոմարակալութիւն և վաճառականական գըրութիւնք .

9. Գլխաւոր սկզբունք բնական գիտութեանց ( բնագիտութիւն, տարրարանութիւն, բնական սրատմութիւն ) .

10. Կադմութիւն Օսմանեան և Ազգային Վարչութեան .

11. Գեղագրութիւն, գծագրութիւն և գեղազծութիւն .

12. Զայնական երաժշտութիւն . մարմնամարզ .

13. Տնտեսութիւն եւ ձեռագործ ( աղջկանց ) .

**127.** ա. Աղջկանց համար սպարտաւորիչ չեն Տաճերէն, վաճառականական գրութիւնք, երկրաչափութեան գործնական կրթութիւնք և մերենարանութիւն :

բ. Բողը միւս ուսմունք սպարտաւորիչ են թէ աղջկանց և թէ տղացօց համար : Արտարոյ կարգի բացառութիւնք կը լլան վատառողջութեան պատճառաւ :

**128.** Ստորին Աւսումարանի գործնական կարգին մէջ պէտք է աւանդուին

1. Կրօնք և բարոյագիտութիւն — Կրկնում Գ. կարգի ընթացքին .

2. Հայերէն — նոյնալէս .
3. Օտար լեզուք — չարունակութիւն .
4. Սկզբունք Գործնական Արտեստարանութեան կամ Երկրագործութեան .
5. Համարակալութիւն և առևտրական գրութիւնք . Սկզբունք վաճառագիտութեան . Առևտրական թուարաթիւն .
6. Գրահաշիւ . Գործնական Երկրաչափութիւն . սկզբունք Գործնական Մեքենարանութեան .
7. Ընդհանուր Պատմութիւն — կը կնում՝ Գ. կարգի ընթացքին և հիմնական ծանօթութիւնն վաճառականութեան և ճարտարութեանց պատմութենէն .
8. Աշխարհագրութիւն — նոյնալէս , և վաճառական , ճարտարական և Երկրագործական աշխարհագրութենէն հիմնական ծանօթութիւն .
9. Հիմնական սկզբունք քաղաքացին , առևտրական և ճարտարական իրաւանց .
10. Հիմնական սկզբունք Տնտեսագիտութեան և Վիճակագրութեան .
11. Երկրաչափական և ճարտարական գծագրութիւն . Հաղագրութիւն .
12. Բնական գիտութիւնք — կը կնում և ընդամակում Գ. կարգի ընթացքին և գիտաւոր կիրառութիւնք .
13. Զայնական երաժշտութիւն և մարմնամարզ .
14. Տնտեսութիւն և ճեռագործ (աղջկանց) :

**129 ա.** Երկրագործական կողմերը Արտեստարանութեան տեղ Երկրագործութիւն կաւանգուի . իսկ միւս ուսմունք երկու ճիւղի կը բաժնուին — վաճառականական և ճարտարական :

Բ. Երաբանիչուր ճիւղի աշակերտք սրբարտաւոր և նոյն ճիւղի բոլոր դասերուն հետևելու . բացառութիւնք կը լինի հաւանութեամբ :

**130 ա.** Եթէ գործնական կարգի իւրաքանչիւր ճիւղին հետևող առնուազն 10 աշակերտ չըլլայ՝ նոյն ճիւղին յափկացեալ դասերը չեն աւանդուիր .

Բ. Նմանապէս Եթէ բոլոր աշակերտաց թիւը 15 էն նուազ ըլլայ՝ Գործնական Դասարան չի բացուիր :

(Միջն Ռազմական)

**131 ա.** Միջին ռազմարանի նպատակն է 1. ընդհանուր կրթութիւն տալ . 2. վաճառականութեան և

ճարտարութեանց վերաբերեալ միջին աստիճանի հմտութիւնք հաղորդել և 3. բարձրագոյն մասնագիտական վարժարանաց համար պատրաստել :

Բ. Միջին Ռազմարանը զիմաւրապէս աշակերտաց համար է :

**132 ա.** Միջին Ռազմարանը 6 առարուան շրջան և 6 դասարան սնի , յորոց 3 ը Ստորին Ռազմարանի կարգաց կը համապատասխանեն (Յօդ. 125) :

Բ. Միջին Ռազմարանը հինգերորդ կարգէն սկըսեալ երկու ճիւղի կը բաժնուի — Վաճառականական և Ճարտարական , և ոյս վերջինը երկու ոտորաբաժանում կունենայ՝ Քանակագիտուկան և Տարրաբանական :

Գ. Արտօնութիւն կը տրուի Կեղրոնական կրթական Տեսչութեան Ճարտարական ճիւղի վերջին դասարանին ընթացքը մէկ ու կէս տարի ընել՝ եթէ հարկը պահանջէ :

**133.** Միջին Ռազմարանի մէջ կուանդուին

1. Կրօնագիտութիւն . — Համառօտ պատմութիւն Հայաստանեաց եկեղեցւոյ և ընդհանուր եկեղեցական պատմութենէն կարեորագոյն գիտելիք .

2. Հայերէն . — Աշխարհիկ և զրոց լեզու և պատմութիւն զրականութեան .

3. Տաճկերէն , Ֆրանսերէն , Անգլիերէն և Գերմաներէն լեզուք և զինաւոր ծանօթութիւնք նոյն լեզուաց զրականութեան պատմութենէն .

4. Ընդհանուր և Ազգային պատմութիւն .

5. Ընդհանուր աշխարհագրութիւն իր ճիւղերով . — Վարչական և Առևտրական աշխարհագրութիւն Տաճկատուանի . — Տիեզերագրութիւն .

6. Քանակագիտութիւն . — Ընդհանուր թուարանութիւն և դրահաշիւ . — Երկրաչափութիւն իր ճիւղերով . — Դործնական Երկրաչափութիւն . — Սկզբունք տեսական և գործնական մեքենարանութիւն .

7. Սկզբունք բնագիտութեան , տարրաբանութեան , Երկրաբանութեան , հանգարանութեան , բուսաբանութեան , կենդանաբանութեան և կիրառութիւնք Երկրագործութեան , ճարտարապետութեան և առողջաբանութեան մէջ . — Տարրաբանական արուեստարանութիւն .

8. Համարակալութիւն և գործնական կը թուարութիւնք . — Վաճառապիտութիւն և գիտութիւն վաճառականութեան . — Համառօտ պատմութիւն վաճառականութեան .

9. Սկզբունք տնտեսագիտութեան (Երկրա-

դրժական , ճարտարական , առևտրական ) և վիճակաբան :

10. Սկզբունք իրաւագիտութեան (քաղաքային, ճարտարական , առևտրական և վարչական ) . — Օսմանեան և Ազգային վարչութիւն .

11. Գծադրութիւն երկրաշափական և ճարտարական . — Գեղագծութիւն . — Գեղագրութիւն .

12. Զայնական երաժշտութիւն . — Մարմնամարզ

**134.** ա. Խրաբանչիւր ճիւղի աշակերտք պարտատառը են իրենց ճիւղին բոլոր ուսմունքը ուսանելու : Արտաքոյ կարգի բացառութիւնք կը լան վաստառողջութեան պատճառաւ :

բ. Օտար լեզուներէն միայն երեքը ոլարտաւորիչ են :

**135.** ա. Եթէ ճիւղի մը հետեւող աշակերտաց թիւը 15 էն նուազ ըլլայ՝ նոյն ճիւղին յատկացեալ դասերը չեն աւանդուիր :

բ. Նմանապէս եթէ ճիւղի մը ստորաբաժանման հետեւող աշակերտաց թիւը 10 էն նուազ ըլլայ՝ նոյն ստորաբաժան յատկացեալ դասերը չեն աւանդուիր :

**136.** ա. Կեդրոնական կրթական Տեսչութիւնը կը գծէ Ուսումնարանաց մէջ աւանդուելիք ուսմանց ընդհանուր ծրագիրները և կորոշէ դասազրբերն ու այլ դասական ընդհանուր և մասնաւոր միջոցները (Տես 72 ա.) :

բ. Կրօնական ուսմանց ծրագիրն ու միջոցները կրօնական Խորհրդականը կը սահմանէ :

գ. Կեդրոնական կրթական Տեսչութեան արտօնութիւն կը տրուի ի սրահանջել հարկին ուսմունք աւելցնել կամ սրահանջել , ինչպէս և ճիւղերու կազմութեան մէջ վախճանութիւն ընել (Տես 72 բ.) :

**137.** ա. Տեսուչը ուսուցչաց խորհրդին (Յօդ. 243) գործակցութեամբը կը շինէ ամէն երեք ամիս իր ուսումնարանի ուսմանց դասերու բաշխման ցուցակը , որ պէտք է ցոյց տայ ուսումնարանի խրաբանչիւր աւոր և ժամուղավանց կարգը :

բ. Երկանու ուսումնարանաց դասերու բաշխումը սյնպէս պէտք է ըլլայ որ աղջկանց համար սրարտաւորիչ չեղող կամ անկարեւոր դասերը անոնց ձեռագործի , անտեսութեան և մարմնամարդի զբաղած միջոցին տեղի ունենան :

**138.** Օրինաց 80 և 81 յօդուածոց տրամադրութիւնները երկանու ուսումնարանաց ու կը վերաբերին :

**139.** Ուսումնարանաց գաստիսութեան ընդհանուր լեզուն Հայերէն է , բայց Ստորին ուսումնարանի Գ. և Գործնական Գաստիսութիւնն և Միջին ուսումնարանի բոլոր կարգաց մէջ քանի ուր դաս կրնայ ուսոր լեզուու տառնդուիլ հաւանաթեամբ Կեդրոնական կամ Գատառական Կրթական Տեսչութեան :

## 2. ԿՈՉՄՈՒԹԻՒՆ ԿԱՐԳԱՑ

**140.** ա. Եթէ Ստորին ուսումնարանի գաստիսութիւն աշակերտաց թիւը 30ը անցնի և հաւանական ըլլայ թէ երթալով աւելի պիտի շատնայ՝ աշակերտք զուգընթաց գաստիսութերու կը բաժնուիրն : Այդ բաժանումը պէտք է տեղի ունենայ մանոււանդ Գործնական գաստիսութիւնն անցնի :

բ. Միջին ուսումնարանաց մէջ այդ բաժանումը տեղի կունենաց երբ դաստիսութիւն մը օտար լեզուաց հետեւող աշակերտաց թիւը 25ը և երկրաշափական , տարրաբանական և այլ գործնական կրթութեանց հետեւողներունը 45ը անցնի :

## 3 ԱՇԱԿԵՐՏՏԲ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՏՈՒՀԻՔ

**141.** ա. Ստորին ուսումնարան կը նդունուիրն Բարձրագոյն գպրոցի ուսումնաւարտ աշակերտք և աշակերտուհիք և անոնք որ նոյն գպրոցի ուսմանց ընթացքին քննութիւնը կուտան :

բ. Ստորին ուսումնարանի Գործնական գաստիսութիւնն անցն ուսումնարանի ուսումնաւարտ աշակերտք և անոնք որ նոյն ուսումնարանի ուսմանց ընթացքին քննութիւնը կուտան :

գ. Միջին ուսումնարան կը նդունուիրն Ստորին ուսումնարանի Գ. կարգի ուսումնաւարտ աշակերտք և աշակերտուհիք պէտք է ներկայեն վարուց և ուսմանց վկացական :

**142.** Բայցի Օրինաց 58 րդ յօդուածի սրահանջած վկացականներէն և արտօնագրէն՝ աշակերտք և աշակերտուհիք պէտք է ներկայեն վարուց և ուսմանց վկացական :

**143.** Ստորին ուսումնարանի Ա. կարգը կը նդունուիրն 12 տարեկանը լրացուցած , իսկ Միջին ուսումնարա-

նի Ա. կարգը կընդունուին 45 տարեկանը լրացուցած աշակերտը և աշակերտուհիք :

**144.** Աշակերտաց ընդունելութիւնը տեղի կունենաց զայրացական տարեգլուխյն սկիզբը : Արտաքոյ կարգի բացառութիւնը կըլլան՝ եթէ դասարանաց կանոնաւոր ընթացքին խանդարում չի պատճառեն :

**145.** Եթէ աշակերտ կամ աշակերտուհի մը երկու տարի կարգ փոխել չի կրնաց առանց հիւանդութեան պատճառի՝ կարձակուի :

**146.** Աշակերտը բացի թոշակէ՝ մուտքի և տարրանական գործարանի զբաղվածաց համար զատ տարք կը վճարեն :

**147.** Թոշակաց և տրոց աստիճաններն ու քանակութիւնը թաղացին ժողովը, իսկ իւրաքանչիւր աշակերտէ առնուելիք թոշակին ու տարքը Հոգարածուք կորոշեն (Յօդ. 46 և 48) :

**148 ա.** Ազքատ աշակերտը և աշակերտուհիք ձրի կընդունուին :

Բ. Արտաքոյ կարգի բնդունակութիւն և ջանափրութիւն ունեցող ձրիավարժ աշակերտաց և աշակերտուհաց բոլոր պէտքերը ձրի կը հագացուին և՝ եթէ հարկը պահանջէ՝ զբանական նպաստ ալ կը տրուի :

Գ. Հոգարածուք և Այցելու Տեսուչք մասնաւոր խնամք կը տանին պաշտպանեալ աշակերտաց :

**149 ա.** Սոորին ուսումնարանի Գործնական դասարանին և Միջին ուսումնարանի բոլոր կարգաց մէջ երկու սեռէ ունկնդիրք ալ կընդունուին, որք աղատ են միայն իրենց ընտրած մէկ դասին կամ դասերուն հետեւելու, բայց պէտք է նոյն դասին կամ դասերուն պահանջած հմտութիւնն ունենան և բարեկարգութեան բոլոր կանոնաց հնագոնդին իրեւ աշակերտ :

Բ. Ունկնդիրք պէտք է բարի վարուց վկայական ունենան իրենց բնակուծ թաղին Վարչութենէն:

**150.** Ունկնդիրք թոշակ կը վճարեն իրենց հետևած դասերու թուոյն համեմատ :

**151 ա.** Կեղրոնական կրթական Տեսչութիւնն

բառարակելիք բարեկարգութեան կանոնագիրը կորոշէ յանցաւոր աշակերտաց տրուելիք պատիժներն :

Բ. Հոգարածուք և Տեսուչք Ուսուցչաց Ժողովին կործիքն առնելով կրնան ճամբել աշակերտ կամ ունկնդիրքը մը՝ եթէ անոր ներկայաթիւնը աշակերտաց չար օրինակ և անոնց դասարանի կանոնաւոր յառաջաղիմութեան արգելը է :

4. ՔՆՆՈՒԹԻՒՆՔ ԵԽ ԺԱՄԱՆԱԿԱՌՈՒՍՏԱՆ ԵԽ ՊԱՐԱՊՈՑ

**152 ա.** Ուսումնարանաց մէջ բառամեաց, տարեկան և աւարտական բննութիւնը տեղի կունենան : Վառամեաց քննութիւններն Տեսուչքն ու Ուսուցիչք կը կատարեն՝ ի ներկայաթեան Հոգարածուաց կամ անոնց օգնականաց . իսկ տարեկան և աւարտական բննութիւնները կը կատարեն Գաւառական կամ Կեղրոնական Կըրթական Տեսչութենէն կարգեալ Քննիչ Մասնավումը՝ ի ներկայաթեան Ազգացին իշխանութեանց, ծնողաց և ոյլ ազգայնոց :

Բ. Տարեկան քննութիւններն ու կարգախոխութիւնը տեղի կունենան դպրոցական տարեգլուխն (Մայիս) առաջ:

Գ. Վառամեաց և տարեկան քննութիւններէ ետք միմակոցցիներ կը տրուին աշակերտաց, իսկ ուսումնակարտ աշակերտաց վկայագիրներ, որոց մէջ նշանակուած կըլլոյ և ուսմանց համառօտ ծրագիրը :

**153 ա.** Սոորին ուսումնարանի Ա. Բ. և Գ. Կարգաց օրը 5 ժամ դաս կը տրուի, իսկ նոյն ուսումնարանի Գործնական դասարանին և Միջին ուսումնարանի բոլոր կարգաց առ առաւելն 6 ժամ :

Բ. Գարնան և ամսուը կէս օրին 2 ժամ և աշնան ու ձմեռը  $1\frac{1}{2}$  ժամ, ինչպէս և դասերու մէջ ժամը անգամ մը 10 վայրկեան կամ երկու ժամը անգամ մը 15 վայրկեան հանդիսատ կը տրուի :

**154 ա.** Ուսումնարանաց բոլոր տարուան պարագոյ օրերը, բացի սովորական տօնելի օրերէն, կրնան մինչև 10 շաբաթ տեղէ, որք տեղական հանգտամանաց համեմատ տարուան զանազան եղանակներուն վրոյ կը բաժնուին Գաւառական կամ Կեղրոնական Կըրթական Տեսչութեան վաւերացմամբ :

Բ. Կեղրոնական Կըրթական Տեսչութիւնը կրնայ ի պահանջել հարկին սպարագոյ ժամանակը աւելցնել կամ պակսեցնել :

**155.** Օրինաց միւս յօդուածները , որք սոյն Գլխոյ մասնաւոր տրամադրութեամբ չեն բարեփախուած՝ ուսումնարանաց ու կը վերաբերին :

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԳՈՒԱՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՔ



ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

**156.** Կեղրոնական կրթական Տեսչութիւնը իր անմիջական տնօրինութեանը ներքեւ Մայրաքաղաքիս մէջ առ այժմ դէֆ Միջին ուսումնարան մը կունենայ , որոյ տեղն ու հասոյթի ազգիւրները Ազգ ։ Ժողովը կորուէ :

**157.** Կեղրոնական Ուսումնարանի Հոգաբարձուն , Տեսուչն ու Ուսուցիչները Կեղրոնական կրթական Տեսչութիւնը՝ կ'ընտրէ :

**158.** Օրինաց միւս յօդուածները , որք նախնթաց 156 և 157 յօդուածոց տրամադրութեամբք չեն բարեփոխուած՝ Կեղրոնական Ուսումնարանին ալ կը վերաբերին :



ԳՈՒԱՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

**159.** Խորաքանչիւր Գաւառագլուխ կունենայ ըլտորին կամ Միջին ուսումնարան մը , որ Գաւառական կրթական Տեսչութեան անմիջական տնօրինութեանը ներքեւ կը դանուի :

**160 ա.** Գաւառական Ժողովը Գաւառական Վարչութեան եւ Գաւառ . Կրթական Տեսչութեան կարծիքն առնելով կ'որոշէ Ուսումնարանի տեղն ու հասոյթի աղբւրները եւ իր որոշումը Կեղրոնական կրթական Տեսչութեան բննութեանն ու վաւերացմանը կը ներկայէ :

Բ. Ուսումնարանի տեղն ու շէնքը պէտք է իր նըալատակին յարմար ըլլայ եւ աշակերտաց երթեւեկութեան դիւրութիւն ընծայէ :

**161.** Աշակերտաց ընդունելութեան պայմաններուն , մուտքի տրոց եւ թոշակաց վերաբերեալ մասնաւոր կանոնագիրը պէտք է Կեղրոնական կրթական Տեսչութեանէն վաւերանայ :

**162.** Ուսումնարանի Տեսուչն ու ուսուցիչները Գաւառական կրթական Տեսուչը կ'ընտրէ , իսկ Հոգաբարձուն Գաւառական Ժողովը :

**163.** Օրինաց միւս յօդուածները , որք սոյն Մասին մասնաւոր տրամադրութեամբք չեն բարեփախուած , Գաւառական ուսումնարանաց ալ կը վերաբերին :



## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ , ՈՐՈՅ ԿՈԶՄՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅ ՕՐԻՆՈՒՅ ԶԵ ԱԱՀՄԱՆՈՒՅ



ՎԱՆԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆՔ

**164.** Վանական Միաբանութեանց վարժարանաց կրօնական ուսմանց ծրագիրն ու միջոցները պէտք է կրօնական Խորհրդականին , իսկ միւս ուսմանցը , ինչպէս և վարժարանաց կազմութեան և բարեկարգութեան կանոնագիրը՝ Կեղրոնական կրթական Տեսչութեան վաւերացմանը ենթարկուին :

**165.** Վանական Միաբանութեանց վարժարանները Կեղրոնական և Գաւառական կրթական Տեսչութեանց հսկողութեանը ներքեւ են :

**166.** Սոյն վարժարանաց վարժապետք պէտք է Օրինաց սահմանած Արտօնագիրն ունենան (Յօդ. 297, 298, 300, 301, 306 Ա—Ե) :

**167.** Վանական Միարանութիւնը պէտք է ամէն տարի իրենց վարժարանաց հաշխները Կեղրոնական Կըրթական Տեսչութեան վաւերացնել տան և միանգամայն անոնց վիճակին վրայ տեղեկագիր ներկայեն անոր համաձայն Օրինաց [Տես Յօդ. 349] :

**168.** Եթէ Վանական Միարանութիւն մը նախընթաց 164—167 յօդուածոց տրամադրութիւններուն հակառակ վարուի՝ Կեղրոնական Կրթական Տեսչութիւնը մէկ տարուան մէջ երեք ազդարարութիւն ընելէ ետք՝ ինդիրը Աղդ. Ֆողովոյ կը ներկայէ :



#### ԲԱՐԵԴՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ

**169.** Բարեգործական են ամէն այն կրթական հաստատութիւնք՝ որոց ծախորը ամբողջ կամ մասամբ կրտակաց եկամուտով, բարերար անձանց դրամովը, հանգունակութեամբ, նուէրներով կամ այլ հասարակաց հասոյթներով կը հսկացուին :

**170.** Օրինաց 164—167 յօդուածները Բարեգործական վարժարանաց աւ կը վերաբերին :

**171.** Այն բարերար անձինք կամ ընկերութիւնք՝ որք իրենց հիմնած կրօնական հաստատութեանց բոլոր ծախորերը իրենց սեփական դրամովը կը հսկան՝ պարտական չեն հաշխւ ներկայելու :

**172.** Եթէ Բարեգործական հաստատութեանց Վարչութիւնք Օրինաց 164—167 յօդուածոց հակառակ վարուին կամ նոյն հաստատութիւնները բարեկարգ վիճակի մէջ պահելու անփոյթ ըլլան՝ Կեղրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան կողմէն մէկ տարուան մէջ երեք ազդարարութիւն ընդունելէ ետք՝ անվատահելի կը հրատարակուին և Օրինաց 319րդ յօդուածին տրամադրութեան ներքե կ'ըյնան :

**173.** Նախընթաց յօդուածի տրամադրութիւններէն զերծ են 171 յօդուածին մէջ նշանակուած բարերար անձինք և ընկերութիւննք :



#### ՄԱՍՆԱԿՈՐ ՎԱՐԺԱՐԱՆՔ

**174. ա.** Մասնաւոր են այն վարժարանները զորս մասնաւոր անձինք կամ ընկերութիւննք կը հաստատեն իրենց սեփական հաշւոյն :

**բ.** Մասնաւոր վարժարանաց Աղդային միւս վարժարաններէն ունեցած տարբերութիւնն այն է որ մատակարարութեան մասին Աղդային իշխանութեանց պատասխանատու չեն բնաւ և ձրի աշակերտ ընդունելու պարտականութիւն չունին :

**175.** Ամէն մասնաւոր անձ՝ որ իր բնակած թաղէն կամ թաղերէն բարի վարուց վկայական և Օրինաց ողահանջած Արտօնագիրն ունի և ամէն մասնաւոր ընկերութիւն որ Կեղրոնական Կրթական Տեսչութեանէն վաւերացած է՝ կրնայ վարժարան հիմնել, բայց պէտք է անոր ուսմանց ծրագիրն Գաւառական կամ Կեղրոնական Կըրթական Տեսչութեան վաւերացնել տայ, անոնց հակողութիւնն ընդունի և տարին անգամ մը տեղեկագիր ներկայէ ըստ սահմանեալ կանոնաց :

**176.** Մասնաւոր վարժարանաց վարժապետք և վարժուհիք պէտք է Օրինաց սահմանած Արտօնագիրն ունենան (Յօդ. 297, 298, 300, 301, 306 Ա—Ե) :

**177.** Այն մասնաւոր անձինք և ընկերութիւնք՝ որ նախընթաց 175 և 176 յօդուածոց հակառակ կը վարուին կամ իրենց վարժարանը բարեկարգ վիճակի մէջ չեն պահեր՝ Գաւառական կամ Կեղրոնական Կրթական Տեսչութեանէն մէկ տարուան մէջ երեք ազդարարութիւն ընդունելէ ետք՝ անվատահելի կը հրատարակուին :



## ՄԱՍՆ ՀԱՐՐՈՐԴ

ԿՐԹԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵԱՅՔ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ա.

ԴՊՐՈՑԱՑ ՊԱՇՏՈՆԵԱՅՔ

## 1. ՏԵՍՈՒՉ-ՎԱՐԺԱՊԵՏՔ ԿԱՄ ՎԱՐԺՈՒՀԻՔ

**178** ա. Միայն մէկ վարժապետ կամ վարժուհի գտնուած դպրոցներուն մէջ նոյն վարժապետք կամ վարժուհիք կը վարեն միանդամայն անոնց ներքին տեսչութեան պաշտօնը : Խոկ մէկէն աւելի պաշտօնեայ դառնուած դպրոցներուն մէջ նոյն պաշտօնը անոնցմէ մէկուն կը յանձնուի :

բ. Տեսուչ-վարժապետք կամ վարժուհիք բաց ի տեսչութեան պաշտօնէն միանդամայն իրենց յանձնուած կարգին կամ կարգերուն դասերը կուտան :

գ. Տեսչութեան պաշտօնին յատկանալիք ժամանակը չոգաբարձուք կ'որոշեն՝ Այցելու Տեսչաց կարծիքն առնըլով :

**179** ա. Տեսուչ-վարժապետին ստորագրեալ եւ պատասխանատու են վարժարանի բոլոր միւս պաշտօնեայք :

բ. Վարժապետք եւ վարժուհիք սկարտաւոր են ամէն բանի մէջ Տեսուչ-վարժապետին կամ վարժուհուոյն օգնելու :

**180** ա. Տեսուչ-վարժապետը պէտք է վարժապետաց կամ վարժուհեաց կարծիքն առնու Դպրոցի բարեկարգութեան վերաբերեալ խնդրոց մասին եւ զանոնք զէթ ամիսը անդամ մը ի խորհուրդ գումարէ :

բ. Վարժապետք կամ վարժուհիք թէեւ համամիտ չըլլան Տեսուչ-վարժապետին՝ պարտաւոր են ճշդիւ գործադրել անոր հրահանդները :

գ. Սոցա եւ Տեսուչ-վարժապետին, ինչպէս եւ սուրա եւ չողաբարձուին մէջ ծագած անհամաձայնութիւնները Այցելու Տեսուչը կը քննէ . բայց վերջնական վընդիու կեղրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան կը պատկանի :

**181.** Տեսուչ-վարժապետաց պաշտօնն է վարժարանաց բարեկարգութեան եւ ընթացքին անմիջական հրակողութիւնը եւ հասուատեալ թրինաց, ծրագրաց եւ կանոնաց եւ բարձրագոյն իշխանութեանց տուած հրահանդաց անթերի գործադրութիւնը : Խրենց զլիսաւոր պարտականութիւնքն են ամէն ջանք ի գործ դնել որ աշակերտք կանոնաւոր կերպով դպրոց յաճախեն, լաւ վարք ունենան եւ ուսմանց մէջ յառաջադիմնն. հսկել որ վարժապետք իրենց պաշտօնը խղճի մտօք կատարեն, հոգ տանիլ որ դպրոցին եւ աշակերտաց պիտոյքը ժամանակին հոգացուին . դպրոցատեղիքը եւ բոլոր գոյքը, ինչպէս եւ աշակերտք եւ անոնց դասական առարկաները՝ միշտ պատշաճաւոր եւ մաքուր վիճակի մէջ ըլլան :

**182.** Տեսուչ—վարժապետք երեք ամիսն անդամ մը ցուցակածեւ տեղեկագիր կը ներկայեն Այցելու Տեսչաց, որուն պարունակելիք տեղեկութիւնքն ու ձեւը կեղրոնական կրթական Տեսչութիւնը կը սահմանէ :

**183** ա. Ստորին՝ դպրոցի Տեսուչ-վարժապետ կը բնան ըլլալ անոնք որ առ նուազն 24 տարեկան են եւ զէթ Ստորին դպրոցի վերջնական ընդհանուր արտօնագիր ունին (Յօդ. 297, 300, 306 Բ.) : Ստորին դպրոցի Տեսուչ-վարժուհի կրնանը ըլլալ նոյն պայմաններով անոնք որ առնուազն 18 տարեկան են :

բ. Բացառութիւն. — Ստորին փոքր, այսինքն 25էն նուազ աշակերտ ունեցող դպրոցաց Տեսուչ-վարժապետ կամ վարժուհի կրնան ըլլալ անոնք որ Ստորին դպրոցի առժամանակեայ ընդհանուր Արտօնագիր ունին (Յօդ. 301 եւ 306 Բ.) :

**184.** Բարձրագոյն դպրոցի Տեսուչ-վարժապետ կրնան ըլլալ անոնք որ 23 տարեկան են եւ զէթ Բարձրագոյն դպրոցի վերջնական ընդհանուր Արտօնագիր ունին (Յօդ. 297, 300, 306 Գ.) Բարձ. դպրոցի Տեսուչ-վարժուհի կրնան ըլլալ նոյն պայմաններով անոնք որ 20 տարեկան են :

**185** ա. Տեսուչ-վարժապետաց կամ վարժուհեաց ընտրութիւնը դպրոցի չողաբարձուք կը նեն Այցելու Տեսչաց կարծիքն առնելով :

բ. Թաղային ծողովք կրնան Տեսուչ—վարժապետաց կամ վարժուհեաց, ինչպէս եւ վարժապետաց եւ վարժուհեաց ընտրութիւնն կամ անոր վաւերացումը իրենց վերապահել :

## 2. ՎԱՐԺԱՊԵՏՔ ԿԱՄ ՎԱՐԺՈՒՀԻՔ

**186.** Ստորին դպրոցի վարժապետ կրնան ըլլալ անոնք որ առնուազն 18 տարեկան են եւ Ստորին դպրոցի առժամանակեայ ընդհանուր Արտօնագիր ունին . (Յօդ. 297, 301 եւ 306 Բ.) իսկ վարժուհի կրնան ըլլալ նոյն պայմանով անոնք որ առնուազն 16 տարեկան են :

**187.** Բարձրագոյն դպրոցի վարժապետ կրնան ըլլալ անոնք որ առնուազն 20 տարեկան են եւ Բարձրագոյն դպրոցի առժամանակեայ ընդհանուր Արտօնագիր (Յօդ. 297, 301 եւ 306 Գ.) ունին . իսկ վարժուհի կրնան ըլլալ նոյն պայմանով անոնք որ առնուազն 18 տարեկան են :

**188.** Վարժապետաց եւ վարժուհեաց ընտրութիւնը Հոգաբարձուք կրնեն Տեսուչ վարժապետին կամ վարժուհոյն ու Այցելու Տեսչին կարծիքն առնլով . (Յօդ. 185 Բ.)

**189 ա.** Վարժապետաց եւ վարժուհեաց ոռնիկը Հոգաբարձուք կորոշեն տեղական կեանքի պայմաններուն եւ իւրաքանչիւրին Արտօնագրի աստիճանին համեմատ : Հոգաբարձուք պարտաւոր են աշխատանքը ըստ արժանոյն եւ արդարութեամբ վարձատրելու սկզբունքէն չի շեղիւ :

Բ. Թաղային ծողովք կրնան վարժապետաց եւ վարժուհեաց , ինչպէս եւ Տեսուչ-վարժապետաց կամ վարժուհեաց ոռնիկի որոշումը կամ անոր վաւերացումը իրենց վերապահել :

**190.** Կեղրոնական կրթական Տեսչութիւնը ոռնիաց մասին հիմնական կանոնագիր մը կը հրատարակէ եւ անոր սկզբանցը հակառակ կնքուած պայմանք առ ոչինչ կը համարուին :

**191.** Վարժապետք եւ վարժուհիք օգնական-աշակերտաց կամ աշակերտուհեաց (Յօդ. 238) տուած առանձին դասերնուն համար մասնաւոր վարձատրութիւն պէտք է ստանան :

**192 ա.** Վարժապետք եւ վարժուհիք իրենց ոռնիկէն զատ կստանան դպրոցի մնատուկէն աշակերտ զըւուի ի դաւառ ամիսը 2 զուրուշ եւ ի Պօլիս 3 դրչ : Մէկէն աւելի վարժապետ եղած տեղերը այդ հասոյթը կը

բաժնուի մէջերնին իւրաքանչիւրին աշխատութեան ժամբուն համեմատութեամբ :

Բ. Այս մասին վարժապետաց մէջ ծագած անհամաձայնութիւնը Հոգաբարձուն կը լուծէ , որոյ վճռոյն դէմ կրնայ դժգոն կրղմը բողոքել կեղրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան :

## 3. ՕԳՆԱԿԱՆ-ՎԱՐԺԱՊԵՏՔ ԿԱՄ ՎԱՐԺՈՒՀԻՔ

**193 ա.** Ստորին դպրոցի օգնական-վարժապետ կամ վարժուհի կը լլան անոնք որ Բարձրագոյն դպրոցի եւ Մանկավարժական դասարանաց ուսմանց ընթացքը աւարտած կամ նոյն դպրոցի եւ դասարանաց ընթացքին քննութիւնը տուած եւ վիայագիր առած են , բայց դեռ 0րինաց պահանջած տարիքը (Յօդ. 186) չունենալնուն սահմանեալ Արտօնագիրը չեն ստացած (Յօդ. 306 Բ.) :

Բ. Ստորին դպրոցի օգնական-վարժապետք պէտք է առ նուազն 16 տարեկան , իսկ օգնական-վարժուհիք 14 տարեկան ըլլան :

**194 ա.** Բարձրագոյն դպրոցի օգնական-վարժապետ կամ վարժուհի կրնան ըլլալ անոնք որ Ստորին ուսումնարանի եւ Մանկավարժական դասարանի ուսմանց ընթացքը աւարտած կամ նոյն ընթացից քննութիւնը տուած եւ վիայագիր առած են , բայց դեռ 0րինաց պահանջած տարիքը (Յօդ. 187) չունենալնուն սահմանեալ Արտօնագիրը չեն ստացած (Յօդ. 806 Գ.) :

Բ. Բարձրագոյն դպրոցի օգնական-վարժապետք պէտք է առնուազն 18 տարեկան , իսկ օգնական-վարժուհիք 16 տարեկան ըլլան :

**195.** Օգնական-վարժապետաց կամ վարժուհեաց ընտրութիւնը կրնեն եւ ոռնիկը կը նշանակեն Հոգաբարձուք (Յօդ. 189 ա եւ 190) Տեսուչ-վարժապետաց կամ վարժուհեաց կարծիքն առնլով :

**196.** Օգնական վարժապետք կամ վարժուհիք միայն մէկ տարուան համար կը նարաւին :

**197.** Օգնական-վարժապետք կամ վարժուհիք ըստրադրեալ եւ սկատասխանատու են այն վարժապետաց կամ վարժուհեաց , որոց անմիջական հակողութեանն ու առաջնորդութեանը ներքեւ օգնական դասատութիւն կրնեն :

## 4. ՕԳՆԱԿԱՆ-ԱՇԱԿԵՐՏՔ ԿԱՄ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՔ

**198.** Ստորին դպրոցաց մէջ ծաղկոցի դաստիարակուհւոյ կամ դաստիարակի պաշտօնին պատրաստուող եւ նարձրագոյն դպրոցաց մէջ Ստորին դպրոցի վարժապետի կամ վարժուհւոյ պաշտօնին պատրաստուող աշակերտք կամ աշակերտուհիք միանգամայն իրեւ օգնական-աշակերտք կամ աշակերտուհիք կը գործածուին նոյն դպրոցաց մէջ ( Յօդ. 238 ) :

**199 ա.** Միայն մէկ վարժապետ կամ վարժուհի գտնուած Ստորին գորոցաց մէջ Դ. կարգի աշակերտներէն կամ աշակերտուհիներէն յարմարագոյնները կրնան իրեւ օգնական գործածուիլ :

Բ. Այցելու Տեսուչը եւ Հոգաբարձուք հսկելու են որ նոյն աշակերտք իրենց կարգի դասերէն չի զրկուին եւ վարժապետք կամ վարժուհիք անոնց մատուցած ծառայութեանը փոխարէն առանձին դասեր տան անոնց ( Յօդ. 194 եւ 240 գ. ) :



## ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՅ ՊԱՇՏՈՆԵԱՅՔ

## 4. ՏԵՍՈՒՀ ԵՒ ՓՈԽ-ՏԵՍՈՒՀ

**200 ա.** Խւրաքանչիւր ուսումնարան ներքին Տեսուչ մը կունենաց՝ որ կրնայ միանգամայն ուսուցչութեան պաշտօն վարել :

Բ. Աղջկանց ուսումնարաններու մէջ տեսչութեան պաշտօնը կրնայ ուսուցչուց մը յանձնուիլ :

**201 ա.** Տեսուչը ստորադրեալ և պատասխանատուէ Հոգաբարձուին և իրեն ստորադրեալ և պատասխանատու են բոլոր միւս պաշտօնեայք :

Բ. Տեսչաց և Հոգաբարձուաց յարաբերութեանց կանոնագիրը կեղրոնական կրթական Տեսչութիւնը կը գծէ և անոնց մէջ ծագած անհամամայնութիւնները նոյն Տեսչութիւնը կը լուծէ վերջնական կերպով . իսկ Գաւառական կրթական Տեսուչը այս մասին իրենց որոշումը կու-

տան վերապահմամբ կեղրոնական կրթական Տեսչութեան վճռոյն :

**202.** Տեսուչը 0րինաց 1847 յօդուածի համաձայն կը վարէ իր պաշտօնը :

**203.** Տեսուչը երեք ամիսն անգամ մը ցուցակած և ամեն դպրոցական տարեգլխուն ընդհանուր տեղեկագիր կը ներկայէ ուսումնարանի վիճակին վրայ կեղրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան հանդերձ իր դիտողութիւններովն ու առաջարկութիւններովը, և պատճեննը Այցելու Տեսչին կը հաղորդէ :

**204.** Տեսուչը իր պաշտօնին, ինչպէս և Ուսուցչաց Խորհրդին ( Յօդ. 243 ) վերաբերեալ բոլոր թղթոց սրահունական հոգ կը տանի, առ ինքն ուղղեալ թղթութեանը կանոնաւոր ցուցակը կը բռնէ, իր յղածներուն սլատմէնները կը պահէ և իր հրաժարաւան միջոցին թէ տեսչական Դիւանի բոլոր թղթերը և թէ ուսումնարանին վերաբերեալները կը յանձնէ ցուցակաւ իր յաջորդին :

**205.** Միջին ուսումնարանք կրնան ի պահանջել հարկին Փոխ-Տեսուչ մ'ունենալ, զոր ուսուցչաց մէջէն կը նորեն համաձայնութեամբ Հոգաբարձուն և Տեսուչը :

**206.** Ստորին ուսումնարանի Տեսուչ կրնան ըլլալ անոնք որ առ նուազն 23 տարեկան են և զէթ նոյն ուսումնարանի ուսուցչութեան վերջնական ընդհանուր Արտօնագիր ( Յօդ. 297, 300 և 306 Դ. ) ունին : Տեսչուի կրնան ըլլալ նոյն սլայմաններով անոնք որ առ նուազն 24 տարեկան են :

**207.** Միջին ուսումնարանի Տեսուչ կրնան ըլլալ անոնք որ 23 տարեկան են և նոյն ուսումնարանի ուսուցչութեան վերջնական ընդհանուր Արտօնագիր ( Յօդ. 297, 300 և 306 Ե. ) ունին :

**208.** Տեսչաց ընտրութիւնը Հոգաբարձուք կը նեն և կեղրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութիւնը կը վաւերացնէ ( Յօդ. 185 Բ. ) :

**209.** Տեսչին և Փոխ-Տեսչին պաշտօնը երկու տա-

թի կը տեսէ ։ իրենց ուսուցչութեան պաշտօնը տեսչութեան պաշտօնին հետ չի դադրիր, այլ Օրինաց տրամադրած պայմանաժամկետ համաձայն կը շարունակուի (Յօդ. 224 բ.)։

### 2. ՈՒՍՈՒՑԻՉՔ ԵՒ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՔ

**210.** Սոորին և Միջին ուսումնարանաց ուսուցիչ կամ ուսուցչուհի կրնան ըլլալ անոնք որ առ նուազն 20 տարեկան են և նոյն ուսումնարանաց ուսուցչութեան Արտօնագիր ունին [Յօդ. 306 Դ. և Ե.]։

**211.** Ուսումնարանաց ուսուցիչները Հոգաբարձուք կը նուրեն Տեսչաց հետ համաձայնութեամբ և կեղրոնական կամ Գաւառական Կրթական Տեսչութիւնը կը հստատէ [Յօդ. 185 Բ.]։

**212 ա.** Ուսուցչաց ինչուս և Տեսչաց և Փոխ-Տեսչաց ռոճիկը Հոգաբարձուք կորոշեն [Յօդ. 189]։

**բ.** Ուսուցիչք իրենց ռոճիկէն զատ կատանան աշակերտաց թոշակներէն գոյացած հասայթին հինգերորդ մասը, որ իրենց մէջ կը բաժնուի իրարանչիւրին աւանդած դասերու թուցն և կարեւորութեանը համեմատ։

### 3. ՈՒՍՈՒՑԱՑ ԽՈՐՀՈՒՐԴ

**213 ա.** Ուսուցիչք խորհուրդ կը կազմեն Տեսչին նոխագահութեանը տակ։

**բ.** Խորհուրդը գէթ ամիսն անգամ մը նիստ կընէ ուսումնարանի բարեկարգութեան և աշակերտաց յառաջազերութեան վերաբերեալ միջոցներուն վրաց խորհրդակցելու և կարծիք տալու համար։

**214.** Ուսուցչական Խորհուրդն ու ուսուցիչք միայն խորհրդատու ձայն ունին և պարտաւոր են Հոգաբարձութեան և Տեսչութեան սրոշումները դործադրել թէև իրենք անոնց համամիտ չըլլան։ իրենք իրաւունք ունին միայն իրենց կարծիքը Այլութեան Տեսչին և Գաւառական կամ Կեղրոնական Կրթական Տեսչութեան ներկայելու։

**215.** Ուսուցչական Խորհրդոց ընդհանուր կանոնագիրը Կեղրոնական Կրթական Տեսչութիւնը կը գծէ։ Իւրաքանչիւր Խորհուրդ կրնայ իր մասնաւոր կանոնագիրն

ունենալ, բայց սէտք է ընդհանուր կանոնագրին սկզբանց համաձայն ըլլայ և նոյն կամ Գաւառական Տեսչութենէն վաւերանաց։

### 4. ՕԳՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՔ ԵՒ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՔ

**216.** Սոորին և Միջին ուսումնարանաց մէջ հաստատուած Մանկավարժական Դասարանաց ուսումնապատարութեան աշակերտք և աշակերտուհիք եթէ գեռ Օրինաց պահանձած տարիքը չունին [Յօդ. 187 և 211] սահմանեալ Արտօնագիրը [Յօդ. 306. Գ. և Դ.] ստանալու համար՝ կրնան նոյն կամ այլ ուսումնարանաց մէջ իրրե օգնական—ուսուցիչը կամ ուսուցչուհիք գործածուիլ։

**217.** Օրինաց 189 ա., 190 և 195—197 յօդուածոց արամագրութիւնները օգնական—ուսուցչաց և ուսուցչուհեաց ալ կը վերաբերին։



### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏՔ ԵՒ ԻՐԱԿՈՂԻՆՔ

**218. ա.** Աղջային վարժարանաց մէջ պաշտօն վարելող անձինք սէտք է ներկայեն։ 1. իրենց Արտօնագիրը, 2. վարուց վկայական կամ վկայականներ այն թաղի կամ թաղերու խորհուրդներէն ուր որ բնակած կամ մանչցուած են և 3. Պաշտօնավարութեան վկայական կամ վկայականներ՝ եթէ արդէն պաշտօն վարած են։

**բ.** Վարուց և սուստօնավարութեան վկայականները կրնան անընդունելի դատուիլ եթէ ներկայուած օրէն երկու տարի առաջ արուած ըլլան, և դպրոցական իշխանութիւնք կրնան վարուց համար նոր վկայական մը սլահանջելը

**գ.** Օպարականաց վարուց վկայականը սէտք է իրենց Հիւարառապարաններէն տրուած կամ վաւերացած ըլլայ։

**219.** Կրթական պաշտօնէից՝ ընտրութիւնը երկու կերպով կը կատարուի, ուղղակի որոշեալ անձ մը սլահանի կոչելով կամ մրցմանք (բազդատական քննութեամբ) յարմարագոյնը ընտրելով։ Այս վերջին կերպը գործադրելու համար պաշտօնական աղդ կը հրատարակուի հանդերձ պաշտօնին վերաբերեալ պայմաններովը եւ հրաւէր

կը կարգացուի Արտօնագիր՝ ունեցող վարժապետաց կամ վարժուհեաց մրցման մասնակցելու :

**220.** ա. Այցելու Տեսուչք իրենց նախագահութեանը տակ Քննիչ Մասնախումբ մը կը կազմեն, որ կը կատարէ բաղդատական քննութիւնը եւ իր որոշումը կուտայ :

բ. Այցելու Տեսչաց բաղդատական քննութիւնը կը կատարեն նոյն եղանակաւ Կեղրոնական կամ Գաւառական Կրթական Տեսչութիւնը :

**221.** ա. Առժամանակեայ Արտօնագիր [Յօդ. 306 Ա-Ե] ունեցող պաշտօնեայք նախ մէկ տարուան համար պաշտօնի կը կոչուին եւ յետոյ երեք տարուան համար կը հաստատուին իրենց պաշտօնին մէջ՝ եթէ իրենց Արտօնագրի պայմանաժամը անկէ առաջ չի լրանար [Յօդ. 302] :

բ. Վերջնական Արտօնագիր ունեցողները նախ երկու տարուան համար կը նշանակուին եւ յետոյ վեց տարուան համար կը հաստատուին :

գ. Կրթական պաշտօնեայք եթէ դպրոցական տարեգլուխը [Մայիս] 5-6 ամիս անցած սղաշտօնի կոչուին՝ իրենց պաշտօնավարութեան շրջանը յաջորդ դպրոցական տարեգլուխն կը հաշուռէ :

**222.** ա. Կրթական սրտառնէից պաշտօնավարութեան շրջանը լրանալէ գէթ երկու ամիս առաջ պէտք է զեկուցուի իրենց թէ պաշտօնին պիտի շարունակե՞ն թէ ոչ. եթէ այս զեկուցումը տեղի չունենայ՝ պաշտօնեայք իրաւունք ունին երկու ամսականնին պահանջելու :

բ. Նյոնագէս և պաշտօնեայք իրենց պաշտօնի շրջանը լրանալէն երկու ամիս առաջ պէտք է յայտնեն Դադոցական իշխանութեան թէ պաշտօննին պիտի շարունակե՞ն թէ ոչ. եթէ ասոր հակառակ վարուին՝ մէկ ամսականնին կը տուժեն :

**223.** ա. Պաշտօնէից ամսականները պէտք է կանոնաւորութեամբ և ճշգութեամբ վճարուին և արձակուրդի պատճառաւ բնաւ զեղջ շըլլոց :

բ. Նյանագէս և պաշտօնեայք պէտք է իրենց պայմանին համաձայն ճշգութեամբ կատարեն իրենց պաշտօնը. առանց ընդունելի պատճառի բացակայութեամբ բացակայութեան ժամանելու արժէքին կը տուժեն :

**224.** ա. Եթէ պաշտօնէի մը հիւանդութեամն պատճառաւ իր պաշտօնը որիցի յանձնուի՝ փախանորդին ամսականը սնտուկէն կը վճարուի, պաշտօնեան ալ իր ամսականը կ'ստանայ մինչև երկու ամիս, անկէ աւելին ձեռընհաս իշխանութեան որոշումին կախում ունի:

բ. Նյանագէս եթէ պաշտօնեայ մը մեռնի՛ իր մէկ ամսականը ընտանիքին կը վճարուի, աւելին դարձեալ ձեռնհաս իշխանութիւնը կորուէ :

**225.** ա. Արոշեալ պայմանաժամը լրանալէ առաջ կարելի չէ պաշտօնեայ հրաժարեցնել առանց Կեղրոնական կամ Գաւառական Կրթական Տեսչութեան քննութեանն ու որոշմանը, որ ամբաստանեալն ալ լսելէ ետք կուտայ իր վճիռը :

բ. Արոշեալ կարգի դիպուց մէջ յանցաւոր պաշտօնեայ մը կրնայ դադարման ենթարկուիլ, բայց պէտք է անմիջապէս տեղեկութիւն տրուի Կեղրոնական կամ Գաւառական Կրթական Տեսչութեան :

գ. Գաւառական Կրթական Տեսչութեան վճռոյն դէմ կարելի է բազուքնել Կեղրոնական կրթական Տեսչութեան :

դ. Դադարեալ պաշտօնեայն կը շարունակէ իւր ոռնիկն ընդունելու մինչ ցվերջնական կարգադրութիւն խընդունուիլ, եթէ ապացուցեալ յանցանքի տէր չէ :

**226.** Պաշտօնէից և իշխանութեանց մէջ ծաղած զբանական վէճերը Կեղրոնական կրթական Տեսչութիւնը կը վճէ վերջնական կերպով և Գաւառական կրթական Տեսչութիւնը վերապահամբ Կեղրոնական կրթական Տեսչութեան, եթէ երկու կողմն ալ կանխաւ ընդունին անոնց վճիռը, իսկ եթէ ոչ՝ պէտք է աղջային Գաւառականց դիմեն :

**227.** ա. Պաշտօնեայ մը չկրնար պայմանաժամէն առաջ հրաժարիլ առանց արտաքոյ կարգի ստիպողական պատճառի : Եթէ իշխանութիւնը պատճառին ստիպողականութիւնը ընդունի՝ պաշտօնավարութեան վկայական շիտոր և կը բողոքէ Կեղրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան, որ ամբաստանելոյն բացատրութիւնը լսելէ ետք կուտայ իր վճիռը :

բ. Եթէ պաշտօնեայն պարտազանց դատուի՝ դատավճիռը կարձանագրուի անոր վկայականին մէջ, և եթէ յանձնայն պարտազանցութեան մէջ լինայ՝ պարտազանցութեան աստիճանին և յաճախութեան համեմատ մէկ

ամիսէն մինչև մէկ տարի դադարման և վերջաւովէս իս պառ արգիլման կը դատապարտուի :

**228** ա. Ամէն կրթական սրաշտօնեայ որ միանգամայն որից սրաշտօն կը նդունի բացի երեսփոխանութեան, ժողովականութեան, խորհրդականութեան և հոգարձութեան պաշտօնէ՝ ուշոք է կրթական իշխանութեան հաւանութիւնն ստանայ :

բ. Այդ հաւանութիւնը կրնաց միշտ եւս առնուիլ եթէ անկէ զեսա մը կը ծազի կրթական սրաշտօնին :

գ. Վարժապետ կամ վարժուհի մը շկրնար ոյն վարժարանին Հոգարձութեան տրամադրութեանց ներքեւ կիյնան :

**229** ա. Անոնք որ առանց օրինաց սրահանջած Արտօնագիրն [Յօդ. 296 և 299] անենալու սրաշտօն կը վարեն ազգային վարժարանաց մէջ՝ Օրինաց 227 յօդուածին բ. պարբերութեան տրամադրութեանց ներքեւ կիյնան :

բ. Բացառիկ պարագաներու մէջ կրնան առանց Արտօնագրի կրթական սրաշտօնեայք զործածուիլ առժամանակեայ կերպով Գուառական կամ Կեղրոնական Տեսչութեան հաւանութեամբը՝ մինչև որ արտօնեալ սրաշտօնեաց մը գտնուի :

**230** ա. Եթէ Կեղրոնական կրթական Տեսչութիւնը ստուգէ որ կրթական սրաշտօնեայ մը սրաբառագնցութեան և յանցանաց մէջ կը գտնուի և կամ անկարող է իր սրաշտօներ արդիւնաւոր կերպով վարելու անոր հրաժարումը կը սրահանջէ : Եթէ մինչև երեք ամիս և արտաքոյ կարգի պարագայից մէջ անմիջապէս նկատողութեան շառնուի իր սրահանջումը՝ ինք կը հրաժարեցնէ խնդրոյ առակ եղող սրաշտօնեայն և անոր տեղ որից մը կը կարգէ առժամանակեայ կերպով մինչև որ ձեռնչաս իշխանութիւնը նոր սրաշտօնիի մը ընտրութիւնն ընէ կամ առժամանակեայ սրաշտօնեայն հաստատէ :

բ. Կեղր. Կրթական տեսչութիւնը ի հարկին կրնաց յանցաւոր կամ առաջին սրաշտօնեայ մը բոլորովին հեռացնել Ազգային վարժարաններին :

**231.** Կրթական սրաշտօնէից հաստարակաց իրաւանց գէմ զործած յանցանքներու դատերը Ազգային Դատարաններուն կը վերաբերին :

**232.** Եթէ սրաշտօնեայ մը անուանարկիչ դատի մը ենթարկուած ըլլաց՝ կրթական իշխանութիւնը կրնան զանի տռժամանակեայ կերպով սրաշտօնէ դադրեցնել մինչև որ ձեռնչաս դատարանը իր վճիռը տայ :

**233** Կրթական սրաշտօնեայ մը եթէ տասը տարի Ազգին ծառայելէ ետք՝ ո և է ընդունելի պատճառով անկարող ըլլաց առժամանակեայ կերպով կամ բոլորովին իր սրաշտօնոր չարունակելու և որ և է որից զործով ճարելու՝ առժամանակեայ նպաստ կամ ցեանա թոշակ կը նդունի : Կեղրոնական կրթական Տեսչութիւնը խնդրիը Ազգ. ժողովը կը ներկայէ, որ սրաշտօնիին արտօնագրի տասիմանն, անոր սրաշտօնիին տեսղութիւնն ու արդիւնաբութիւնը և նիւթական վիճակը նկատողութեան առնելով՝ կորոշէ տրաւելիք նպաստին կամ թոշակին բանակութիւնը :

**234** ա. Եթէ առժամանակեայ նպաստ ընդունող սրաշտօնեայ մը իր ապրուասը ճարելու կարող վիճակին հասնի՝ նպաստը կը դադրի . իսկ եթէ մեռնի՝ նոյնը իր ընտանիքին կը վճարուի մինչև վեց ամիս :

բ. Նմանագէս եթէ ցեանա թոշակ ընդունող սրաշտօնեայ մը մեռնի՝ որոշեալ թոշակը իր ընտանիքը կը տանայ մինչև մէկ տարի :

**235.** Եթէ սրաշտօնեայ մը անարաստ սրաշտօնավարութեան վիճագիր կամ վկայագրեր չունենայ՝ նպաստի և հանգստեան թոշակի բրաւունը կը զբկաւի :

**236.** Առժամանակեայ արտօնագիր ունեցող սրաշտօնեայը օրինաց 233 և 234 րդ յօդուածոց տուած իրաւունքները չեն վկայելիք եթէ օրինաց 302 րդ յօդուածին տրամադրած վկայութիւնները չեն ստացած :

**237.** Արտաքոյ կարգի արգիւնաւոր սրաշտօնեաները կրնան մասնաւոր վարձատրութիւն ստանալ ըստ առաջարկութեան կրթական իշխանութեանց . Կեղրոնական կրթական Տեսչութիւնը իր առաջարկութիւնը Ազգ. ժողովը. կը ներկայէ, Գուառական կրթական Տեսչութիւնը և Հոգարձութեարձուուք թաղային ժողովը :



## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԿՐԹԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ



ՊՈՏԲԱՍՏՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՑԱՅ ՄԵՋ

**238.** Մաղկոցաց Դաստիարակուհի և Դաստիարակութեան համար ընտրելագոյն Ասորին դպրոցաց մէջ և Ասորին դպրոցաց վարժապետ և վարժուհի պատրուտելու համար ընտրելագոյն բարձրագոյն դպրոցաց մէջ աշակերտներ և աշակերտուհիներ լրնդունուին, որք թէ իրենց կրթութեան աստիճանին համապատասխանող կարգոց ուսմանց ընթացքին կը հետեւին և թէ առանձին դասեր կառնուն : Այդ աշակերտոր և աշակերտուհիք միանգում օգնականութիւն կընեն «Օգնական-աշակերտուհի» անուամբ [ Յօդ. 198 ] :

**239.** Օգնական աշակերտոր կամ աշակերտուհիք սկզբ է առ նուազն շարաթը 6 ժամ առանձին դաս տանուն, և իրենք առ առաւելն շարաթը 12 ժամ դաս տան վարժապետաց կամ վարժուհեաց առաջնորդութեամբը :

**240 ա.** Օգնական-աշակերտոր կամ աշակերտուհիք կը յանձնուին միայն վերջնական Արտօնութիր ունեցող վարժապետաց կամ վարժուհեաց [ Յօդ. 300 ] :

Բ. Մէկ վարժապետի կամ վարժուհու երեք օգնական աշակերտէ կամ աշակերտուհիէ աւելի չի յանձնուիր :

Գ. Վարժապետ մը կրնոյ օգնական-աշակերտուհի ունենալ, բայց առանձին տրուած դասերու ատեն սկզբ է վարժուհին ներկայ ըլլոյ :

**241 ա.** Իրեւ օգնական-աշակերտոր և աշակերտուհիք կընդունուին անոնք որ : 1. Ազբատ ծնողաց դաւակունք են . 2. Բարի վարք ունին, ընդունակ և ջանասէր են . 3. Առողջ եւ կատարեալ կազմուածք և մանկավարժութեան յարմարութիւն ունին :

Բ. Օգնական-աշակերտոր և աշակերտուհիք նախ մէկ ամսուան փորձոյ կ'ենթարկուին և ապա վերջնական կերպով կընդունուին :

Գ. Օգնական-աշակերտուհիք և աշակերտուհեաց ընտրութիւնը Տեսուչ-վարժապետք կամ վարժուհիք կընեն Հոգաբարձուաց համաձայնութեամբ և Այցելու-Ցեսչաց խորհրդով :

**242.** Ասորին դպրոց ընդունուող օգնական-աշակերտոր և աշակերտուհիք պէտք է նոյն դպրոցի Գ. կարգի ընթացքին և բարձրագոյն դպրոց ընդունուողները Ասորին դպրոցի Դ. կարգի ընթացքին քննութիւնը տան :

**243.** Օգնական-աշակերտոր և աշակերտուհիք կարկու ին անընդունակութեան և ծուլութեան պատճառութեանց վերջնական ընդունելութեանէն առ նուազն չորս և առ առաւելն վեց ամիս յետոյ :

**244.** Օգնական-աշակերտուհիք և աշակերտուհեաց ըրլոր սկզբարը դպրոցի արկդէն կամ ուրիշ կերպով կը հոգացուին և՝ եթէ կարու ըլլան՝ զրամական նսպաստ ալ կը տրուին : Հոգաբարձուաց ամեն կերպ սկաշտապանութիւնն ընելու են անոնց որ կարենան յաջողութեամբ լրացնելի բենց ուսմանց ըրջանը :

**245 ա.** Այցելու-Ցեսուչը սկզբ է տորին գէլի չորս անգամ քննեն օգնական-աշակերտներն ու աշակերտուհիները և սկզբ եղած ուղղութիւնը տան անոնց դրադմանցը, որպէս զի երր օրինաց սրահանջած տարիին ունենան [ Յօդ. 17 և 186 ] կարող ըլլան սահմանեալ քննութիւնն տալ և Արտօնագիր ստանալ [ Յօդ. 306 Ա. և Բ. ]

Բ. Եթէ օգնական-աշակերտ կամ աշակերտուհի մը օրինաց սրահանջած տարիիը լրացնէ, բայց որ և է պատճառուաւ կարող չըլլայ քննութիւն տալու կընայ տարի մ'եօշ շտրունակել իւր սրահունը՝ Այցելու-Ցեսչին հաւանութեամբը :

Գ. Օգնական-աշակերտոր և աշակերտուհիք կընան իրենց պայմանաժամը լրանալէ առաջ կրտժարիլ հաւանութեամբ Հոգաբարձուաց և Այցելու Ցեսչաց՝ եթէ ուղեն մանկավարժական դասարան մը մանել [ Յօդ. 247 ] :

**246.** Երբ Այցելու Ցեսուչը ստուգեն թէ օգնական-աշակերտոր և աշակերտուհիք սահմանեալ քննութիւնը [ Յօդ. 289 ] տալու վիճակին հասած են, բայց դեռ օրինաց սրահանջած տարիիը չընին՝ [ Յօդ. 17 և 186 ] օգնական-դաստիարակակի կամ դաստիարակուհու և օգնական-վարժապետի կամ վարժուհու վկայագիր կուտան անոնց [ Յօդ. 18 և 193 ] :



ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԱՍԱՐԱՆԱՑ ՄԷՋ

**247 ա.** Բարձրագոյնիւսումնարանաց և բարձրագոյն դպրոցաց մէջ պէտք է Մանկավարժական դասարանի հաստատութեան կամ կեղրունական կամ Գաւառական կրթական Տեսչութեան որոշմամբը :

Բ. Մանկավարժական դասարանաց նորաստական է վարժապետութեան տապարէզն ընտրելու ժամանակուց սույն պատանեցաց Մանկավարժական տեսամկան և գործնական անհրաժեշտ հմտութիւնք տալ :

**248.** Բարձրագոյն դպրոցաց մէջ հաստատուած Մանկավարժական դասարանները երկու տարուան շրջան և երկու կարգ կունենան և կ'առանցեն՝ 1. Գլխաւոր ըստ կըդրունք մանկավարժութեան, 2. Ընդհանուր և մասնաւոր եզրակացնեան և 3. Կրինութիւն բարձրագոյն դպրոցի Ե. և Զ. կարգաց ուսմանց ընթացքին :

**249.** Ստորին ուսումնարանաց մէջ հաստատուած Մանկավարժական Դասարանները մէկ տարուան շրջան կունենան և կաւանգեն, 1. Գլխաւոր սկզբունք մանկավարժութեան, 2. Ընդհանուր և մասնաւոր եզրակացնեան և 3. Կրինութիւն Սիջին Ստորին ուսումնարանի Գ. կարգի ուսմանց ընթացքին :

**250.** Սիջին Ուսումնարանաց մէջ հաստատուած Մանկավարժական դասարանները մէկ տարուան շրջան կունենան և կաւանգեն, 1. Եկզունք մանկավարժութեան, 2. Ընդհանուր և մասնաւոր եզրակացնեան և 3. Կրինութիւն Սիջին Ուսումնարանի Գ. կարգի մէջ աւանդուած ընդհանուր ուսմանց :

**251.** Աշակերտը և աշակերտուհիք միանդամայն դասութեան գործնական կրթութիւնք կընեն Ստորին և Բարձրագոյն դպրոցաց մէջ նոյն դպրոցաց կամ Մանկավարժական դասարանի վարժապետաց առաջնորդութեամբը :

**252.** Մանկավարժական դասարանաց ուսմանց ծըրագիրը, ներբին կազմութեան և բարեկարգութեան կամ անազիրը և յուսմանց միջնորդները կեղրունական կրթական Տեսչութիւնը կը ստհանէ :

**253 ա.** Բարձրագոյն դպրոցի մէջ հաստատուած

մանկավարժական դասարանը կընդունուին, բարձրագոյն դպրոցի ուսումնարատ աշակերտը և աշակերտուհիք և անոնք որ նոյն դպրոցի ուսմանց ընթացքին քննութիւնը կուտան :

Բ. Աշակերտը պէտք է առ նուազն 15 և աշակերտուհիք 13 տարեկան ըլլան :

**254.** Ստորին ուսումնարանի մէջ հաստատուած մանկավարժական դասարանը կընդունուին, Ստորին ուսումնարանի ուսումնարատ աշակերտը և աշակերտուհիք և անոնք որ նոյն ուսումնարանի ուսմանց ընթացքին քննութիւնը կուտան :

**255.** Սիջին Ուսումնարանի մէջ հաստատուած մանկավարժական դասարանը կընդունուին՝ Սիջին Ուսումնարանի ճիշդերէն միայն ուսմանց ընթացքը աւարտող աշակերտը կամ աշակերտուհիք և անոնք որ նոյն ընթացքին քննութիւնը կուտան :

**256.** Մանկավարժական դասարանաց աշակերտը և աշակերտուհիք պէտք է առողջ և կատարեալ կազմուածը և վարժապետութեան սպաշտոնին յարմարութիւն ունենան և բարի վարուց տէր, ընդունակ և աշխատասէր ըլլան :

**257 ա.** Չոնեւոր աշակերտը և աշակերտուհիք ճրի կընդունուին, իրենց բալոր պէտքերը ճրի կը հոգացուին և՝ եթէ կարու ըլլան՝ զրամանական նպաստ ալ կը տրուին :

Բ. Ռենեւոր աշակերտը և աշակերտուհիք թոշակ կը վճարեն՝ զոր Հոգարարձուք կորաշեն Օրինաց 48րդ յօդուածոյն համաձայն :

**258.** Օրինաց 241 ր. և գ. և 243 յօդուածոց տըրամադրութիւնները մանկավարժական դասարանի աշակերտաց ալ կը վերաբերին :

**259.** Եթէ մանկավարժական վարժարանաց ուսումնարատ աշակերտը և աշակերտուհիք դեռ օրինաց սպահանջած տարիքը չունենան (Յօդ. 186 և 187) օդնական վարժապետի կամ վարժուհուց և օդնական ուսուցչի կամ ուսուցչուհուց վկայագիր կատանան [Յօդ. 193, 194 և 216]:

**260 ա.** Զրիավարժ աշակերտը և աշակերտուհիք սրբարտուր են առ նուազն 2 տարի սպաշտոն վարել թա-

Դային վարժարանաց մէջ կամ իրենց համար եղած ծախութերը ամբողջապէս կամ մասամբ հասուցանել :

**Ֆ.** Զրիավարժ Շաշակերտք Եթէ ուսմանց ընթացքը չաւարտած հրաժարին առանց ստիպողական և ընդունելի սկսումառի պէտք է իրենց համար եղած ծախքերը հասուցանեն :

Գ. Հրաժարման սկսումառին օրինաւորութիւնը գաւառական կամ կեղրոնական Կրթական տեսչութիւնը կորչէ Հոգարարձուին և Այցելու տեսչին՝ կարծիքն առնելով :

**261.** Հոգարարձուք և Այցելու տեսուչք վարչութեաւուառ են ամէն կերպ պաշտպանութիւն և քաջալերութիւն ընել ճրիավարժ աշակերտաց և աշակերտուհեաց, որպէս զինուաման ընթացքը չաւարտած չի հրաժարին կամ յետ աւարտման մանկախրժեական ասպարէլին չի հստանան :

**262.** Բարձրագոյն դպրոցի Անկավարժական Գաղափանները նոյն դպրոցի Ե. և Զ. կարգաց պէս կը կազմուին օրինաց 76 րդ յօդուածի ա. և բ. պարբերութեանց տրամադրութիւններուն համաձայն :

**263.** Մանկավարժական դասարանաց դասերը դըպրոցաց և ուսումնարանաց վարժապետաց և ուսուցչոց կը յանձնուին, բայց ի սկահանջել հարկին որիչ դասառնեկրած կրնան հրաւիրուիլ :

**264.** Բարձրագոյն դպրոցաց և ուսումնարանաց Այցելու տեսուչք, Հոգարարձուք և ներփին տեսուչք միանդամայն Անկավարժական դասարանաց հակողութիւնը, Հոգարարձութիւնը և տեսչութիւնը կը կատարեն :

**265.** Մանկավարժական դասարանաց ծախքերը այն դպրոցաց և ուսումնարանաց արկղներէն կը հոգացուին՝ ուր որ հաստատուած են, և հասցները նոյն արկղներուն կը պատկանին :

**266.** Օրինաց միւս յօդուածները, որի նախունիքաց 247-265 յօդուածոց մասնաւոր տրամադրութեամբը չեն բարեփոխուած, Անկավարժական դասարանաց ալ կը վերաբերին :



ՊԱՏՐԱՍՈՒԹԻՒՆ, ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
ԲԱՆՈՅ ՄԵԶ

**267.** Միջին ասումնարանաց և Վարժապետանոցի ուսուցիչներ պատրաստելու համար կեղրոնական Կրթական Տեսչութիւնը Բարձրագոյն ուսումնարաններու մէջ աշակերտներ կը դնէ :


**268.** Այդ աշակերտաց ծախքերը կեղրոնական Կրթական արկղէն կամ այլ միջոցաւ կը հոգացուին եւ անոնց ընտրութիւնը կեղրոնական Կրթական Տեսչութիւնը կընէ Միջին ուսումնարանաց ուսումնաւորտ աշակերտաց կամ նոյն ուսումնարանաց ընթացքին քննութիւնը տուող պատանեաց մէջն։ Եթէ քանի մը աշակերտ ներկայան՝ ընտրութիւնը մրցմամբ կը կատարուի :

**269.** Ընտրուելիք աշակերտք պէտք է 1. առողջ եւ կատարեալ կաղմուածք եւ դասատուութեան փափաք եւ յարմարութիւն ունենան, 2. աղքատ, բարի վարուց տէր, ընդունուկ եւ ջանասէր ըլլոն եւ 3. յանձն ամնուն 4-5 տարի աղդային վարժարանաց մէջ սկաշտօն վարելու կոմ իրենց համար եղած ծախքերը հասուցանելու :

**270.** Ընտրուած աշակերտք նախ երեք ամիս փորձու կենթաշկուին աղդային վարժարաններէն միոյն մէջ եւ ապա Բարձրագոյն ուսումնարան մը կը դրուին՝ եթէ փորձը ընտրութեան պատշաճաւորութիւնը հաստատէ :

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԻՆՔՆԱՐԹՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ  
ԿՐԹԱԿԱՆ ՊԱԾՏՈՆԵՒՑ



## ՄՐՑՈՒՄ

**271.** Վարժապետաց եւ վարժուհեաց ինքնակըրթութեան եւ կատարելագործութեան մզում մը տալու

նպատակաւ ամի՞ն տարի մրցման համար դրաւոր նիւթեր կառաջարկուին անոնց եւ ներկայուած գործոց արժանեաց համեմատ դրաւոր եւ դրամական մրցանակներ կը տրուին :

**272.** Այս մրցմանց համար պէտք եղած ծախոքը կէղբոնական Կրթական արկղէն կամ մասնաւոր նուէր ներով կը հոգացուին :



### ՄԱՆԿՈՎԾՄԱՐԺԱԿԱՆ ԴԱՍԱՀԱՅՐԻ ԴԱՏՈՒԹԻՒՆ

**273 ա.** Ե գաւառս Գաւառական եւ Այցելու Տեսուչք եւ ի Պօլիս կեղրոնական Կրթական Տեսչութիւնը ամէն ջանք ի գործ կը գնեն Մանկավարժական դասախոսութիւնը հաստատելու յարմարագոյն տեղեր եւ ժամանակներ :

Բ. Այդ դասախոսութեանց նպատակն է պաշտօնի մէջ դանուող վարժապետաց եւ վարժուեաց մանկավարժական անհրաժեշտ զիտելիք հաղորդել եւ անոնց ինքնակրթութեանը օղնել :

**274.** Թաղային դուրսցաց եւ ծաղկոցաց վարժապետը եւ վարժուէիք պարտաւոր են կանոնաւոր կերպով ներկայ լինիլ Մանկավարժական դասախոսութեանց :

**275.** Մանկավարժական դասախոսութեանց ծրադիրն ու կանոնադիրը կը հրատարակէ Կեղրոնական Կըրթական Տեսչութիւնը :

**276.** Գաւառական եւ Այցելու Տեսուչք եւ կեղրոնական Կրթաական Տեսչութիւնը ձեռնհաս անձանց գործակցութեանը կը դիմն, որպէս զի ըստ կարելւոյն շատթաղերու մէջ կարևոնան հաստատուիլ Մանկավարժական դասախոսութիւնը :



### ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՔ

4. ԿՐԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅ ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՔ

**277.** Խրաբանչիւր Կրթական կամ Գոլոցական ըրջանակի [Յոդ 358 ա.] արտօնեալ վարժապետը և վարժուէիք տարին գէթ 3 անգամ ի ժաղով կը գումարին :

**278.** Վարժապետական Փողովոց գլխաւոր նպատակն է իրենց անդամոց ինքնակրթութիւնն ու յասաջագիւմթիւնը: Փողովոց գրադանց գլխաւոր առարկաներն են՝ 1. Մանկավարժական և գոլոցական խնդրոց վրայ գրաւոր գործեր ներկայել ժաղովին քննութեանը, 2. Ընդհանրապէս վարժարանոց յասաջադիմութեան և մասնաւորապէս վաստիսական թեան և դասասուստեան եղանակաց, դասադրոց և այլ դասական միջոցաց վրայ խորհրդակցիւ և առաջարկութիւններ ընել Կրթական իշխանութեանց, 3. Գոլոցական սպասանէից վիճակի բարւորման և անոնց ընկերական զրից բարձրացման միջոցներ խորհրդի, առաջարկել և հրատարակել և 4. Կըրթական իշխանութեանց առաջարկուած խնդրոց վրայ կարծիք տալ:

**279.** Խրաբանչիւր Փողովոց նիստերը ոլէոր է կանոնաւոր արձանագրութիւնը ունենան և անոնց համապատակութիւնը թէ Կեդր.մատկան կամ Գուստավ կան Տեսչութեան և թէ զաւարին միս ըրջականներու Փողովոց հաղորդուին:

**280.** Կրթական իշխանութիւնը կրնոն ներկայ ըլլալ վարժապետական Փողովոց նիստերոն, բաց եթէ Փողովոց անգամ չեն միայն ձայն կունենան :

**281.** Վարժապետական Փողովոց ընդհանուր կանոնագիրը Կեդր.մատկան Կրթական Տեսչութիւնը կը զըծէ, իսկ Խրաբանչիւր ըրջանակի ժաղով իր մասնաւոր ներքին կոնսուլտիրը կունենայ Կեդր.մատկան կամ Գուստավ առարկան Կրթական Տեսչութիւնն վաւերացած :

**282 ա.** Գուստավոց մէջ Գուստավական Կրթական

Տեսչութիւնը պէտք է ամեն ջոնք և գործ զննեն վարժապետաց ճանապարհի ծախորեն հոգալու իրենց Կրթական որդիղն կամ այլ միջոցաւ :

Բ. Նոյն կերպով հոգացուելու և ժողովոց հոգացութեանց ծախորերը :

## 2. ԳԱԽԱՌԱԿԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ

**283.** Խրաբանչիւր գուտասի շրջանակիներու ժողովները իրենցմէ ընտրեալ պատուիրակիներու միջոցաւ կրթական վարժապետական ժողով կազմել իրենց գուտասպազլութուր :

**284.** Գուտասական վարժապետական ժողովները Կեղրանական Կրթական Տեսչութենէն վաւերացեալ ներքին կանոնազիր կունենան :

**285.** Խրաբանչիւր գուտասական վարժապետական ժողով պէտք է խր նիստերու արձանագրաւթեանց համառօտ բովանդակութիւնը հոգորդէ թէ Կեղրանական կամ Գուտասական Կրթական Տեսչութեան և թէ միս գուտասոց վարժապետական ժողովներուն :

**286.** Օրինաց 278, 280 և 282 յօդուածները գուտասական վարժապետական ժողովոց աւ կը վերտոքերին :

## 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ

**287.** Գուտասական վարժապետական ժողովները իրնան իրենցմէ ընտրեալ պատուիրակիներու միջոցաւ Ընդհանուր վարժապետական ժողով կազմել ի Պօլիս :

**288.** Օրինաց 278, 280, 284 և 285 յօդուածոց տրամադրութիւնները Ընդհանուր վարժապետական ժողովոց աւ կը վերտոքերին :

## ԴԼՈՒԽ 20ՐՐՈՐԴ

ՔՆՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՐՏՕՆԱԳԻՐՔ



## ՔՆՆՈՒԹԻՒՆՔ

**289 ա.** Ազգային վարժարանաց մէջ պաշտօն վարելու համարքնագիրն առաջ և Արտօնագիր ստանալու է :

Բ. Կեղրանական Կրթական Տեսչութիւնը առանց քընութեան Արտօնագիր կուտաց իրենց աստիճանին համեմատ՝ անսնց որ իրենց բարի վարտուքն ու կրթական ասպարիզին մէջ ցոյց տուած արգեւամրել քաջածանօթ են :

Գ. Անսնք որ սահմանեալ քննութեանց աստիճաններուն հաւատար [Յօդ. 306 Ա-Ե.] ուսմանց վկացական կը ներկայցն՝ նոյն աստիճաններու պահանջած ընդհանուր քննութիւններէն ազատ են :

**290 ա.** Քննութիւնները կը կատարենն

1. Կեղրանական Կրթական Տեսչութիւնն իր մէ կարգեալ Քննիչ Մասնախմբերու ձեռօր,

2. Գուտասական Կրթական Տեսչութիւնը՝ իրենցմէ կարգեալ Քննիչ Մասնախմբերու ձեռօր,

3. Այցելու Տեսչուք՝ Գուտասական Կրթական Տեսչութիւններէն կարգեալ Քննիչ Մասնախմբերու ձեռօր:

Ե. Կրօւական ուսմանց և Եկեղեցական երաժշտութեան քննութիւնները կը կատարեն կրօւական Խորհրդականն ու իրմէ կարգեալ Քննիչները :

**291.** Գուտասական Կրթական Տեսչուքը քննութիւններն առարտելէ ետք՝ անսնց եղբակացութեանցը վկաց տեղեկագիր կը ներկայցն Կեղրանական Կրթական Տեսչութեան . նոյնազիր տեղեկագիր կը ներկայցն Այցելու Տեսչուքը Գուտասական Տեսչաց :

**292.** Քննիչ Մասնախմբերու անդամը կը ման մասնաւոր վարժատրութիւն ստանալ Կեղրանական կամ Գուտասական Կրթական Սնառուկէն :

**293.** Քննութիւնները տեսական և գործնական են, որոց ծրագիրներն ու կանոնագիրը Կեղրանական Կրթական Տեսչութիւնը կը սահմանէ :

**294 ա.** Քննութիւնները տեղի կունենան սապին երկու անգամ, բայց ի պահանջել հարկին արտարորդ կարդի քննութիւններ աղ կրնան ըլլով՝ եթէ քննիչ իշխանաթիւնը կարևոր դատեն :

Բ. Քննութեանց օրն ու աելլը կը ծանուցուին ամեն մը առաջ աղգոյին լրագրաց միջոցաւ. և կանոններն ու ծրագիրները կը տրուին միշտ ամեն անոնց որ քննութեան կը պատրաստարին :

**295 ա.** Քննութիւն տալ և Արտօնադիր ստանալ ուղղը պէտք է Օրինաց պահանջած տարիքն ունենան (Յոդ. 17, 186, 187 և 211) և սրոշեալ օրէն զէթ չարակմ մը առաջ գրով խնացնեն թէ ի՞նչ պաշտօնի կամ ի՞նչ ուսման համար քննութիւն տալ կուզեն, և միանգահայն ներկայ յեն 1. վարուց վիրայական կամ վիրայականներ ոյն թաղային իշխանաթիւններէն՝ ուր բաւկած կամ ձանցուած են, 2. Ծննդեան վիրայական, 3. Պաշտօնավարութեան վիրայական կամ վիրայականներ՝ եթէ արգին պաշտօն վարժ են, 4. ուսմանց վիրայական՝ եթէ ունին. իսկ եթէ նախօնթաց վիրայականները չունին. 5. իրենց համառու կենսագրութիւնը, որուն պարունակիլիր տեղեկութիւնները և դրանուկան կրթական Տեսչութիւնը կորոշ :

Բ. Օտարականոց ուսմանց և վարուց վիրայականները պէտք է իրենց Հիմունաստրաններէն վաերացած ըլլան :



### ԱՐՏՕՆԱԳԻՐԸ

**296.** Արտօնադիրը երկու տեսակ են՝ Ընդհանուր և Մասնաւոր (Յոդ. 299):

**297 ա.** Ընդհանուր են այն Արտօնադիրները՝ որք իրաւունք կուտան Ստորին դպրոցի մէջ աւանդուած բոլոր ուսմանց ու Բարձրագոյն դպրոցի եւ ուսումնաբանաց մէջ աւանդուած քանի մը նոյնատեսակ ուսմանց դաստութիւնն ընելու :

Բ. Նոյնատեսակ դիտութեանց խումբերն ու խրաքանչիւր խումբի պատկանեալ դիտութիւնները կեզբանական կրթական Տեսչութիւնը կրթական ծրագրին մէջ :

**298 ա.** Մասնաւոր են այն Արտօնադիրները որք իրաւունք կուտան միայն մէկ ուսմունքի գասատուութիւն ընելու Բարձրագոյն դպրոցաց կամ Ստորին և Միջին ու ուսմանագրանց մէջ :

Բ. Բացասաւթիւն — Եթէ հարկը պահանջէ՝ Ստորին դպրոցի մէջ աւանդուած միայն հետեւեալ դասերաւն համար մասնաւոր Արտօնադիր կը տրուի՝ գեղագրութեան, գձագրութեան, երաժշտութեան, մորմնամարզի, ձեռուգործի և անտեսութեան :

**299.** Արտօնադիրները Վերջնական են [Յոդ. 300] և Առ ժամանակեայ (Յոդ. 304 և 306 Ա-Ե) :

**300.** Վերջնական Արտօնադիր կը տրուի անոնց ու սահմանեալ քննութիւնը յ-ջ-ը-ը-ն-ի-ւ-մ-բ- կուտան կամ ու ժամանակեայ Արտօնադիր ստանալէ ետք Երեք տարի արգինուուր կերպով պաշտօն կը վարեն [Յոդ. 302] :

**301.** Առ ժամանակեայ Արտօնադիր կը տրուի անոնց որ սահմանեալ քննութիւնը միայն բ-ն-ա-յ-ո-ւ-ն- կերպով կուտան կրթական Տեսչութիւնը կամ կուտան կրթական [Յոդ. 306 Ա-Ե] :

**302 ա.** Առժամանակեայ Արտօնադիրները միայն հինգ տարի զօրութիւն ունին. Անոնք որ մինչեւ ի լրանալ այդ օյայմանաժամին սահմանեալ քննութիւնը յ-ջ-ը-ը-ն-ի-ւ-մ-բ- չտան կամ վերջին երեք տարուան միջոցին դէթ երեք վկայութիւն չստանան Այցելու Տեսուչներէն թէ արգիւնաւոր կերպով կատարած են պաշտօնին՝ ազգային վարժարանաց մէջ պաշտօն վարել չեն կրնար առանց վերստին քննութեան ենթարկուելու եւ Արտօնադիր ստանալու :

Բ. Ա. յցելու Տեսուչքը նոյն վկայութիւնը ստանալու են կեզբոնական կամ Գաւառական Կրթական Տեսչութիւնը ինքնէն :

**303.** Աղջային վարժարանաց մէջ դաս տալ կրնան ստանց Արտօնադիր 1. անոնք որ ձրի դասախոսութիւն կընեն կրթական իշխանութեանց հրաւիրանոք, 2. անոնք որ օդնական-վարժարանաց կամ վարժուհին են եւ 3. անոնք որ օդնական-աշակերտ կամ աշակերտուհին են (Յոդ. 48, 143, 193, 194, 198, 199 և 216) :

**304.** Ամէն Արտօնադիր և վկայական (Յոդ. 289 գ.)

իր զօրութիւնը կը կորսունէ՝ եթէ անոր տէրը հինգ տար շարունակ կրթութեան ասպարէղէն հեռացած ըլլայ :

**305.** Կեղրոնական կրթական Տեսչութիւնը Առժամանակեայ Արտօնագիր մը կոչնչացնէ, Վերջնական Արտօնագիր մը Առժամանակեայի կը փոխէ եւ բարձրագոյն աստիճանի Արտօնագիր մը ստորին աստիճանի կիջեցնէ ԿԾէ փորձն ու Այցելու եւ Գաւառական Տեսչաց վկայութիւնները զայդ պահանջեն :

**306.** Արտօնագիրը հինգ աստիճան ունին

Ա. Մաղկոցի դաստիարակուհու կամ դաստիարակի Առժամանակեայ Արտօնագիր կը տրուի անոնց որ Օրինաց պահանջած տարիքն ունին ( Յօդ. 47 ) եւ Ստորին դպրոցի ուսմանց ընթացքին և մանկավարժութեան հիմնական սկզբանց քննութիւն կուտան էնհաշտցիւ կերպիւ :

Բ. Ատորին դպրոցի վարժապետի կամ վարժուհոյ Առժամանակեայ Արտօնագիր կը տրուի անոնց որ Օքինաց պահանջած տարիքն ունին (Յօդ. 186) եւ Մանկավարժական դասարանաց ու Քարձրագոյն դպրոցի ուսմանց ընթացքին քննութիւնը կուտան ժողովական լիեւական:

Գ. Բարձրագոյն դպրոցի վարժապետի կամ  
վարժուհոյ Առժամանակեայ Արտօնագիր կը արուի անսանց  
որ պահանջուած տարիքն ունին ( Յօդ. 187 ) եւ Ստորին  
ուսումնարանի ուսմանց ընթացքին ընդհանուր քննու-  
թիւն եւ իրենց ուսուցանելիք առարկային կամ առար-  
կաներուն ու Մանկավարժական դասարանի ընթացքին  
մասնաւոր քննութիւն կուտան հոգածողի կերպիւ :

Դ. Ստորին ուսումնաբանի վարժապետի կամ  
վարժուհւոյ Առժամանակեայ Արտօնագիր կը արւել ա-  
նոնց որ պահանջուած տարիքն ունին (Յօդ. 244) եւ  
Միջին ուսումնաբանի ճիշդերէն միոյն ընթացքին ընդհա-  
նուր քննութիւն եւ իրենց ուսուցանելիք առարկային  
կամ առարկաներուն եւ Մանկավարժական դասարանի ըն-  
թացքին մասնաւոր քննութիւն կուտան էնհայտէն  
կերպեւ :

Ե. Միջին ուսումնարանի ուսուցչի Առժամանակնեայ Արտօնագիր կը տրուի անոնց ոք պահանջուած տարիքն ունին (Յօդ. 244) եւ Բարձրագոյն ուսումնարանի մը մէջ ուսումն աւարտած եւ վկայագիր ստացած են եւ իրենց աւանդելիք ուսման կամ ուսմանց, ինչպէս եւ մանկավարժական հիմնական սկզբանց մասնաւոր քըննութիւն կուտան է-հաշուցիւ կերպիւ :

**Յ** Յ ա. Կեղրանական Կրթական Տեսչութիւնը առանց տառիմանի Արտօնողիր կուտայ . Գաւառական Տեսչութիւնը միայն ծաղկոցի , ստորին ու բարձրագոյն դպրոցի և ստորին ուսումնարանի . Այցելու Տեսուչք՝ միայն ծաղկոցի և ստորին դպրոցի :

Բ. Գառառական և Այցելու Տեսչաց տուած Արտօնագիրները պիտք է Կեկրանական կրթական տեսչութենէն վառելուանոն :

**308** ա. Արտօնագրոց համար պէտք է հետեւեալ առընթերի վճարուին .

Վերջնական Արտօնադրոց տուրքերն են:

1. Ծաղկացի մէկ մէջիտ .
  2. Ասորին դպրացի երկու մէջիտ .
  3. Բարձրագոյն դպրացի երեք մէջիտ .
  4. Ասորին ուստի մնարանի չորս մէջիտ և
  5. Միջին ուսումնարանի հինգ մէջիտ :

Բ. Խոկ Առաքամանակեց Արտօնագրոց համար նշանակեալ արոց կէսր :

ՄՅԱ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԿՐԹԱԿԱՆ ԽԵԽԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԵՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

#### 4. ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԷՈԸՀԾՈՑՈՒՅՑ.

**309.** Ըստ Տրդ յօդուածի Ազգային Վարչական Կազմակերպութեան Օրինաց Ազգային Կրթութեան դուռ- ծոց անօրինումն ու հակողութիւնը կը պատկանի Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրթական Խորհրդականին , որ կը վարէ իր պաշտօնը նոյն Օրինաց 42, 44, 45 (բ. պըթ.) յօդուածոց համաձայն :

**310.** Կրթական Խորհրդականին եւ Վարչական Խորհրդոյ մէջ ծագած անհամաձայնութիւնը Աղդ·Ժողովոյ կը

ներկայի Պատրիարքին մէջոցաւ՝ եթէ նա համամիտ է Կրթական Խորհրդականին և Կրթական Խորհրդականին միջոցաւ։ Եթէ Պատրիարքը համամիտ է Վարչական Խորհրդոյ։

**311.** Կրթական Խորհրդականը կը նարուի Վարչական Կաղմակերպութեան Օրինաց Թրդ յօդուածին համաձայն, իր պաշտօնը կը տեսէ երկու տարի (Օր. Վարչ. Կաղ. Յօդ. 41) եւ մինչեւ որ իւր յաջորդը պաշտօնի չանցնի ինք շնորհաժամկեր։

## 2. ԲՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՈՐԵՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

**312.** Կրթական Խորհրդականը թոշակաւոր պաշտօնեայ մը կունենայ «Ընդհանուր Տնօրին Ազգային Վարժարանաց» անուամբ, որոյ ընտրութիւնն ու անուանումը Վարչական Կաղմակերպութեան Օրէնքին 46րդ յօդուածին համաձայն կը լլայ։

**313.** Ընդհանուր Տնօրէնը պէտք է 1. ուսումնական անձ մ' լլայ, 2. Մանկավարժական գիտութեանց, քաղաքակիրթ ազգաց կրթական օրինացն ու վարժարանաց ընթացքին, ինչպէս եւ զարոցական վարչութեան մասնաւոր հմտութիւն ունենայ եւ 3. Ազգային կրթութեան ասպարիզին մէջ ծանօթ լլայ իր վարած պաշտօններո վե գրական գործերով։

**314.** Ընդհանուր Տնօրէնը ներկայ կ' լլայ Ազգային ժողովոյ նիստերուն՝ երբ անոնց օրակարգին մէջ կրթութեան վերաբերեալ խնդիր կայ, եւ՝ եթէ երեսվուան չէ՝ միայն ձայն կունենայ։

## 3. ԿԱՇՏՈՆ ԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

**315.** Կեղրոնական Կրթական Տեսչութեան պաշտօնն է։

1. Ազգային կրթութեան ընդհանուր տեսչութիւնն ընել (Օր. Վարչ. Կաղ. Յօդ. 24)։

2. Ազգային կրթութեան վերաբերեալ օրինաց ծրագիրները նախարարներ կամ սրարանատեղ և առաջարկել եւ հաստատեալ Օրէնքները գործադրել։

3. Օրինաց տրամադրութեանց պահանջած ընդհանուր կանոնադրութիւնները յորինել։

4. Ազգային կրթութիւնն ընդհանրացնելու և զարգացնելու միջոցները քաջալերել։

5. Ազգային վարժարանաց, մատենադարանաց և այլ տեսակ կրթական հաստատութեանց վրայ հսկել։

6. Ազգային կրթութեան պաշտօննեաները քննել և արտօնել, բաց ի կրօնական տումանց վերաբերեալներէն [Օր. Վարչ. Կաղ. Յօդ. 49]։

7. Նոցա կացութիւնը բարերելու, արտգոյն տարածութելու և հետղնետէ լուսագոյններն հասցնելու հոգ տանիիլ։

8. Ազգային վարժարանաց դասադրքերն ու այլ դասական միջոցներն որոշել, բաց ի կրօնական տումանց վերաբերեալներէն [Օր. Վարչ. Կաղ. Յօդ. 49]։

9. Ստորակարգեալ կրթական իշխանութեանց որոշումներն վերաբերել կամ վուերացնել։

10. Ազգային կրթութեան աշխատառզ մասնաւոր անձանց, ընկերութեանց և վանական միարանութեանց տամանց յայտադիրներն ու կանոնադրութիւնները քննել ու վաերացնել և անոնց պատկանեալ կրթական հաստատութիւնները կը պահանջէ համաձայն Յօդաց։

**316.** Եթէ Օրինաց տրամադրութ պաշտօնները մինչեւ մէկ տարի թափուր մետն ձեռնէստ իշխանութեանց անհոգութենէն կամ այլ պատճառուն կեղրոնական կրթական Տեսչութիւնը պէտք եղած ազգարարութիւնն ընկելէ ետք՝ ինր կր նշանակելէ սահմանեալ պաշտօննեայն և անոր հաստատութիւնը կը պահանջէ համաձայն Յօդաց։

**317.** Կեղրոնական Կրթական Տեսչութիւնը կը հսկէ որ յանուն Ազգային կրթութեան եղած կտակներն անթերի գործադրութին և Ազգին մէջ կրթութիւն տարածելու նրա պատական կազմութեալ բարեգործական ընկերութիւնները իրենց նորանուկին համաձայն գործեն, և տարին անգամ մը տեղեկացիր և հաշիւ կտանու յիշեալ կտակաց գործադրիներէն և ընկերութիւններէն։

**318.** Կեղրոնական Կրթական Տեսչութիւնը կտակաց և ընկերութեանց հաշիւներն քննելէ ետք Կեղրոնական Տեսչութեան կը յդէ զանոնը հանդերձ իւր դիտական թիւններով։

**319.** Եթէ այդ հաշուց մէջ նենդութիւն բարու կամ կտակաց գործադրիր կտակառարի կտակին և ընկե-

րութիւնք իրենց նարտասկին հսմաձայն վարուած չըլլան՝ Աղդային վարչութիւնը անոնց գէմ դատ կը բանայ ձեռն հոս Աստեաններու առջև :

**320.** ա. Կողմանական Կրթական Տեսչութիւնը իր հոկողութիւնը կը զործադրէ գաւառաց մէջ Գաւառական Կրթական Տեսչաց, խոկ Պօլսոյ մէջ Այցելու Տեսչաց մէջ չոցու . կը հազորդէ անոնց և անոնց միջոցաւ Կրթական բալոր իշխանութեանց և պաշտօնէից իր դիտութիւնները, կարգադրութիւններն ու հրահանգները և կը պահանջէ անոնցմէ կարեւոր դատած տեղեկասթիւնքն ու բացառութիւնքը :

բ. Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը կը հայ ի պահանջել հարկին ուղղակի յարաբերութիւն ունենալ Կրթական իշխանութեանց և պաշտօնէից հետ :

**321.** ա. Կեդր. Կրթակ. Տեսչութիւնը Պօլսոյ Այցելու Տեսուչներէն երեք ամիսն անդամ մը եւ Գաւառական Կրթական Տեսչութիւններէն վեց ամիսն անդամ մը ցուցակաձեւ, խոկ տարին անդամ մը ընդհանուր տեղեկագիր կ'առնու կրթական հաստատութեանց վիճակին վրայ հանդերձ վիճակադրական ցուցակը :

բ. Տարեկան տեղեկագիրները երեք տարին անդամ մը պէտք է մանրամասն տեղեկութիւնը պարունակեն կրթական հաստատութեանց ներքին եւ արտաքին պայմաններուն, այսինքն դպրոցական չէնքերու եւ գոյից, ուսմանց միջոցներու, պաշտօնէից եւ աշակերտաց, հասութից եւ ծախուց եւ այլ ամենայն կարեւոր նիւթոց վրայ, եւ միանդամայն պէտք է ներկայեն անոնց բարդաւաճման եւ յառաջադիմութեան նկատմամբ կարեւոր դատուած միջոցներու առաջարկութիւնք :

գ. Տեղեկադրոց եւ ցուցակաց պարունակելիք նիւթոց մանրամասնութիւնները Կեդր. Կրթական Տեսչութիւնը կ'որոշէ :

**322.** Կեդր. Կրթական Տեսչութիւնը Գաւառաց վարժարաններուն վիճակին մօտէն վերահասու ըլլալու համար ի սկանչել հարկին արտաքոյ կարդի քննութիւնք կ'ընէ մասնաւոր քննչաց միջոցաւ եւ իր քննութեանց արդիւնքը կը ներկայէ Աղդ. Ժողովոյ առանձին տեղեկադրով :

**323.** Կեդր. Կրթական Տեսչութիւնը իր համարատութիւնը կը կատարէ Սահմանադրական տարեզըլ-

խուն՝ ներկայելով Աղդ. Ժողովոյ Աղդային կրթութեան ընդհանուր վիճակը, իր ըրած տնօրէնութիւններն ու կարեւոր դատած առաջարկութիւնները :

#### 4. ՊԱՐՏԻՔ

**324.** Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը մասնաւոր փոյթ կը տանի

1. Վարժապետանոց մը հիմնելու (Յօդ. 407).
2. Մանկավարժական դասախոսութիւնը հաստատելու (Յօդ. 273).

3. Աղդային կրթութեան պաշտօնէից ներկան բարւոքելու եւ ասլագան ապահովելու նպատակաւ Մայրաքաղաքիս մէջ ընդհանուր ընկերութիւն մը կազմելու եւ Գաւառական Կրթական Տեսչաց միջոցաւ գաւառաց մէջ մասնաւոր ճիւղեր հաստատելու .

4. Կեդրոնական Մանկավարժական թանգարան եւ Մատենադարան մը հաստատելու .

5. Մանկավարժական հանդէս մը, դասադրքեր ինչպէս եւ դասական այլ միջոցներ եւ մատենադարանաց համար պիտանի զրքեր հրատարակելու կամ հրատարակել տալու .

6. Վարժապետանոցի եւ ուսումնարանաց ուսուցիչներ պատրաստելու համար բարձրագոյն ուսումնարանաց մէջ աշակերտներ դնելու [ յօդ. 267 ].

**325.** Կեդրոնական Կրթական Տեսչութիւնը կը պատրաստէ եւ կը հրատարակէ

1. Ուսմանց ընդհանուր ծրագիրներն ու վարժարանաց կազմակերպութեան եւ բարեկարգութեան ընդհանուր կանոնագիրները .

2. Ուսուցման եղանակաց հրահանդները .

3. Աշակերտաց եւ վարժապետաց քննութեանց եւ մրցմանց կանոնները .

4. Վարժապետական ժողովոց կազմական կանոնագիրը .

5. Մանկավարժական դասախոսութեանց ծրագիրն ու կանոնագիրը .

6. Աղդային վարժարանաց մէջ գործածուելիք օրագրութեանց, ժամանակացոյցներու, այլ եւ այլ տուամրաց եւ ցուցակաց, վկայականներու եւ վիճակացոյցներու, ինչպէս եւ սահմանեալ տեղեկադրոց մասնաւոր հրահանդներն ու ձեւերը .

7. Ազգային վարժարանաց մէջ գործածուելիք դասագրոց եւ այլ դասական միջոցներու եւ դպրոցական մատենադարաններու մէջ ընդունուելիք զրեանց ցուցակները .

8. Վարժարանաց եւ զրասեղանաց շինութեան վերաբերեալ հրահանգները .

9. Գաւառական , Այցելու եւ ներքին Տեսչաց եւ Հոգարադուաց պաշտօնին վերաբերեալ հրահանգները , եւ այլ ամէն բան ի՞նչ որ իւր պաշտօնին բնութիւնն ու Օրինաց տրամադրութիւնքը պահանջեն :

**5. ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԻՏՈՅԻՑ  
ՀԱՍՏԱՏՈՒՆ ԵԿԱՄՈՒՏ ԵՒ ԱՐԿԴ.**

**326.** Ազգային Կեդրոնական Վարչութեան արտօնութիւն կը տրուի ազգային կրթութեան ընդհանուր սիստեմից համար հաստատուն եկամուտ կազմելու . եւ տարեկան ծախուց համար կեդրոնական կրթական արկդ հաստատելու :

(Համարակակիցներ )

**327. Հաստատուն եկամուտ կազմելիք միջոցներն են՝**

1. Այն ազգային կալուածներն որ մասնաւոր թաղի , գաւառի կամ հաստատութեան մը սեփականութիւն չեն .

2. Յանուն ընդհանուր ազգային կրթութեան եղած իտակներն ու նուէրները , որոց անօրինութիւնը մասնաւոր անձի կամ մարմնոյ մը չէ յանձնուած :

3. Ազգայնոց ըրած կտակներու արժէքն կէս առ հարիւր ,

4. Իր արկդի հասոյթին տասներորդ մասը .  
( Յօդ . 328 ) .

( Կրթութեան արկդ )

**328. Կեդրոնական կրթական արկդի ազրիւներն են՝**

1. Հաստատուն եկամտից տարեկան հասոյթը .

2. Կեդրոնական Սնտուկի հասոյթին առ նուազն հինգերորդ մասը .

3. Իր հրատարակութեանց արդիւնքէն գոյանալիք հասոյթը .

4. Մասնաւոր նպաստք եւ նուէրք .

5. Արտօնագրոց տուրքէն գոյացած հասոյթը [Յօդ . (308)] .

6. Կեդրոնական Ուսումնարանէն գոյացած հասոյթը (Յօդ . 456) .

7. Վաւերանալիք դասագրքերէն եւ այլ դասական միջոցներէն հազար օրինակէն քսան օրինակ .

8. Այն վանօրէից հասոյթին չորրորդ մասը՝ որք վարժարան չունին :

**329. Ազգային ընդհանուր կրթութեան հաստատուն եկամուտն անհպելի է եւ անոր , ինչպէս եւ կեդրոնական կրթական Արկդի հասոյթները իրենց նպաստակէն դատ ո եւ է ուրիշ բանի չեն կրնար գործածուիլ :**

**330. Ազգային ընդհանուր կրթութեան պատկանակալ Հաստատուն եկամտին տնօրինութիւնը Վարչական Խորհրդոյ կը վերաբերի , իսկ Կեդրոնական կրթական Սրկդինը՝ կրթական Խորհրդականին , որ իր տարեկան տեղեկագրին (Յօդ . 323) հետ կը ներկայէ Ազգ . Ֆոզովոյ եւ իր մատակարարութեան հաշիւն . իսկ յաջորդ տարուան պիտածէն պէտք է ներկայէ տարեգլխէն զէթ երկու ամիս առաջ :**

**6. ԴԻՒԱՆ**

**331. ա. Կեդրոնական կրթական Տեսչութիւնը իր յատուկ Դիւանը կունենայ՝ ուր մասնաւոր կանոնագրով մը սահմանեալ եղանակաւ կը պահուին բոլոր սլաշտօնական տրամադրութիւնները , տումարներն ու այլ թղթերը :**

**բ. Կրթական Խորհրդականը իր հրաժարման միջոցն Դիւանի զործերը կը յանձնէ ցուցակաւ իր յաջորդին :**

**ԴԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.**

**ԴԱՒՄՈՒՍԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ**

**1. ԳԱԼԻԱՌԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԵՍՉՈՒՆ**

**332. ա. Իւրաքանչիւր գաւառ կունենայ Գաւառական կրթական Տեսչուչ մը , որ Գաւառական Փողովին**

կը նորութիւն եւ Կեղրոնական Կրթական Տեսչութենէն կը վաւերանայ :

Բ. Գաւառական Կրթական Տեսչին պաշտօնը կը տեւէ երկու տարի :

**333 ա.** Գաւառական Կրթական Տեսուչը պատասխանատու են Գաւառական Ժողովին եւ Աղջային Կրթութեան Կեղրոնական Տեսչութեան :

Բ. Գաւառական Կրթական Տեսչին ստորադրեալ եւ պատասխանատու են նոյն գաւառին բոլոր Կրթական իշխանութիւններն ու պաշտօնեանները :

**334.** Գաւառական Կրթական Տեսուչը պէտք է ուսումնական անձ մ'ըլլայ եւ մանկավարժական զիտութեանց, ինչպէս եւ Կրթական օրինաց եւ վարչութեան մասնաւոր հմտութիւն ունենայ :

**335.** Գաւառական Ժողովը չի կրնար Կրթական Տեսուչը հրաժարեցնել առանց կանխաւ իր որոշումը Կեղրոնական Կրթական Տեսչութեան ծանուցանելու :

**336.** Կեղրոնական Կրթական Տեսչութիւնը երբ կստուգէ թէ Գաւառական Կրթական Տեսուչ մը պարտազանցութեան կամ յանցանաց մէջ կը գտնուի՝ բացատրութիւն կուղէ նոյն Տեսչէն եւ եթէ բացատրութիւնը զոհացուցիչ չի գտնէ՝ անոր պաշտօնանկութիւնը կառաջարկէ Գաւառական Ժողովին : Եթէ մինչեւ երեք ամիս իր առաջարկութիւնը նկատողութեան չառնուի՝ ինք կը հրաժարեցնէ նոյն Տեսուչը եւ անոր տեղ ուրիշ մը կը կարգէ առժամանակեայ կերպով մինչեւ որ Գաւառական Ժողովը նոր Տեսչի մը ընտրութիւնն ընէ :

## 2. ՏՆՈՐԵՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ ԳԱԽԸՆԻՒ

**337.** Գաւառական Կրթական Տեսուչը թոշակաւոր պաշտօնեայ մը կունենայ «Տնօրէն վարժարանաց գաւառին» անուամբ :

**338 ա.** Տնօրէնը պէտք է 334 յօդուածին տրամադրած հանգամանքն ունենայ, Գաւառական Կրթական Տեսչէն ընտրուի եւ Կեղրոնական Կրթական Տեսչութենէն հաստատուի :

Բ. Գաւառական Ժողովը կրնայ Տնօրէնի ընտրու-

թիւնը կամ անոր վաւերացումը, ինչպէս եւ Տնօրէնի ուժկի որոշումը կամ անոր վաւերացումը կրնայ իրեն վերապահել :

**339.** Տնօրէնին պաշտօնը երկու տարի կը տեւէ :

**340.** Տնօրէնը ներկայ կը լլայ Գաւառական Ժողովովոյ նիստերուն՝ երբ անոնց օրակարգին մէջ Կրթութեան վերաբերեալ խնդիր կայ եւ՝ եթէ անդամ չէ նոյն Ժողովոյն՝ միայն ձայն կունենայ :

## 3. ՊԱՇՏՈՆ, ՊԱՐՏԻՔ ԵԽ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

**341.** Գաւառական Տեսչաց պաշտօնն է՝ 1. Գաւառին մէջ գտնուած բոլոր թաղային, բարեգործական, վանական և մասնաւոր կրթական հաստատութեանց հսկողութիւնն, 2. Հաստատեալ օրինաց, կանոնաց և Կեղրոնական Կրթական Տեսչութեան տուած հրահանգաց գործադրութիւնը, 3. Ասորակարգեալ Կրթական Իշխանութեանց որոշումներու վերաբննութիւնը և վաւերացումը և 4. Սահմանեալ քննութեանց կատարումը (Յօդ. 290) :

**342.** Գաւառական Կրթական Տեսչաց գլխաւոր պարտականութիւնն են՝

1. Ալին ջանք ի գործ դնել որ ամէն տեղ Օրինաց սահմանած վարժարանները հաստատուին և արդէն հաստատուածները Օրինաց տրամադրութեանց համաձայն վիճակի մէջ դրուին .

2. Կրթութիւն տարածելու նպատակաւ ընկերութիւններ կազմելու քաջալերել, կազմուածներուն յարատեւութեանը աշխատիլ և հսկել միանգամայն որ անոնք իրենց նպատակին համաձայն դրծեն .

3. Յանուն կրթութեան եղած կտակաց անթերի գործադրութեանը հսկել .

4. Աղջային կրթութեան յառաջադիմութեան, ինչպէս եւ կրթական պաշտօնէից վիճակը բարւոքելու եւ ապագայն ապահովելու միջոցներ խորհիլ եւ առաջարկել .

5. Վարժապետական ժողովներու կազմութեան հոգ տանիլ եւ անոնց արդիւնաւոր ուղղութիւն տալ .

6. Վարժապետներ եւ վարժուհիներ պատրաստելու (Յօդ. 238), Մանկավարժական դասարաններ (Յօդ. 247) եւ մանկավարժական դասարանութիւնը (Յօդ. 278) հաստատելու մասնաւոր փոյթ ունենալ .

7. Գաւառական մանկավարժական մատենադարան եւ թանգարան մը հաստատելու հոգ տանիլ .

**343.** Գաւառական կրթական Տեսուչք իրենց զաւառին՝ մէջ թափուր մնացած ողաշտօններու նկատմամբ Օրինաց 346 յօդուածին համաձայն կը վարուին եւ անմիջապէս տեղեկութիւն կուտան կեղրոնական կրթական Տեսչութեան :

**344.** Գաւառական կրթական Տեսուչք իրենց հըսկողութիւնը կը կատարեն Այցելու Տեսչաց (Յօդ. 358) միջոցաւ՝ համաձայն Օրինաց 320 եւ 321 յօդուածոց տրամադրութիւններուն :

**345.** Գաւառական Տեսչութիւնք Այցելու Տեսչաց տեղեկագիրները քննելէ ետք՝ իւրաքանչիւր վարժարանի մասին իրենց ունեցած զիտողութիւնները կը հաղորդեն Հոգաբարձուաց եւ Տեսչաց եւ անոնց միջոցաւ բոլոր պաշտօնէ ից ի նկատառումն :

**346 ա.** Գաւառական կրթական Տեսուչքի պահանջել հարկին անձամբ կայցելէն իրենց հսկողութեանը տակ զանուած վարժարանները, կամ մասնաւոր քննչաց միջոցաւ վերահասու կը լավան անոնց վիճակին եւ իրենց քննութեանց արդիւնքը կը ներկայեն մասնաւոր տեղեկագրով Գաւառական ֆողովին եւ կեղրոնական կրթական Տեսչութեան :

բ. Այցելութեանց ծախքը կը հոգացուի Գաւառական կրթական (Յօդ. 353) կամ ընդհանուր սնառուիլին :

**347 ա.** Գաւառական կրթական Տեսուչք առ նուազն տարին երկու անգամ, զարնան մէջ եւ աշնան սկիզբը կամ ամառուան արձակուրդի միջոցին ի ժողով կը դումարեն իրենց Այցելու Տեսուչները՝ դաւառին բոլոր կրթական հաստատութեանց ներքին եւ արտաքին պայմաններուն վրայ մանրամասն տեղեկութիւնք առնելու, անոնց յառաջադիմութեան միջոցներուն վրայ խորհրդակցելու եւ մանրամասն հրահանգներ տալու համար :

բ. Փողովոյ նիստերն առնուազն երեք օր կը տեսէն :

**348.** Գաւառական կրթական Տեսչութիւնք պէտք է միշտ իրարու հետ յարաբերութեան՝ մէջ զանուին եւ ուշադրութեան արժանի խնդիրները իրարու հաղորդեն, որպէս զի գլխաւոր կարգադրութեանց մէջ ըստ կարել-

ւոյն սկզբանց եւ տեսակէտներու միօրինակութիւն հաստատուի եւ փոխադարձաբար իրարու փորձառութենէն օդուիլ կարենան :

**349.** Իւրաքանչիւր Գաւառական Տեսչութիւն կը բննէ եւ իր դիտողութիւններովը հանդերձ կեզրոնական կրթական Տեսչութեան վաւերացմանը կը ներկայէ իր գաւառին մէջ կազմուած կրթական ընկերութեանց կանոնագիրները, խնդիրէն եւ վանական եւ բարեգործական վարժարանաց հաշիւնները, ուսմանց ծրագիրներն ու կանոնագիրները :

**350.** Իւրաքանչիւր Գաւառական կրթական Տեսչութիւն Օրինաց 321 յօդուածին սահմանած տեղեկադիրները կը ներկայէ թէ կեզրոնական կրթական Տեսչութեան եւ թէ Գաւառական ժողովին :

#### 4. ՀԱՍՏԱՏՈՒՆ ԵԿԱՄՈՒՏ ԵՒ ԱՐԿԴ

**351.** Իւնոքանչիւր գաւառ իր ընդհանուր կրթութեան պիտոյից համար կունենայ հաստատուն եկամուտ եւ արկդ :

(ՀԱՍՏԱՏՈՒՆ ԵԿԱՄՈՒՏ)

**352.** Հաստատուն եկամտի աղբիւրներն են՝

1. Գաւառին մէջ զանուած այն աղղային կալուածներն որ մասնաւոր տեղեւոյ կամ հաստատութեան սեփականութիւն չեն .

2. Յանուն գաւառին ընդհանուր կրթութեան եղած կտակներն ու նուէրները, որոց տնօրինութիւնը մասնաւոր անձի մը կամ մարմնոյ չէ յանձնուած .

3. Գաւառական կրթական արկդի հասոյթին տասներորդ մասը ,

(ԵՐԵՒՔՆ ՊՐԻՆ)

**353.** Գաւառական ընդհանուր կրթութեան Արկդի աղբիւրներն են՝

1. Հաստատուն եկամտի տարեկան հասոյթը .

2. Գաւառական մնառուկի հասոյթին առնուազն երրորդ մասը .

3. Մասնաւոր նպաստք եւ նուէրք .

4. Գաւառական ուսումնարանէն գոյացած հասոյթը (Յօդ. 159) :

5. Արտօնագրաց տուրքը (Յօդ. 290 թ. գ.  
եւ 308) :

6. Այն վանօրէից հասոյթին չորրորդ մասը  
որք վարժարան չունին :

**354** ա. Գաւառական կրթութեան ընդհանուր  
պիտոյից համար՝ սահմանհալ հաստատուն եկամտին անօ-  
րէնութիւնը Գաւառական Վարչական Խորհրդոց կը վե-  
րաբերի . իսկ Կրթական Արկդինը՝ Գաւառական Կրթա-  
կան Տեսչութեանց , որք իրենց տարեկան տեղեկադրոց  
հետ կը ներկայեն Գաւառական Ժողովոց եւ իրենց մատա-  
կարարութեան հաշիւներն :

Բ. Ցաջորդ տարուան պիտաճէն պէտք է ներկայեն  
տարադլիւն զէթ երկու ամիս առաջ :

**355.** Գաւառական կրթութեան ընդհանուր պի-  
տոյից հաստատուն եկամտուր անպելի է եւ անոր , ինչ-  
ովէս եւ Կրթական արկդի հասոյթը իր նոդատակէն զատ  
ո եւ է բանի չի կրնար դուծածուիլ :

**356.** Գաւառական Ժողովը եւ Վարչութիւնը  
պարտաւոր են ամէն ջանք եւ միջոց ի դործ դնել գա-  
ւառաց ընդհանուր կրթութեան պիտոյից եկամտաներն  
աճեցնելու :

### 5. ԴԻԽԱՆ

**357.** Գաւառական Կրթական Տեսչութիւնը իրենց  
դիւանը կունենան եւ անոր կարդադրութիւնն ու իրենց  
յոջորդին յանձնումը կը կատարեն Օրինաց 331 յօդուա-  
ծին համաձայն :

## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

### ԱՅՑԵԼՈՒ ՏԵՍՈՒՀՐ

#### 1. ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԿՐԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՑ

**358** ա. Խւրաքանչիւր դաւառ իր ընդարձակու-  
թեան ու վարժարանաց թուոյն համեմատ Կրթական շըր-  
ջանակներու կը բաժնուի եւ խւրաքանչիւր շրջանակի  
դպրոցաց եւ ստորին ուսումնարանաց հսկողութիւնը մէկ  
Այցելու Տեսչի կը յանձնուի :

Բ. Դպրոցաց եւ ուսումնարանաց հսկողութիւնը  
կրնայ մէկ Այցելու Տեսչի յանձնուիլ՝ եթէ ուսումնարա-  
նաց թիւը հինգէն աւելի չէ եւ Այցելու Տեսուշը Օրինաց  
363 յօդուածին տրամադրած Արտօնագիրն ունի :

**359** ա. Գաւառական կրթական շրջանակաց թիւը  
Գաւառական Տեսչութեան առաջարկութեամբ Գաւա-  
ռական Ժողովը կորոշէ եւ Կեղրոնական Կրթական Տես-  
չութիւնը կը հաստատէ :

Բ. Մայրաքաղաքաց ու իր արուարձանները երկու  
Կրթական շրջանակի կը բաժնուին :

### 2. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՅՑԵԼՈՒ ՏԵՍՈՒՀՐ

**360** ա. Այցելու Տեսչաց ընտրութիւնը Գաւառա-  
կան Կրթական Տեսչութիւնը կը նեն և Կեղրոնական Կրթ-  
ական Տեսչութիւնը կը վաւերացնէ . իսկ անոնց ոսճիկը  
և ոյցելութեանց ծախսերը նոյն Տեսչութիւնը կը սահմա-  
նեն և Գաւառական Ժողովը կը վաւերացնեն :

Բ. Գաւառական Ժողովը կրնան Գաւառական Կրթ-  
ական Տեսչաց ընտրութիւնը կամ անոր վաւերացումը ,  
ինչովէս և ոսճիկի և ոյցելութեանց ծախսերու որոշումը  
իրենց վերապահէլ :

գ. Մայրաքաղաքաց Այցելու Տեսչաց ընտրութիւնն  
ու անուանումը Վարչական Կազմակերպութեան Օրինաց  
16րդ յօդուածին համաձայն կը լսայ :

**361.** Այցելու Տեսուչը նախ երկու տարուան հա-  
մար կը նշանակուին և յետոյ վեց տարուան համար կը  
հաստատուին իրենց պաշտօնին մէջ (Յօդ. 221 թ. և դ.) :

**362.** Ստորին և Բարձրագոյն դպրոցաց Այցելու  
Տեսուչ ընտրուելու համար գէթ Բարձրագոյն դպրոցի  
վարժակետի վերջնական ընդհանուր Արտօնագիր (Յօդ.  
297, 300 և 306 Պ.) ունենալու է :

**363.** Ստորին ուսումնարանաց Այցելու Տեսուչ  
ընտրուելու համար գէթ Ստորին ուսումնարանի ուսուցի  
վերջնական ընդհանուր Արտօնագիր (Յօդ. 297, 300 և  
306 Պ.) ունենալու է :

**364.** Օրինաց 218, 219, 221 դ. , և 222, 223 ա.  
224-237 յօդուածները Այցելու Տեսչաց ալ կը վերաբերին :

## Յ. ՊԱՇՏՕՆ, ՊԱՐՖԻՔ ԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅԻՆՔ

**ՅԵԶ. 365.** Այցելու Տեսչաց պաշտօնն է 1. իրենց շըրջանակին մէջ գտնուած բոլոր թաղային, բարեգործական, վանական և մասնաւոր կրթական հաստատութեանց անմիջական հսկողութիւնը, 2. հաստատեալ Օրինաց և կանոնաց և Կեդրոնական կամ Գաւառական Տեսչութեան հրահանգաց գործադրութիւնը և 3. սահմանեալքըն նութեանց (Յօդ. 290 գ. ոլրը.) կատալումը:

**ՅԵԶ. 366.** Այցելու Տեսուչք իրենց հսկողութիւնը կը կատարեն Կեդրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան մասնաւոր հրահանգաց համաձայն շարունակ վարժարաններն այցելելով և հարկ դաստած տառննին Հոգութարձուներէն և Տեսուչներէն տեղեկութիւնը տռնլով, և գէթ վեց ամիսն անգամ մը կատարեալ կերպով կը քննեն իւրաքանչիւր վարժարանի ներքին և արտօնքին վիճակը և ըստ այն կը պատրաստեն իրենց տարեկան տեղեկագիրը:

**ՅԵԶ. 367.** Այցելու Տեսուչք իրենց այցելութեանց միջին ուշադրութիւն կը դարձնեն զլխաւորապէս՝ 1. աշտակերտաց կրթութեան, վարուց և առողջութեան վիճակին և անոնց կանոնաւոր կերպով դորոց յաճախելուն. 2. վարժարանաց ներքին կազմակերպութեան և բորեկարգութեան և օրագրութեանց և ցուցակաց կանոնաւոր գործածութեան. 3. վարժարանաց շնորհերու և գրասեղանաց, դասական միջոցոց և մատենադարանաց, ինչպէս և բուլոր գոյից վիճակին. 4. ուաշտօնէից և Հոգութարձուաց պաշտօնավարութեան. 5. զիսուզութեանց տեսորի պարունակութեան. 6. Հոգութարձուաց և ներքին Տեսչաց պաշտօնական [դիւանի] արձանագրութեանց և թղթոց վիճակին. 7. Պաշտօնէից սոճիկ կանոնաւոր վճարման և վարժարանաց հաշիւներուն և 8. զարոցական շնութեանց և նորոգութեանց :

**ՅԵԶ. 368.** Այցելու Տեսուչք իրենց զլխաւոր դիմողութիւններն ու հրահանգները մասնաւոր պաշտօնագրով կը հաղորդեն Հոգութարձուաց կամ ներքին Տեսչաց :

**ՅԵԶ. 369.** Այցելու Տեսուչք մասնաւոր ուշադրութիւն կը դարձնեն դասաստութեանց եղանակներուն և կերպերուն, անոնց Օրինաց պահանջած ուղղութիւնը [Յօդ. 74] կուտան և գործնական կերպով կը հրահանգնեն վարժապետները :

**ՅԵԶ. 370 ա.** Այցելու Տեսուչք իրենց այցելութեանց միջոցին միշտ կը տեսակցին և կը խորհրդակցին վարժարանաց Հոգութարձուաց և Թաղային Վարչութեանց և Փողովոց անդամոց, ինչպէս և այլ աղղեցութեան տէր անձանց հետ, կառաջարկեն անոնց ինչ որ կրթութեան բարգաւաճմանը համար օդտակար և կարեւոր կը դատեն և կը յորդորեն զանոնք առ ոյն իրենց ջանփերն ու աջակցութիւնը չխնայելու :

Բ. Նմանագույն կը յորդորեն դպրոցական պաշտօնեաներն իրենց պարտուց անթերի կատարման, կօգնեն անոնց իրենց խորհուրդներովն, կը պաշտանեն անոնց իրաւունքները, կը քաջալերեն վարժապետական ժողովոց դումարումները և կը ջանան ներկայ ըլլալ և արդիւնաւոր ուղղութիւն տալ անոնց ընթացքին :

**ՅԵԶ. 371.** Այցելու Տեսուչք ներկայ կը լաւ Թաղային Վարչութեանց և Փողովոց նիստերուն՝ երբ անոնց օրակարգին մէջ կրթութեան վերաբերեալ ինդիր կայ և եթէ անդամ չեն՝ միայն ձայն կունենան :

**ՅԵԶ. 372 ա.** Այցելու Տեսուչք երեք ամիսն անգամ մը ցուցակածն, իսկ դպրոցական տարեգլխուուն, իրենց շրջանակին բոլոր թաղային և այլ վարժարանաց քննութիւնները կատարելէ ետք, ընդհանուր տեղեկագիր կը ներկայ գաւառական Տեսչութեան՝ հանդերձ իրենց դիմուլութիւններովն ու առաջարկութիւններովը :

Բ. Երեք տարին անգամ մը տարեկան տեղեկագիրը պէտք է օրինաց 324 յօդուածի բ. պարբերութեան տըրամազրութեանց համաձայն ըլլաց :

## 4. ԴԻԽԱՆ

**ՅԵԶ. 373.** Այցելու Տեսուչք ուսութանուր են 1. իրենց տեսչութեան և կարգագրութեանց կանոնաւոր արձանագրութիւններ բանել. 2. վարժարանաց, աշակերտաց, ուաշտօնէից կանոնաւոր ցուցակներն ունենալ. 3. իրենց ընդունած ուաշտօնական թղթերուն հակիրճ բավանդակութիւնը յատուկ տեսորի մը մէջ կարգաւ նշանակել և 4. իրենց յղած սրացանական դրամներուն և տեղեկագրոց պատճէնները պահել :

Բ. Այցելու Տեսուչք պարտաւոր են այդ բոլոր պաշտօնական թղթերը ինամօք պահպանել և իրենց հրաժարման միջոցին իրենց յաջորդին յանձնել կանոնաւոր

ցուցակով և անկէ ընկալազիր առնլով Գաւառական Կըրթական Տեսչութեան ներկայել :

## ԳԼՈՒԽ 20ՐՐՈՐԴ

### ԿՐԹՄԱՆ ՀՈԴԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՔ



### ԴՊՐՈՑՍՅ ՀՈԴԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՔ



#### 1. ՀՈԴԱԲԱՐՁՈՒՔ

**374.** Թաղին կողմէն վարժարանաց անմիջական հսկողութիւնն ու մատակարարաբութիւնը կընեն թաղային Կրթական Հոգաբարձուք, որք թաղային ժողովներէն կընտրուին և կեդրանական կամ Գաւառական Կրթական Տեսչութեան կը հաստատուին :

**375 ա.** Հոգաբարձու կրնան ընտրուիլ առ նուազն 25 տարեկան, բարի վարուց տէր, խոհական և լուսաւորեալ կամ կրթութեան բարեկամ անձինք :

Բ. Զեռնհաս տիլիններ և օրիորդներ ալ կրնան Հոգաբարձու ընտրուիլ մանաւանդ՝ երկսեռ և առջկանց վարժարանաց համար :

**376.** Հոգաբարձուաց ընտրութիւնը դպրոցական տարեգլխէն ամիս մը առաջ կը կատարուի, իրենց պատոնը նոյն տարեգլխան կակի և երկու տարի կը տեէ :

**377.** Եթէ թաղին մէջ դպրոցին նպաստելու նպատակաւ կազմուած ընկերութիւն կայ՝ Թաղային ժողովը կրնայ նոյն ընկերութեան անդամոց մէջէն ընտրել նախընթաց 375 յօդուածին տրամադրութեանց համաձայն Հոգաբարձուն կամ Փոխ—Հոգաբարձուն (Յօդ. 381) :

**378 ա.** Միացեալ թաղերու (Յօդ. 23) դպրոցաց Հոգաբարձուները Թաղային ժողովները կընտրեն միացեալ նիստ կազմելով :

Բ. Նոյն եղանակու կը կատարեն և իրենց համարանիւնը :

**379.** Թաղական ժողովը չեն կրնար Հոգաբարձու կամ Փոխ—Հոգաբարձու մը հրաժարեցնելու տռանց կանխաւ իրենց որոշումը կեդրանական կամ Գաւառական Կրթական Տեսչութեան ծանուցանելու :

**380.** Կեդրանական կամ Գաւառական Կրթական Տեսչութեանը երր կառուգէ թէ Հոգաբարձու կամ Փոխ—Հոգաբարձու մը պարտազանցութեան կամ յանցոնաց մէջ կը գտնուի՝ բացատրութիւն կուզէ զոնոնք ընտրող Թաղային ժողովն և՝ եթէ բացատրութիւնը գոհացուցիչ չի գտնէ՝ անսոց պաշտօնանկութիւնը կառաջարկէ : Եթէ մինչեւ երեք ամիս իր առաջարկութիւնը նկատազութեան չառնուի՝ ինք կը հրաժարեցնէ նոյն Հոգաբարձուն կամ Փոխ—Հոգաբարձուն և անոր տեղ ուրիշ մը կարգէ տոժտանակեայ կերպով մինչեւ որ Թաղային ժողովը նոր Հոգաբարձուի կամ Փոխ—Հոգաբարձուի ընտրութիւնն ընէ :

#### 2. ՓՈԽ-ՀՈԴԱԲԱՐՁՈՒՔ

**381.** Թաղային ժողովը Հոգաբարձուին ընտրութիւնը կատարելէ ետք անոր կարծիքն առնելով Փոխ—Հոգաբարձու մը ես կընտրեն, որ Հոգաբարձուին բացակայութեանը անոր սրբածոնը կը վարէ իր անձնական պատախանատութեանը ներքեւ :

**382.** Օրինաց 375 րդ յօդուածին տրամադրութիւնը Փոխ—Հոգաբարձուաց ալ կը վերաբերին :

#### 3. ՕԳՆԱԿԱՆ-ՀՈԴԱԲԱՐՁՈՒՔ ԵՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒՀԻՔ

**383.** Մանչ տղայոց դպրոցաց համար Հոգաբարձու կամ ձեռնհաս տնձերէ (Յօդ. 375) Օգնական—Հոգաբարձու ընտրել, իսկ առջկանց կամ երկսեռ դպրոցաց համար պէտք է մէկ կամ երկու ձեռնհաս Խնամակալուհի ընտրեն :

**384.** Օգնական—Հոգաբարձու և Խնամակալուհի անձնապէտ պատշտօնական պատասխանտուութիւն չեն ունենար և իրենք իրենց ո և է կարգադրութիւն չեն ըներ, այլ միայն խորհրդատու ձայն կունենան :

**385.** Օգնական—Հոգաբարձուաց և Խնամակալուհի պատշտօնն է դպրոցները ոյցելել և իրենց դիտողու

Թիւնքն այցելուաց տեսլին մէջ նշանակել կամ զանանք ուղղակի Հոգաբարձուին հազորգել, աշակերտները խրախուսել և որոշոնեանելը բաջակերել և ամեն դպրոցական խնդրոց մէջ Հոգաբարձուաց օդնել :

## 4. ԳՈՐԾԱԿԱԼՔ

**386 ա.** Հոգաբարձուք կրնան իրենց սրատասիսանառութեանը ներփե գործակալ մը ունենալ և անոր յանձնել վործարանաց չէնքին, զոյից և մատակարարութեան վերաբերեալ գործերը :

Բ. Գործակալաց ընտրութիւնը Հոգաբարձուք կը լինեն և Թաղային ժողովք կը վաւերացնեն :

Գ. Գործակալք կրնան վարձատրութիւն ստանալ, որուն քանակութիւնը Թաղային ժողովք կորոշեն :

## 5. ՊԱՇՏՈՆ, ՊԱՐՏԻՔ ԵԽ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

**387.** Հոգաբարձուաց պաշտօնն ու պարտիքն են՝

1. Հաստատեալ Օրէնքն ու կանոնները և Թաղային ժողովոց և բարձրագույն կրթական իշխանութեանց հրահանգներն ու որոշամենքը գործադրել .

2. Էստ կարելոյն յաճախ այցելել դոլոցները և 3-4 չարտիք անգամ մը ի խորհուրդ գումարել Օւնական-Հոգաբարձուներն ու Խնամակալուհիները .

3. Օվնել բանիւ և գործով դպրոցական պաշտօնէից և հսկել որ անոնք իրենց սրատանը խղճի մարկարեն .

4. Հսկել աշակերտաց վարոց և կրթաթեան և դպրոցաներին բարեկարգութեան վրա .

5. Վարժարանաց չէնքն ու գոյրերը լու վիճակի մէջ սրահել .

6. Վարժարանաց հաստատուն եկամտից և արկդին աղբիւրները աճեցնել և ապահովել և ծախքերը բանաւոր խնայողութեամբ ընել .

7. Պաշտօնէից ոօմիկները ժամանակին և ճրշդութեամբ վճարել և աշակերտաց թօշակները կամ կը թական ստորքը անկորուստ հաւաքել .

8. Վարժարանաց բալոր պիտոյրը ժամանակին հոգալ .

9. Աշակերտաց կանանաւոր երթեւեկութեանը մէջ հոգ տանիւ և ծնողաց պարտավանցութեանց նկատմայի Օմինաց արամազըրութիւնը անաշառալիս գործադրել (Յօդ. 51) :

**388.** Թաղային ժողովք կրնան վիրենց ընտրած Հոգաբարձուաց պաշտօնն ու պարտաւորութիւնը մասնաւոր կանոնագրութիւնը պէտք է Օրինաց տրամադրութեանց և Կեղրոնական կրթական Տեսչութեան հրատարակելիք կանոնագրին համաձայն ըլլոյ և Կեղրոնական կամ Գաւառական կը թական Տեսչութեանը վաւերանայ :

**389.** Հոգաբարձուք և Փոխ-Հոգաբարձուք ներկայ կը լին Թաղային ժողովոց նիստերուն՝ երբ անոնց օրու կորզին մէջ կրթութեան վերաբերեալ խնդիր կոյ և՝ եթէ անդամ չեն՝ միայն ձայն կունենան :

**390 ա.** Հոգաբարձուք չեն կարող իրենց իրաւուսութենէն վեր կարգադրութիւններ ընել: Արտաքոյ կորզի ստիպողական սրադագաներու մէջ բացառութիւն կրնաց րլու, բայց պէտք է ամիջապէս գործին ստիպողականութիւնը բացառութեան և եղած անորմութեան վաւերացումը խնդրեն :

բ. Գաւառական կամ Կեղրոնական կրթական Տեսչութիւնը, ինչու և Թաղային ժողովք կրնան բարեկարգին կամ ոչնչացնել եղած անորմութիւնը՝ եթէ զայն Օրինաց համաձայն չի զանեն և անոր ստիպողականութիւնը չըն զունին :

**391.** Հոգաբարձուք մէծ փոյթ տանելու են որ թաղին աղքատ մանկանը կրթութենէ զուրկ չի մնան (Յօդ. 50 ր.) :

**392.** Հոգաբարձուք պէտք է բժիշկ գանուած տեղերը միշտ անոր օգնութեանը դիմեն դպրոցաց առողջապահական պայմաններուն մասին խորհրդակցելու համար :

**393.** Հոգաբարձուք Թաղային Վարչութեան և Քահանայից աջակցութեամբը ամէն տարի աղրիլ ամոց մէջ թաղին բալոր դպրոցական տարիի (Յօդ. 49, 58 և 78) անեցող աղջոց ցուցակը չինելու են, որպէս զի դպրոցական նոր ըրջանի ակնդրը ներկայ աշակերտաց հետ բաղդառնեն և դպրոց չյաճախազներու մասին բացառութիւն ուղին :

**394.** Հոգաբարձուք ամէն ջանք ի գործ զնելու են որ թաղայից հաւաքում և այլ գրամական գործողու-

թիւնք դոլրոցական պաշտօնէից վրայ չի ծանրանան , այլ ու և է ուրիշ եղանակաւ կատարուին :

**395.** ա. Հոգաբարձուք կամ Գործակազր պէտք է իրենց ըրած ծախքերը հաստատող ընկալազիրներ առնեն անոնցմէ որոց հետ որ զրամական յարարերութիւնը կունենան :

բ. Նմանապէս պէտք է իւրաքանչիւր դոլրոցական պաշտօնէի հետ մասնաւոր պայմանագիր կնքեն Օդինաց արամադրութեանց համաձայն [ Յօդ. 490 ] :

**396.** Հոգաբարձուք իրենց պատասխանառուութեան ներքեւ կրնան մինչև հինգ օսմանեան ուկի արտարոց կարգի ծախք ընել :

**397.** Հոգաբարձուք 3 ամիսն անգամ մը ցուցակաձեւ եւ ամէն տարեգլխու ընդհանուր տեղեկագիր 1ը ներկայեն Թաղային ժողովոց եւ Գոտառական կամ Կեղրոնական կրթական Տեսչութեան իրենց խնամոց յանձնուած դպրոցաց ներքին եւ արտաքին վիճակին վրայ՝ հանգերձ իրենց դիտողութիւններով ու առաջարկութիւններով :

**398.** Հոգաբարձուք իրենց տարեկան հաշիւները կը ներկայեն Թաղային ժողովոց , որք յատուկ մասնախըմբերու կը յանձնեն անոնց քննութիւնը : Հաշուեքնիչ մասնախումբք պէտք է հաշիւները ընկալագրաց հետ մի առ մի բաղդատեն եւ քննութիւնը կատարելէ ետք ներկայեն դայն Թաղային ժողովին : Թաղային ժողովը հաշուեցուցակը երկու շաբաթ ի տես ժողովրդեան կախելէ եւ եղած դիտողութիւնները նկատողութեան առնելէ ետք կը վաւերացնէ եւ կը ներկայէ Գաւառական կամ Կեղրոնական կրթական Տեսչութեան կրկին օրինակաւ , որք քննելով կը ներկայեն Վարչական Խորհրդին :

**399.** Հոգաբարձուք դպրոցական տարեգլխէն դէթերկու ամիս առաջ կը ներկայեն Թաղային ժողովին դպրոցաց յաջրոդ տարուան պիտածն : Թաղային ժողովք դայն քննելէ եւ վաւերացնելէ ետք կը ներկայեն Կեղրոնական կամ Գաւառական կրթական Տեսչութեան ի վաւերացումն :

**400.** Հոգաբարձուք պէտք է Այցելու Տեսչուց պահանջոծ ամեն աեղեկութիւն տան և անոնց հրահանգ:

ները ճշգիւ զործադրեն , և՝ եթէ ու և է օրինաւոր պատաճառ ունին զանոնք շի զործադրելու՝ պէտք է անմիջապէս Գաւառական կամ Կեղրոնական կրթական Տեսչութեան աեղեկագրեն :

**401.** Հոգաբարձուք կարգադրութիւն մ'ընելէ առաջ պէտք է Տեսուչ—վարժապետին կամ վարժուհոյն , և՝ եթէ վարժապետական խորհուրդ կոյ՝ և անոր կարծիքըն առնուն :

**402.** Հոգաբարձուք ու և է դիտողութիւն կամ յանդիմանութիւն պէտք չէ ընեն պաշտօնէից ի ներկայութեան աշակերտոց :

## 6 ԳԻՒԱՆ

**403.** Հոգաբարձուք պէտք է՝ 1. իրենց ըրած ուրոշմանց և կարգադրութեանց արձանադրութիւնը ըլունեն . 2. ընդունած պաշտօնական մլպի երր պահեն և զանոնք ընդունելութեան կարգովը տեսրակի մը մէջ նշանակեն . 3. իրենց յզուծ թվից օրուանձները պահեն . 4. պաշտօնէից պայմանները յատուկ տեսրի մը մէջ արձանագրեն . 5. վարժապահի հաշուետումարները և գոյից ցուցակը կանոնաւոր եղանակու բանեն և 6. այդ բոլորը իրենց հրաժարման միջոցին իրենց յաջորդին յանձնեն ցուցակու և անկէ ընկալազիր առնելով Թաղային ժողովին ներկայեն :




## ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՔ

**404.** ա. Խրարանչիւր Ուսումնարան իր յատուկ Հոգաբարձուն կունենայ :

բ. Եթէ ուսումնարանը թաղային դպրոցին հետ մէկ յարկի տակ գտնուի՝ երկուրին Հոգաբարձութիւնը կրնաց մէկ անձի յանձնուիլ :

**405.** Հոգաբարձուք իրենց պատասխանառուութեանը ներքեւ կրնան մինչև տասն օսմ. ուկի արտարոց կարգի ծախք ընել :

**406.** Օրինաց 374-392 , 394 , 395 և 397-403 յողուածները ուսումնարանաց Հոգաբարձուոց աւ կը վերաբերին :



## ՄԸՍՆ ՎԵՅՏՈՐԴ

ԱՌԴԱՄԱՆԱԿԵԱՅ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

**407.** Երբ հնար ըլլոյ վարժապետանոց և վարժականոց, ինչու և բարձրագյուղ աստիճանի մասնադիտական և տառամետական հաստատութիւններ հիմնել՝ Ազգայի վանոց խրաբանջիւրին համար մասնաւոր օրէնք կը հաստատէ :

**408.** Մինչև որ Օրինաց տրամադրած Գուտառական Տեսչութիւններն ու Այցելու Տեսուչները հաստատուին՝ Գուտառական Տեսչութեանց սրաշտոնք Ռատումետական Խորհուրդները կը վարեն՝ ուր որ նոյն Խորհուրդները կամ իսկ ուր որ չկան Աեղրանական կրթական Տեսչութիւնը ինք Այցելու Տեսուչները կը նշանակէ և անոնց միջոցաւ կը կատարէ իր հսկողութիւնը կամ ուղղակի յարաբերութիւն կը հաստատէ Հոգարարձուաց հետ :

**409.** Մինչև որ Թաղային Վարչութեան իրավունքը կերպութեան Օպէնքը հրատարակուի և գործադրութեան դրուի և ներկրոյ Օպինաց տրամադրութեանց համաձայն Կրթական Հոգարարձուաց [Յօդ. 374 և 404] ընտրութիւնները կատարածներ՝ վարժարանաց հսկողութիւնն ու մատակարարութիւնը Թաղական Խորհուրդներէն կազմեալ Հոգարարձութիւնք կը նեն ըստ սուտչնոցն :

**410.** Մինչև որ դպրոցական հաստատուն Եկամուտներն ու արկղները Օպինաց տրամադրութեանց համաձայն կազմութիւն ստանան (Յօդ. 36, 38 և 422) Թաղային սնուուկներու հասոյթին տանտուգն կը սը կրթութեան կը յատկանայ :

**411.** Ազգային վարժարանաց շէնքերն ու անոնց յարակից մասերը, գրասեղաններն ու վարժարանաց ներքին կողմութիւնը պէտք է Օրինաց և հրահանգաց պահանջած վիճակին մէջ դրուին—շէնքերը տառառաւելն հինգ տարուան, գրասեղաններն առառաւելն երկու, իսկ ներքին կազմութիւնը մինչև 1882—1883 դպրոցական տարւոցն սկիզբը [Մայիս] :

**412 ա.** Ներկրոյ Օրինաց հրատարակութենէն աւ

ռազմական գործադրութեան դրուած ուսմանց ծրագիրները միայն մինչև 1881-82 դպրոցական տարւոցն վերջը կրնան գործադրութիւն :

Բ. Այդ սպայմանաժամկը լրանալէ ետք ամէն ծրագիր՝ որ Օրինաց տրամադրութեանց համաձայն և Կեղրոնական կամ Գուտառական Տեսչութենէն վաւերացած չէ՝ առ ոչինչ կը համարուի և զայն գործադրող Հոգարարձուք և պաշտօնեցաւը յանցաւոր կը դատուին :

**413 ա.** Արտօնութիւն կը տրուի Կեղրոնական Կըրթական Տեսչութեան որ ներկրոյ Օրինաց հրատարակութեան միջոցին սրաշտոնի մէջ գտնուող վարժապետաց և վարժուհեաց երեք տարուան համար վկայագրեր տայ իւրաքանչիւրին իր կարողութեան համեմատ, եթէ ստուգէ որ 1. Օրինաց սրահանջած տարիին (Յօդ. 47, 186, 187 և 214), 2. բարի վարը և 3. փոքրի շատէ իրենց ստանձնած սրաշտոնին սրահանջած հմտութիւնքն ու յարմարութիւնն ունին :

Բ. Այդ վկայագիրն ստացողները եթէ երեք տարին լրանալէ ետք Օրինաց սահմանած բննութիւննը տալով Արտօնագիր չասանան [Յօդ. 306 Ա. և Ե.], այնուհետեւ վարժուակետութեան սրաշտոն վարելու իրաւունքն կը դրկուին :

**414.** Օրինաց 295 յօդուածի արամադրութիւնները այն վկայագիրը խնդրողներուն ալ կը վերաբերին :

**415.** Նորիցնթաց 413 րդ. յօդուածին արամադրած վիայագիրը չունեցող վարժապետք և վարժուհեք կրնան իրենց պաշտոնը շարունակել մինչև 1882 Մայիս։ իսկ անոնք որ Օրինաց հրատարակութենէն վերջ սրաշտոնի կը կոչուին՝ պէտք է կամ Օրինաց 289 ա. յօդուածին սրահանջած բննութիւնը կամ 413 րդ. յօդուածին արամադրած վիայագիրն ստանան։ եթէ ոչ՝ Օրինաց 229 րդ. յօդուածի ա. պարբերութեան արամադրութեանց համաձայն կը դատաւին։ եթէ նոյն յօդուածի՝ Բ. պարբերութեան արամադրութեան ներքեւ չեն իշուր :

**416.** Մինչև 1884 Մայիս Արտօնագիր խնդրով սրաշտոնից համար երկու տելիան անգամ մը բննութիւնք տեղի կունենան, որոց օրն ու աեղը Կեղրոնական կամ Գուտառական Կըթական Տեսչութիւնը կը հրատարակէ։ բայց ՚ի սրահանջել հարկին որսարաց կազմի բննութիւնք ալ կրնան ըլլու ։

**417.** Ներկայ Օրէնքը հրատարակուած օրէն նաև խորդ Ռւսումնական Խորհրդոց հրատարակած ծրագիրները, կանոնագիրներն ու հրահանգները կը ջնջուին՝ եթէ Օրինաց 412 ա. յօդուածին տրամադրութեանցներքեւ չեն լցնար:

**418.** Ռւսումնական Խորհրդներէն վաւերացած դասագրքերը վաւերական կը համարուին միայն մինչ ՚ի սպառումն այն օրինակաց, որոց տապագրութիւնը արդէն եղած է ներկայ Օրինաց հրատարակութեան միջոցին:

**419. ա.** Ներկայ Օրէնքը Երկու տարին անգամ յը վերաբնութեան կենթարկուի ըստ առաջարկութեան կեղծական Կրթական Տեխնութեան և որոշման Ազգ. ժողովոյ:

Բ. Եթէ վերաբնութիւնը տեղի ունենայ, Օրէնքը նոր տապագրութեամբ կը հրատարակուի հանդերձ բարեփոխեալ կամ յաւելադաց առանձին ցուցակու:

**420.** Ազգային ժողովը Պատրիարքին և Վարչական Խորհրդին կը յանձնէ ներկայ Օրինաց գործադրութիւնը:

## ՅԱՆԿ ՆՏԻԹՈՑ

<b>ՄՍ.ՄՆ Ա.Ռ.Ս.ԶԻՒՆ.</b> — Թաղային Կրթական հաստատութիւնք	
ԳԼՈՒԽ Ա.Ռ.ԶԻՒՆ. —	
Ծաղկոց	1—20
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴԻ. — Թաղային դպրոցք	
Ա. — Կազմութիւն դպրոցական թաղի	21—24
Բ. — Պարտիք եւ իրաւունք թաղին	
1. Պայմանք հիմնարկութեան դպրոցի, դպրոցաեղիք եւ այլ պիտոյք	25—35
2. Դրամական միջոցք	36—48
Գ. — Պարտիք եւ իրաւունք ծնողաց եւ աշակերտք	
1. Պարտիք եւ իրաւունք ծնողաց	49—57
2. Աշակերտք.	58—64
Դ. — Ներքին կազմութիւն դպրոցաց	
1. Աստիճանք եւ նպաաակ, ուսմանց ծրագիրք եւ միջոցք	65—74
2. Կազմութիւն կարգաց	75—79
3. Երկսեռ դպրոցք	80 և 81
4. Ժամանակ ուսման եւ պարապոյ	82—86
5. Քննութիւնք, կարգափոխութիւնք, վիճակացոյցք, վկայագիր եւ հանդէս	87—90
6. Օրագրութիւն եւ ցուցակք	91
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴԻ. —	
Ա. — Կրկնիչ վարժարանք	92—101
Բ. — Երեկոյեան եւ Կիրակնօրեայ վարժարանք	102—115
ԳԼՈՒԽ ԶՈՐԻՈՐԴԻ. — Թաղային ուսումնարանք	
Ա. — Իրաւունք եւ պարտիք թաղին	
1. Պայմանք հիմնարկութեան, չէնք եւ այլ պիտոյք	116—120
2. Դրամական միջոցք	121 և 122
Բ. — Ներքին կազմութիւն ուսումնարանաց	
1. Աստիճանք եւ նպաաակք, ուսմանց ծրագիրք եւ միջոցք	123—139
2. Կազմութիւն կարգաց	140—144
3. Աշակերտք եւ աշակերտուհիք	142—154
4. Քննութիւնք եւ ժամանակ ուսման եւ պարապոյ	152—155
ՄՍ.ՄՆ ԵՐԿՐՈՐԴԻ. — Կեդրոնական եւ Գաւառական ուսումնարանք	
Ա. — Կեդրոնական ուսումնարան	156—158
Բ. — Գաւառական ուսումնարան	159—163

**ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴԻ :** — Կրթական հաստատութիւնք՝ որոց կազմութիւնը ներկայ Օրէնքով չէ սահմանուած :

Ա. — Վանական միաբանութեանց վարժարանք . . . . .	464—468
Բ. — Բարեգործական կրթական հաստատութիւնք . . . . .	469—473
Գ. — Մամնաւոր վարժարանք . . . . .	474—477

**ՄԱՍՆ ԶՈՐՅՈՐԴԻ :** — Կրթական պաշտօնեայք

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ :

Ա. — Դպրոցաց պաշտօնեայք :	
1. Տեսուշ-վարժապետք կամ վարժուհիք . . . . .	478—485
2. Վարժապետք եւ վարժուհիք . . . . .	486—492
3. Օդնական-վարժապետք կամ վարժուհիք . . . . .	493—497
4. Օդնական-աշակերտք կամ աշակերտուհիք . . . . .	498 և 499

Բ. — Ուսումնարանաց պաշտօնեայք	
1. Տեսուչ եւ Փոխ-Տեսուչ . . . . .	200—209
2. Ուսուցիչք կամ ուսուցչուհիք . . . . .	210—212
3. Ուսուցչաց Խորհուրդ . . . . .	213—215
4. Օդնական-ուսուցիչք կամ ուսուցչուհիք . . . . .	216 և 217

Գ. — Ընդհանուր իրաւունք եւ պարտիք պաշտօնէից . . . . .	218—237
---	---------

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴԻ :	— Պատրաստութիւն կրթական պաշտօնէից
Ա. — Պատրաստութիւն դպրոցաց մէջ . . . . .	238—246
Բ. — Պատրաստութիւն մանկավարժական դասարանաց մէջ . . . . .	247—266
Գ. — Պատրաստութիւն բարձոագոյն ուսումնարանաց մէջ . . . . .	267—270

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴԻ :	— Ինքնակրթութիւն կամ կատարելագործութիւն կրթական պաշտօնէից :
-----------------	---

Ա. — Մրցում . . . . .	274 և 272
Բ. — Մանկավարժական դասախոսութիւնք . . . . .	273—276
Գ. — Վարժապետական ժողովք	
1. Կրթական շրջանակաց վարժապետական ժողովք . . . . .	277—282
2. Գաւառական վարժապետական ժողովք . . . . .	283—286
3. Ընդհանուր վարժապետական ժողով . . . . .	287 և 288

ԳԼՈՒԽ ԶՈՐՅՈՐԴԻ :	— Քննութիւնք եւ Արտօնագիրք
Ա. — Քննութիւնք . . . . .	289—295
Բ. — Արտօնագիրք . . . . .	296—308

**ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ :** — Կրթական իշխանութիւնք :

ԳԼՈՒԽ ՍՈԱՋԻՆ :	— Կեղրոնական կրթական Տեսչութիւն
1. Ազգային Վարչութեան կրթական Խորհրդական . . . . .	309—311
2. Ընդհանուր Տնօրէն Ազգային վարժարանաց . . . . .	312—314
3. Պաշտօն եւ յարաբերութիւնք . . . . .	315—323
4. Պարտիք . . . . .	324 և 325
5. Ազգ. կրթութեան ընդհանուր պիտոյից հաստատուն եկամուտ եւ արկղ	326—330
6. Դիւան . . . . .	331

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴԻ :	— Գաւառական կրթական Տեսչութիւնք
1. Գաւառական կրթական Տեսչուչ . . . . .	332—336

2. Տնօրէն վարժարանաց գաւառին . . . . .	337—340
3. Պաշտօն, պարտիք եւ յարաբերութիւնք . . . . .	341—350
4. Հաստատուն եկամուտ եւ արկղ . . . . .	351—356
5. Դիւան . . . . .	357

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴԻ :	— Այցելու տեսուչք
1. Կազմութիւն կրթական շրջանակաց . . . . .	358 և 359
2. Ընտրութիւն Այցելու Տեսչաց . . . . .	360—364
3. Պաշտօն, պարտիք եւ յարաբերութիւնք . . . . .	365—372
3. Դիւան . . . . .	373

ԳԼՈՒԽ ԶՈՐՅՈՐԴԻ :	— Կրթական հոգաբարձութիւնք
Ա. — Դպրոցաց Հոգաբարձուք	
1. Հոգաբարձուք . . . . .	374—380
2. Փոխ-Հոգաբարձուք . . . . .	381 և 382
3. Օդնական-Հոգաբարձուք եւ Խնամակալուհիք . . . . .	383—385
4. Գործակալք . . . . .	386
5. Պաշտօն, պարտիք եւ յարաբերութիւնք . . . . .	387—402
6. Դիւան . . . . .	403

Բ. — Ուսումնարանաց Հոգաբարձութիւնք . . . . .	404—406
ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴԻ :	
Առժամանակեայ տրամադրութիւնք . . . . .	407—420



